

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
2013-2023

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Գ 602

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Մ. Ֆելեքյան
Կազմեցին՝ Ս. Տիոյան, Ն. Խաչիբաբյան

Գիտական հոդվածների ժողովածու (2013-2023).-

Գ 602

Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023.-125 էջ:

Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստի-
տուտի արևմտահայերենի բաժնի ստեղծման տասնամյակին և պարու-
նակում է տարբեր տարիներին բաժնում աշխատած այն գիտաշխատող-
ների հոդվածները, որոնք մատնանշում են արևմտահայերենի ուսումնա-
սիրության ոլորտները: Դրանք վերաբերում են գրական լեզվի այս
դրսևորման ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր խնդիրներին և
ներկայացնում են լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբա-
նության, այլև շարահյուսության ոլորտներում կատարված հետազոտու-
թյունների արդյունքները:

Ժողովածուն կարող է օգտակար լինել արևմտահայերենի հարցե-
րով զբաղվող և դրանցով հետաքրքրվողներին, ինչպես հայրենիքում, այն-
պես էլ դրա սահմաններից դուրս: Հոդվածները ներկայացվում են ինչպես
արևմտահայերենի, այնպես էլ արևելահայերենի ուղղագրությամբ և կա-
րող են օգտագործվել գիտական բնույթի տարբեր աշխատանքներում,
ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9305-9-6

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2023

ԱՌԱՋԱԲԱՆ

Արդեն տասը տարի է, ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում (նախկին Սփյուռքի նախարարության գործուն օժանդակությամբ ու մասնակցությամբ) 2013թ. բացվեց Արևմտահայերենի բաժինը՝ ԳԱԱ թղթ. անդամ, բազմավաստակ գիտնական Արտեմ Սարգսյանի ղեկավարությամբ: Բաժինը գործում է երկու մասնաճյուղերով՝ հայաստանյան, որն ունի ութ անդամ (չորսը սիրիահայ) և լուսանջելեյան. վերջինս ունի 20-ից ավելի անդամներ՝ ընդգրկող բոլոր մայրցամաքներում գործող գաղթօջախների ներկայացուցիչներին՝ Միացյալ Նահանգներ, Կանադա, Ֆրանսիա, Թուրքիա, Լիբանան, Հունաստան, Սիրիա:

Բաժինը գործել ու գործում է մեր հայրենակից սիրիահայերի բեղուն մասնակցությամբ, որոնք իրենց հիմնական աշխատանքները համատեղում են այս բաժնում գիտական գործունեությամբ: Անցած տարիներին թեև նրանց կազմը փոփոխվել է (երկուսը՝ Լ. Նազարյանն ու Ս. Միշոյանը ընտանեկան զանազան հանգամանքների բերումով տեղափոխվեցին Միացյալ Նահանգներ, իսկ Հ. Չոլաքյանը խիստ ծանրաբեռնվածության պատճառով այլևս մեզ մոտ չի աշխատում), սակայն դրանից արևմտահայերենի գիտական ուսումնասիրությունը չի կորցրել իր արդիականությունը:

Վերջապես արևմտահայերենը՝ Հայաստանի պետական լեզվի՝ գրական հայերենի դրսևորումներից մեկը, դարձավ ակադեմիական ուսումնասիրության առարկա. այդ լեզվով գիտաժողովներում կարդացվում են գիտական զեկուցումներ, գրվում և հրատարակվում են հոդվածներ ու մենագրություններ (անցած տարիների ընթացքում մեկ տասնյակից ավելի), պաշտպանվում են ատենախոսություններ, կազմակերպվում առցանց և առկա գիտաժո-

դովներ, գիտական քննարկումներ, հանդիպումներ, խորհրդակցություններ: Լույս է տեսել «Արևմտահայերենի հարցեր» գիտական ուսումնասիրությունների ժողովածուն (առցանց), իսկ 2023 թ.-ին կընծայվի երկրորդ ժողովածուն. դարձյալ առցանց տարբերակով հրատարակվել է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» Ա գիրքը, իսկ ընթացիկ տարում՝ 2023-ին, պատրաստ կլինի «Նոր բառերի» Բ գիրքը: Մրանք ապացույցն են արևմտահայերենի՝ մայր Հայրենիքում լիիրավ և լիարժեք ու բազմակողմանի ուսումնասիրության, այլև շարունակական զարգացման:

Սույն Հատընտիրի նպատակն է ներկայացնել բաժնի գիտական պրպտումների ընդհանուր պատկերը. հողվածները գրական հայերենի երկու դրսևորումներով են՝ արևմտահայերեն և արևելահայերեն՝ սակայն բոլորն էլ միտված են արևմտահայերենի քերականական իրողությունները ներկայացնելուն (որպես դրա ապացույց՝ ժողովածուում ներառել ենք մեր բաժնի լավագույն բարեկամ, Մարսելի համալսարանի նախկին դասախոս, արևմտահայերենի նվիրյալ պաշտպան ու ջատագով, ֆրանսահայ Ռոբեր Տեր Մերկերեանի հողվածը):

Ս. Տիոյան

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ***

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ս. ՏԻՈՅԱՆ

Մի շարք տերմինահամակարգերի ուսումնասիրությունից (կիրառական տնտեսագիտություն, իրավաբանություն, համակարգչային) պարզ դարձավ, որ հայերենը հավատարիմ է դարեր առաջ որդեգրած իր ազգային սկզբունքին. այն է՝ պատճենել, փոխառել օտար տերմինները՝ ունենալով բառակազմական կադապարների ճկուն համակարգ և տերմինաշինության լայն հնարավորություններ:

Այդ եղանակով շարունակաբար հարստացնելով բառապաշարը՝ գրական հայերենն ապահովում է գիտական, տեխնիկական, մշակութային ամենատարբեր ոլորտների զարգացումը:

Հատկապես վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ տեղի է ունենում ինֆորմացիոն – տեխնոլոգիական համակարգերի աննախադեպ առաջընթաց, նորաստեղծ ու նորիմաստ հարյուր հազարավոր բառեր են ներթափանցում գրական հայերեն (թե՛ արևմտահայերեն և թե՛ արևելահայերեն): Այդ նորակազմությունների հարցում արևելահայերենը համեմատաբար ազատ է, իսկ արևմտահայերենն անհամեմատ բժախնդիր, ինչն ունի իր հիմնավոր պատճառները. վերջինս առ այսօր իր մտավորականության, գրական մշակների, մամուլի և ուսումնական հաստատություններում գործող անխոնջ անհատների ջանքերի

* Լույս է տեսել «Ջահուկյանական ընթերցումներ» Միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, ժողովածուում, Ե., «Աստղիկ», 2014, էջ 175-178:

շնորհիվ ջանում է պահպանել իր ինքնատիպությունը և զերծ մնալ օտարամուտ ազդեցություններից: Ուստի ցանկացած փոխառության դիմաց դնում է բնիկ հայկական համարժեքը: ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Արևմտահայերենի բաժնի արտասահմանյան մասնաճյուղի անդամ Նշան Որբերյանն այս առիթով ունի այն տեսակետը, թե որքան անընդունելի է ծայրահեղ մաքրամոլությունը, նույնքան դատապարտելի է լեզվական անհիմն օտարամոլությունը և միջազգային տարածում ունեցող օտար բառերի հայերեն համաժեքները պետք է միասնական լինեն և՛ արևելահայի, և՛ արևմտահայի համար, սակայն առ այսօր կան օտար բառերի՝ առևելահայերենում դեռ չվավերացված համարժեքներ (*կալորիա* - ջերմուժ, *վիտամին* - կենսանյութ, *ռեկորդ* - մրցանիշ, *ֆեյսբուք* - դիմատետր, *մեսիջ* - ուղերձ կամ պատգամ, *ռոտացիա* - հերթագայում, *պարադոքս* - հարակարծություն նաև հարբմբոնում և այլն), որոնք միայն և առավելապես սփյուռքում են գործածվում: Այսինքն, արևմտահայերենում օտար տերմիններ սկզբունքորեն չեն կիրառվում:

Նա ևս կարևորում է, ըստ հնարավորին, տերմինը մեկ բառեզրով արտահայտելը և արդեն վավերացված թարգմանությունների մեջ փոփոխություններ է առաջարկում (շեղագիր թավատառը իրենն է՝ Ս. Տ.):

Գլաուկոմա - ներերակային ճնշում = *ակնաճնշում*,

Տրախոմա - կոպի հատիկաբորբ = *կոպաբորբ*,
 Լեյկոմիա - եղջերունու սպիաբիծ = *եղջերաբիծ*:

«Մինչդեռ լեզուն,- գրում է Ռոբեր Տեր Մեզբերյանը,- չի կարող խուսափել օտար ազդեցություններից կամ փոխառություններից,

այն չի կարող մեկուսանալ, կղզիանալ. ի վերջո, անխառն լեզու գոյություն չունի»¹:

Ինչպես վկայեց վերջերս (2014թվ. ապրիլին) Վենետիկից Երևան ժամանած հայտնի հայագետ Լևոն Զեքյանը (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի Արևմտահայերենի բաժնի աշխատակիցների և ԳԱ նախագահության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ), իտալերենի նման հզոր լեզուն անգամ ներկայումս իր լեզվակիրների խոսքում ներկայանում է տասից հինգը օտար բառերով (նույնը՝ ֆրանսերենի դեպքում):

Խոսքն այստեղ ծայրահեղությունների մեջ չընկնելն է: Հայտնի է, որ հասկացություն – տերմին հարացույցի հենց առաջին դիտարկման ժամանակ հիմք է ընդունվում մեկ գիտական հասկացությանը մեկ բառ (բառակազմություն) սկզբունքը: Իրականում, ինչպես վերը նշեցինք, գրեթե անհնար է գտնել որևէ տերմինահամակարգ, որ հասած լինի այդ սկզբունքի հարյուր տոկոսանոց արդյունավետ գործադրմանը:

Փոխառությունների և պատճենման միջոցով հասկացությունները մայրենի լեզվում ներկայացնելու եղանակին անդրադառնալիս և, մանավանդ, ծայրահեղությունների մեջ ընկնելու վտանգից խուսափելու նպատակով պետք է նշենք, որ անհրաժեշտ է տարբերել **բուն տերմինային** միավորները (զուտ տերմինները), որոնք որոշակի հասկացությունների լեզվական միավորներ են (*հայց, հակընդդեմ հայց, ներում, համաներում, բեռնում, ներբեռնում, գերբեռնում, շահառու* և այլն) **անվանակարգային** (նոմենկլատուրային) բառերից (որևէ տերմինային համակարգում մանր մասերի անվանումները՝ *ֆայլ, կող, չիփ, բիթ* և այլն): Նման

¹ **Ռոբերտ** Տեր Մերգերյան, Ուղեցույց Ա, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 1993, էջ 4:

տարբերակման դեպքում ավելի կհեշտանա հայերենում լեզվի ներքին միջոցներով, լեզվի նախորդ փուլերից վերցրած բառերի վերախմաստավորմամբ տերմինային համակարգ ստեղծելը:

Երկրորդ խնդիրը՝ միտումները հստակեցնելու ճանապարհին տերմինային զուգաձևություններից ձերբազատվելու հարցն է: Երբ տերմինները թարգմանաբար են անցնում հայերենին (արևելահայերենի դեպքում՝ անգլերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն՝ միջնորդաբար, իսկ արևմտահայերենի դեպքում՝ այսօր արդեն անգլերենից, ֆրանսերենից ու գերմաներենից հայերեն՝ փոխառության անմիջական ճանապարհով), զուգաձևության աղբյուրը հիմնականում փոխատու լեզուներն են. օրինակ՝

control բառը ռուսերենում ունի հետևյալ երեք համարժեքները՝

управление, регулирование, контролирование

2. **контроль**, ուստի և հայերենն էլ մեկ բառի դիմաց երեքն է կառուցում՝

1. կառավարում, կարգավորում 2. հսկում

control

1. управлять, регулировать 2. контролировать

1. կառավարել, կարգավորել 2. հսկել:

Արևմտահայերենը նման դեպքերում անատարկելորեն բնիկ բառ է ընտրում՝ և այս դեպքում հարցն այն է, թե արդյո՞ք հայերեն հոմանիշը ծածկում է՝ տվյալ տերմինի ամբողջական ոլորտը (**ֆիզիոլոգիա** տերմինը թարգմանելիս արևելահայերենում գերապատվությունը տրվել է **«ֆիզիոլոգիային»**, իսկ արևմտահայերենում՝ **«բնախոսությանը»**, որից էլ մենք երբեմն օգտվում ենք, մինչդեռ, մեր կարծիքով, ոչ բոլոր դեպքերում է այն համարժեքորեն փոխարինում **«ֆիզիոլոգիային»**): Նույն շարքում է հանրահայտ **«համակար-**

գիչը», որը, իր ժամանակին մերժված լինելով անգամ Տերմինաբանական կոմիտեի կողմից և «չծածկելով» կոմայուտերի հասկացական ոլորտը, լայնորեն կիրառվում է երկու գրականներում էլ. ընդ որում, մեզանում լայնորեն գործածվող թարգմանական բառարաններից մեկում² այդ բառի բառակազմական բնում բոլոր կազմությունները **համակարգչ-ով են՝ թվային համակարգիչ, խոշոր համակարգիչ, անհատական համակարգիչ, միահարթակ համակարգիչ, միաչիփ համակարգիչ** և այլն՝ ընդամենը 60 բառային միավորներ, իսկ մյուս բառարանում³ միայն **կոմայուտեր-ով՝ կոմայուտերային հանցագործություն, կոմայուտերային գիտություններ** և այլն:

Ներկայում միտում է նկատվում փոխառության՝ արևմտահայերենից արևելահայերեն ուղին, ըստ որում՝ մարամասնորեն ճշգրտված տարբերակներով. օրինակ, Ն. Որբերյանը **ռեզլամենտ - աշխատակարգ** եզրի համար առաջարկում է՝

1. **վարույթակարգ** (ժողովի),

2. **վարվելակարգ** (դիվանագիտական պահանջվող կարգ)
տարբերակումը, որը մեր կարծիքով, խիստ անհրաժեշտ է:

Համենայնդեպս մեր կողմից ուսումնասիրված տերմինահամակարգերում այդ միտումը պարզորեն գծագրվում է, և դա սկսում է փոխադարձ դառնալ:

Այդ գործընթացին մեծապես նպաստեցին Արևմտահայ աշխարհաբարի լեզվաբանական խորհրդի կողմից հրատարակված

² Խ. Գրիգորյան, Անգլերեն – հայերեն համակարգչային եզրերի բառարան, Եր., 2004, էջ 73 – 75:

³ Է. Ա. Ղազարյան, Ա. Ա. Ստեփանյան, Ինֆորմատիկա, Բնտերնետ, Անգլերեն – ռուսերեն – հայերեն բացատրական բառարան, Եր., 2000, էջ 34:

չորս «Ուղեցույցները»⁴, որոնք օրենքի ուժ չունենալով և պարտադրելու հավակնություններ չունենալով հանդերձ, ընդգրկում են՝

ա) լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և երկու գրականներում էլ շրջանառության մեջ գտնվող տերմիններ՝ **արտոնել, գերտերություն, գաղտնագերծել, ծածկաբառ, հրամանաշար, ստեղնաշար, սակարկել, սեղմագիր, իրազեկիչ, նյաստառու, վիճահարույց, չարաշահում** և այլն,

բ) նորագույն տերմիններ, կազմված և առաջարկված նշված կոմիտեի կողմից, որոնք արտահայտում են նորահայտ անհրաժեշտ գաղափարներ, և որոնք կարող են ընդունվել կամ մերժվել լեզուն կիրառողների կողմից՝ **նմանակ** (analog), **սստեղնատպիչ, հեռապատճեն, միջերեսակ** (interface), **ցուցան, թվանշագրիչ** (scanner), **ընտրանք** և այլն:

Արևմտահայերենով կազմված այս ցանկերը արևելահայերենի բառապաշարի հարստացման առաջին և հիմնական աղբյուրն են, քանի որ՝

ա) նույն լեզվանյութից են կերտված,

բ) լեզվամտածողական միևնույն սկզբունքներով են աշխատում,

գ) բառակազմության «խնայողական» միևնույն հայեցակետերին են հարազատ մնում:

Երբ որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերեն բառ է անհրաժեշտ լինում, և դա արդեն կա արևմտահայերենում, այլևս չենք դիմում նորակազմություններին, այլ գործածում ենք արևմտահայերեն բառը⁵: Ասվածի հաստատումն են

⁴Ուղեցույց Ա, Մարսել, 1993, Ուղեցույց Բ, Մարսել, 1995, Ուղեցույց Գ, Մարսել, 1998, Ուղեցույց Դ, Մարսել, 2002:

⁵ Ուղեցույց Գ, էջ 64:

խոսնակ, կարգախոս, աղաճ, անհարեկիչ, փաթեթ (օրինագծի փաթեթ), ավագանի, համայնք, հանրահավաք, մարդասիրական միջանցք, ազատ ձեռներեց. առանձնագրույց, բացախոս, բռնարարք և այլն, և այլն՝ հազարավոր բառերը:

Արևմտահայերենը նույնպես սկսել է անհրաժեշտ եզրերը վերցնել արևելահայերենից: Այս միտքը հաստատում է նաև Անդրանիկ վրդ. Կոսանեանը. «մեր (արևմտահայերենի բառարան՝ Ս.Տ.) Բառգիրքին» մաս կը կազմեն նաև Հայաստանեն ծնունդ առած կարգ մը դիպուկ բառեր, ինչպէս՝ *բեռնաթափել, արտահերթ (նիստ), հավատարմատար, փոխշահավետ, մրցունակ, տարադրամ* եւն՝⁶:

Լեզվական այսպիսի փոխներթափանցումները դիտվում են որպէս լեզվական փոխհարստացում, փոխհամալրում և լեզվակիրների փոխըմբռնում, ուստի և տերմինաբանության զարգացման յուրահատուկ միտում:

Բացի այդ, արևմտահայերենի զարգացման և կանոնարկման գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ գործի Արևմտահայերենի Եզրաբանական Խորհուրդը՝ Հայերենի Բարձրագույն Խորհրդի կազմում: Այդպիսով կապահովվի մեր երկու գրական լեզուների մերձեցումը բառապաշարի ոլորտում, ինչն իր հերթին տերմինաբանության զարգացման ուղեկիշ կդառնա:

Artem Sargsyan, Susanna Tioyan - Tends in the Development of Terminology in the Modern Armenian Language. - In the update period of development of the language the problems of systemizing the terminology became very urgent.

⁶ Անդրանիկ վրդ. Կոսանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պեյրուք, 1998, էջ 8:

The utmost attitude of both branches of literal Armenian language towards this problems is being discussed in the article. Both branches use wide opportunity of termin building in Armenian language.

The process of the translation of borrowed terms is direct in western branch and indirect in eastern branch. Term translation process is greatly based on eastern branch which makes the process of two branches becoming closer to each other easier.

1. ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ռ. ԹՈՒՄԱԽՅԱՆ

Բառային շեշտի տեսանկյունից արևմտահայերենը և արևելահայերենը զգալիորեն չեն տարբերվում. պահպանում են բառի ձևավորման իրենց առանձնահատկությունը: Հայերենի երկու տարբերակներում էլ միավանկ բառերը չեն շեշտվում, կամ, այդ հատկանիշով պահպանում են չեզոքություն: Սա, անշուշտ, չի նշանակում, որ հնչաշղթայում դրանք չեն կարող հանդես գալ ներհատույթային հատկանիշների իրենց դրսևորումներով:

Փոխառությունների դեպքում, հատկապես արտաբերական մակարդակում, արևմտահայերեն կրողների խոսքում զգալի է փոխատու լեզվի հնչական ձևավորմանը բնորոշ արտասանությունը¹: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ փոխառությունների տարբերակային ձևերի առկայությունն ավելի բնորոշ է արևմտահայերենին, որտեղ ի հայտ են գալիս համայնքային տարբերակվածություններ՝ ըստ բնակության տեղաբաշխման՝ մերձավոր արևելյան, եվրոպական, ամերիկյան:

Թեև արևմտահայերենում որոշ հեղինակներ, անդրադառնալով շեշտի գործածությանը, այն միտքն են հայտնում, թե ըստ ուժգնության հատկանիշի շեշտը կարող է դիտարկվել 3 տարբեր վիճակներով՝ ստորին կամ թույլ, միջին կամ սովորական և վերին կամ սուր, նման դասակարգումը չի բնորոշում հայերենի բառային

* Լույս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» մենագրության մեջ, Ե., 2015, «Ասողիկ», էջ 19-24:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Թոմասիայան Ռ., Շեշտը հայերենի փոխառյալ բառերում, Արևմտահայերենի հարցեր (գիտական ուսումնասիրություններ), Առցանց ժաղովածու, Ե., 2018, էջ 17-21:

շեշտը, այլ ավելի շատ հատուկ է հնչաշղթայում բառերի արտասանության տատանումներին, որն առավելապես վերաբերում է խոսքի հնչերանգային դրսևորմանը:

Բառային մակարդակում, երկու գրականներում էլ, շեշտակիր է բառավերջի վանկը, մինչդեռ բազմավանկ բառերում նկատելի է նաև բառասկզբի վանկի համեմատաբար ընդգծուն արտաբերություն, որն առանձնացվում է որպես երկրորդական շեշտ:

Հնչաշղթայում շարույթի մեջ հիմնական շեշտը սովորաբար կրում է վերջին բառը, մյուս բառերի շեշտերը կարող են դիտարկվել որպես երկրորդական:

2. Միրիայի հայերենի հնչյունական համակարգը

Արևմտահայերենը զարգացման իր ուղին անցել է հիմնականում Մեծ Եղեռնից հետո Պոլսի, Լիբանանի (ներառյալ Միրիա), Ֆրանսիայի և ԱՄՆ-ի գաղթօջախներում:

Ընդհանուր առմամբ արևմտահայերենն ունի գրական կանոնարկված համակարգ, որն արտահայտվում է այդ գաղթօջախներում գրեթե նույնական կրթական համակարգով:

Գրական արևմտահայերենը, այսպիսով, ունի ընդհանրական բնույթ, և այն չի առանձնանում այս կամ այն երկրում:

Ուսումնասիրության բնույթը սիրիական հայ համայնքի արտասանական - հնչյունական առանձնահատկություններն են, որոնք էապես չեն տարբերվում լիբանանյանից:

Լեզվակիրները, այնուամենայնիվ, նշում են, որ առկա լեզվական որոշակի տարբերությունները պայմանավորված են արաբերենի ազդեցությամբ, մասամբ էլ տարբեր բարբառների առկայությամբ:

Միրիահայ գաղութում բարբառակիրները համեմատաբար հոծ խմբերով են ապրում և նրանց հատուկ ու հարազատ են սեփական բարբառների գործածությունը (Բեյլանի, Քեսաբի, Հաճընի և այլն): Գրական արևմտահայերենը Միրիայում և Լիբանանում առանձնակի տարբերություններ չի դրսևորում, քանի որ նրանց կրթական համակարգերը գրեթե նույնական են (դասագրքերը, մամուլի լեզուն, համայնքային տարբեր խմբավորումների ու միջոցառումների լեզուն և այլն):

Գրական արևմտահայերենի պարզ ձայնավորների կողքին առանձին ուսումնասիրողներ դիտարկել են նաև քմային ու ձայնավորի գոյությունը, որով համակարգում առանձնանում են երկու կարգի հնչույթներ:

Դեռևս Մ. Աբեղյանը **ի** երկբարբառի արտասանությունը բարբառներում մոտեցնում էր ֆրանսերենի ու գերմաներենի քմային **ու** ձայնավորի արտաբերությանը²:

Հետագայում այսպիսի հնչումը վերագրել են գրական արևմտահայերենին: **Ի**-ի նման արտաբերությունը դիտարկում են բառի տարբեր դիրքերում՝ մի կողմից որպես երկհնչյուն **յու**, մյուս դեպքում որպես քմային **ու** ձայնավոր: Բիարկե, արևմտահայերենի բազմաթիվ դասագրքերում **ի**->**յու** արտաբերությունը որպես հաստատուն իրողություն է ներկայացվել (ինչպես օրինակ՝ **Աբրահամյան Ս., Վերդեան Բ., Քոսեան Վ.,** Հայերեն լեզուի դասագիրք, Ե., 1966, **Դորա Սաքայան,** Western Armenian for English-speaking World, Mountreal, 2000, էջ 124), սակայն ավանդաբար այն շարունակվել է դիտվել որոշ վերապահությամբ **ու**-ի տարբերակ կամ երկբարբառ³:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 95-96:

³ Ռ. Սաքապետյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 14:

Մեր դիտարկումով նման մոտեցումը պայմանավորված է առանձին անհատների օտարախոս արտաբերությամբ, չունի համակարգային բնույթ և լինելով դիրքային ու փոփոխակալին, այնուամենայնիվ, չի դիտարկվում որպես հնչույթային հակադրություն, չունի ընդհանրական բնույթ:

Նման մոտեցմամբ պետք է տրամաբանական լիներ նաև մյուս ձայնավորների քմայնացումը, այսինքն այդ երևույթը պիտի տարածվեր նաև օ-ի, ա-ի, է-ի վրա: Պարզելու համար, թե գրաբարյան **ի** երկբարբառին ի՞նչ է փոխարինել, անհրաժեշտություն առաջացավ այդ երևույթը դիտարկել փորձառական եղանակով:

Հայտնի է, որ գրաբարյան երկբարբառները ժամանակակից հայերենում պարզեցվել են՝ փոխարինվելով **յ + ձայնավոր** կապակցությամբ՝ **յա, յո, յու** և այլն: Այսինքն, **գիւղ - գյուղ, արդեոք - արդյոք, մատեան-մատյան** և այլն: Այս իրողությունը հատուկ է նաև արևմտահայերենին: Եթե բառակզբի **իւր** կապակցությունը հնչվում է **յու**, ապա **իւր** և **ուր** բառերում հնչույթային հակադրությունը (**յ-0**) առկայությամբ /բացակայությամբ է արտահայտվում. օրինակ՝ **գայլ** և **գալ** (արևմտահայերենում՝ **քայլ** և **քալ**) հակադրության **յ-ի** առկայության /բացակայության է հանգում:

Փորձառական ուսումնասիրությունը (սիրիահայ լեզվակիրների արտասանական վերլուծությունը) թույլ է տալիս փաստել, որ հատկապես նրանց խոսքում **յու** կապակցությունն ունի իր ֆիզիկական արտահայտությունը, որտեղ քմային հատկանիշը չի տարածվում ձայնավորի ողջ սպեկտորի վրա, այլ ունի իր ինքնուրույն պատկերը:

Այդ պատկերում կարելի է չափել **յ-ի** տևողությունը, որը մոտ է պայթական բաղաձայնի երկարությանը:

Ձայնավորական համակարգում պետք է նկատի ունենալ այն, որ կասկածելի է, ինչպես վերը նկատեցինք, նաև մեկ այլ քմային ձայնավորի վերագրումը արևմտահայերենին՝ **Էօ**ժեն որպես մեկ ձայնավոր⁴։ ընդ որում այդ երևույթը բացատրելով օտար բառերի փոխառությամբ (մեր պարագայում՝ ֆրանսերենի)։ Սա էլ, ըստ տրամաբանության, պետք է տարածվեր մյուս ձայնավորների վրա, ինչը արևմտահայերենին հատուկ չէ։ Այսպիսով գրական հայերենի երկու տարբերակներում էլ գործում է ձայնավորական նույն համակարգը. այն է՝ **ա, օ, է, ի, ու, ը**։

Արտաբերական նման առանձնահատկությունը հատկապես տարածված է օտար անձանց խոսքում, փոխառյալ բառերի գործածության ժամանակ երբեմն դրսևորում են փոխատու լեզվի արտաբերական ընդօրինակումներ։ Այսպես, օրինակ, ռուսերեն տիրապետողների խոսքում Մոսկվա բառի փոխարեն Մասկվա բառի տարբերակի գործածությունը։ Հայերեն գրական նորմի տեսակետից նման արտաբերությունները կանոնական չեն և մերժելի են. նույնը ունենք անգլախոսների դեպքում՝ Այգնհաուրը՝ էյգենհաուերի փոխարեն, կամ ռումինահայերի կողմից արևելահայերենում տարածված Բուխարեստ անվան փոխարեն Պուքրեշ, ֆրանսահայերը ասում են Պադի՝ Փարիզի փոխարեն և այլն։

Միշտ չէ, որ փոխառյալ բառերի հարազատ հնչարտաբերությունը խրախուսելի է, քանի որ գործածության մեջ եղող բառերը ունեն ավանդական դառնալու միտում և պայմանավորված են մեծամասամբ նրանց գրային տառադարձությամբ։

Ուշագրավ է նաև այն, որ բաղաձայնական համակարգում արդեն դիտարկված եռաստիճանի անցումը երկաստիճանին նույնպես երբեմն կասկածներ է առաջացնում։ Այնուամենայնիվ,

⁴ **Մ.Մկրտիչեան**, Քերականութեան դասեր, Բ գիրք, տպ. Արևելք, Հալեպ, 1962, էջ 9։

երկաստիճանն ունի եռաստիճանի հնչական տարբերակվածություն:

Բաղաձայնական համակարգում լեզվակիրները նշում են **բ-ռ** հակադրության բացակայություն. իրոք, սրանց տարբերակումը հնչույթային չէ և հաճախ, ինչպես իրավացիորեն նշում են ուսումնասիրողները (Արտեմ Սարգսյան, Ռուբեն Մաքապետոյան), **Բաֆֆին** հնչում է ն՝ **Բաֆֆի**, և՝ **Ռաֆֆի**⁵:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ թեև հնչույթային հակադրություն չկա և խոսքում գերազանցապես գործածվում է **բ** ձայնորդը, այնուամենայնիվ կան բառեր, որոնցում մեծամասամբ հանդես է գալիս համեմատաբար կոշտ հնչույթը, ու այն չունի որոշակի բաշխվածություն, ուստի չի կարելի դիտարկել որպես հնչույթային տարբերակ:

Այնուամենայնիվ առանձին բառերում **ռ-ի** հնչարտաբերությունը չի նմանվում **բ** -ին: Օրինակ՝ **ն** ձայնորդից առաջ ընդհանրական է **ռ-ի** գործածությունը՝ **գառնուկ, դառնալ, առնել** և այլն:

Միրիահայ ինֆորմանտների հնչարտասանական դրսևորումների փորձառական ուսումնասիրությունը հանգեցրեց նրան, որ այն դեպքերում, երբ կարող են առաջանալ հնչյունական համանուններ, իրենք դիմում են բառական այլ միջոցների օգնությանը. օրինակ՝ **քարն ընկավ ձորը** և **գառն (քարն) ընկավ ձորը** գույզի դեպքում օգտագործում են **գառնուկն ընկավ ձորը** տարբերակը: Անշուշտ, համանունությունը կանխվում է համատեքստում, իմաստի թելադրանքով, քանի որ դրանից դուրս նախադասությունները գոյություն չունեն:

⁵**Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985, էջ 25:
Մաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 13:

Արևմտահայերենի հետազոտողներն այն մտքին են, որ, այնուամենայնիվ, բաղաձայնական համակարգի եռաստիճանություն կարելի է նկատել նաև արևմտահայ արտասանվածքում: Դրանք թեև հնչյութային արժեք ձեռք չեն բերել, սակայն դրանց արտասանության ժամանակ նկատելի են որոշակի հնչարտասանական տարբերություններ: Վերջիններս հատկապես նկատելի խաթարումներ են առաջացնում հատուկ անունների գործածության դեպքում: Նկատելի է, որ արևմտահայերենի և արևելահայերենի գրական տարբերակների առաջացման ժամանակ արևմտահայերենը շատ ավելի է ազդվել գրավոր խոսքի առանձնահատկություններից, մինչդեռ արևելահայերենի գրական արտաբերությունը ընդհանրացման շատ ավելի լայն շրջանակներ է ընդգրկել: Իհարկե դրան նպաստել է արևելահայերենի պետական հովանավորությունը, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի առավել լայն տարածվածությունը:

Սա, թերևս, մեր երկու գրականների փոխազդեցության արդյունք է, երբեմն էլ գրավոր խոսքի ազդեցություն՝ հատկապես գրագետ մարդկանց շրջանում:

Արևմտահայերենի հնչերանգային բնորոշ տիպերի մեջ կարելի է տեսնել հատկապես դիապազոնի բարձրացում հարցական ու բացականչական նախադասությունների ձևավորման մեջ: Այն նկատելի է առավելապես ոչ եղանականիշ բառերի բացակայության դեպքում: Այս իրողությունը դեռևս լուրջ փորձառական ուսումնասիրության կարիք ունի:

Ռիթմի տեսակետից տարբերություններ կարելի է նկատել հատկապես Սիրիայի տարածքում, որտեղ այն ավելի հանդարտ է, խոսքի տեմպը (արագությունը) մեծ չէ և բառերի հնչյունափոխու-

թյան դեպքերը՝ պայմանավորված բառաշեշտի փոփոխությամբ, առանձնապես նկատելի չեն:

Այստեղ էլ, հավանաբար, իր դերն է խաղացել արաբական միջավայրը: Այսինքն, լեզվական արտասանվածքի ձևավորման վրա կարող են իրենց ազդեցությունը թողնել արտաքին գործոնները, այդ թվում՝ լեզվական միջավայրը:

ԸՆԹԱՑԱԿՑԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ԽՆԴԻՐԸ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՁ*

Յ. ՉՈՒԱՔԵԱՆ

Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի գործիական հոլովը լայնօրէն հանդէս կու գայ ձեւի պարագայ պաշտօնով (*Դերասանը Արիստոտէն աղային ծունկերուն փաթթուելով աղաչեց: Ակոռները կրճտելով հանեց բարկութեամբ ոսկի մը տուաւ: Դերասանն ալ ներում խնդրելով վար իջաւ եւ գնաց {Յակոբ Պարոնեան}*): Ասիկա գրական լեզուի շարահիւսական անփոփոխ ու մնայուն վիճակներէն մէկն է: Ասոր կողքին կը հանդիպինք նաեւ անորոշ դերբայի բացառական հոլովի նոյնպիսի գործածութեան, այսինքն՝ ձեւի պարագայի պաշտօնով, որ գրականին անցած է խօսակցական լեզուէն: Անորոշ դերբայի բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնով գործածութիւնը, դերբայի գործիական հոլովի կողքին, յատկապէս նկատելի է արեւմտահայ արուեստագէտ սերունդի գրողներու, գլխաւորաբար բանաստեղծներու գործերուն մէջ: Միամանթոյի բանաստեղծութեան մէջ երկու ձեւերով ալ արտայայտուած ձեւի պարագայի յաճախադէպ գործածութիւնը անմիջապէս նկատելի կը դառնայ.

*Ու գէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս գահավիժելէն՝
Եթէ կրնաս, մեզի հետ քալէ՛:*

Այստեղ **քալէ** ստորոգիչին հետ համընթաց, զուգահեռ, ընթացակից գործողութիւն մը կ'արտայայտէ *գահավիժելէն* բառը, որ

* Լույս է տեսել «Ջահուկյանական ընթերցումներ» Գիտական հոդվածների ժողովածու, Ե., Ասողիկ, 2016, էջ 172-179 :

գահավիժիլ անորոշ դերբայի բացառական հոլովաձեւն է: Կը պատասխանէ ի՞նչ ընելով {ընելէն} քալէ կամ ինչպէ՞ս քալէ հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

Մեր փրկութեանը համար

Ա՛յնչափ այլասիրօրէն արիւնելով անմահացաք:

Այստեղ **անմահացաք** ստորոգիչին համընթաց, զուգահեռ, ընթացակից գործողութիւն մը կ'արտայայտէ արիւնելով բառը, որ արիւնիլ անորոշ դերբայի գործիական հոլովաձեւն է ու կը պատասխանէ ի՞նչ ըլլալով անմահացաք կամ ինչպէ՞ս անմահացաք հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

Միամանթոյի բանաստեղծութեան մէջ ձեւի պարագայի պաշտօնով անորոշ դերբայի այս երկու ձեւերը հաւասարապէս հանդէս կու գան: Տանք քանի մը օրինակներ եւս.

Բացառական հոլովով.

Ու **անցաք** (...)

Ձեր ներսիդին մոլեգնարար տառապելէն:

Որպէսզի, վերջապէս, Երազին երիվարները փոթորկանման

Մեր կանքին ձեռուրներէն դիւցազնարար վարուելէն՝

Յաղթանակին կատարներուն վրայ արձանանան...:

Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի տարածելէն (...)

Տարօրինակ երջանկութիւնով մը երգեցին...:

Գործիական հոլովով.

Ձեր աստուածացումը օրհներգելովպիտի երիվարեն:

Ես երգելով կ'նուգեմ մեռնիլ:

Կռունկները կոնչելով ի՛նչպէս անցան հովերուն հետ:

Ճերմակ գառնուկ մը, մայելով, իր կճղակները կը կրծէր:

Շարադասական միեւնոյն պաշտօնը կատարող այս երկու ձեւերուն միջեւ իմաստաբանական տարբերութիւն մը գտնել դժուար է, բացի այն պարագայէն, որ գործիական հոլովը ցոյց կու տայ ստորոգիչին հետ կատարուող, իսկ բացառականը՝ անոր հետ սկսած գործողութիւն մը: Երկուքն ալ համընթաց ու զուգահեռ, այնքան որ միեւնոյն նախադասութեան մէջ իբրեւ ձեւի պարագայ անոնց համատեղ գործածութիւնը միայն ոճական առանձնա-յատկութիւն մը կը թելադէ, ինչպէս կ'երեւի Սիամանթոյի հետեւեալ տողին մէջ, մէկը գործիական, իսկ միւսը բացառական հոլովներով.

Մոնչելով եւ լողալէն իր գաւակը փրկել կ'ուզէր:

Սակայն բացառականով ձեւի պարագան գործածութեան սահմանափակումներ ունի. անով արտայայտուած ձեւի պարագաները կարելի է աներկբայօրէն արտայայտել գործիական հոլովով. *Ու անցաք՝ Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելէն... (տառապելով): Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի տարածելէն (տարածելով) տարօրինակ երջանկութիւնով մը երգեցին:* Բայց գործիական հոլովով արտայայտուած ձեւի պարագան կարելի չէ ամէն պարագայի փոխարինել բացառական հոլովով. *Ես երգելով կ'ուզեմ մեննիլ եւ Ես երգելէն կ'ուզեմ մեննիլ* բոլորովին տարբեր բաներ են. երգելով-ը ձեւի պարագայ է, իսկ երգելէն-ը պատճառի պարագայ: Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի բացառականի արտայայտած պատճառի պարագան սահմանափակումներ կը բերէ անոր ձեւի պարագայի դերով հանդէս գալու իրողութեան մէջ: Կայ երկրորդ պատճառ մը եւս. արեւմտահայ խօսակցական լեզուին մէջ ան լայնօրէն հանդէս կու գայ նաեւ տեղի պարագայի պաշտօնով. արդարեւ, *լողալէն տուն վերադարձայ* նախադասութիւնը չի նշանակէր *լողալով տուն վերա-*

դարձայ. դերբայը չունի ստորոգիչին հետ համընթաց զարգացող գործողութեան իմաստ, այսինքն չունի ձեւի պարագայի դեր, այլ կը նշանակէ «լողալու փորձէն, լողալու տեղէն, լողաւագանէն», ճիշդ այնպէս, ինչպէս արեւելահայը պիտի ըսէր «լողալուց վերադարձայ»:

Միամանթոյի պարագային, գործիական հոլովով անորոշ դերբայի կողքին, բացառական հոլովով ձեւի պարագայի այնքան առատօրէն գործածութիւնը աւելի նուազ կ'երեւի իր ժամանակակիցներու գործերուն մէջ, օրինակ, Դանիէլ Վարուժանի, ուր գործիական ձեւը աւելի տիրական է՝ նոյնիսկ անոր ժողովրդական շունչով գրուած բանաստեղծութիւններուն մէջ.

Հունձք կը ժողվեմ մանգաղով,

_ լուսնակը եարս է,

_ Ակօս-ակօս ման գալով,

_ Միրածս հարս է:

Մայլերը կ'երթան անդորրութեան մէջ

Աղաղակելո՛ւ վ:

Այս իրիկուն ձեզի կու գանք, սէ՛ր երգելով,

Սարի ճամբով:

Վերջին երկու տողերը բանաստեղծը կրնար ըսել.

Այս իրիկուն ձեզի կու գանք, սէր երգելէն,

Սարի ճամբէն:

Միաք Մեծարենցի եւ Մատթէոս Զարիֆեանի բանաստեղծութիւններուն մէջ բացառական հոլովաձեւի գործածութիւնն է աւելի ակնբախ.

Տենչանքներս (...) անցան գացին դարուղիէն

Կիսաթափանց մշուշներու ապրշում քողքը պատռելէն

Եւ հաճելէն մէջն արեւին (ՄՄ):

*Բայց ես կ'երթամ **գլգլալեն** ու **լալեն** (ՄԶ):*

Մինչ աւելի կը նուազի Վահան Թէքէեանի պարագային, ուր տիրական է գործիական հոլովի նոյնիմաստ գործածութիւնը.

*Քիչ մը գորով **պաղատելով** պիտի գամ*

Օտար տղոց քով թափառիլ յարածամ...:

Կը մսի՛ սիրտդ ու կը դողդղա՛ս

Խորհելով պայծառ արեւին անցեալ:

Չսիրուելով սիրելէ...

Յոգնած, յոգնած եմ հիմա:

Թէքէեանի վերջին մէջբերումին մէջ **սիրելէ** անորոշ դերբայի բացառական հոլովը **յոգնած եմ** ստորոգիչին պատճառի պարագան է, իսկ **չսիրուելով** անորոշ դերբայի գործիական հոլովը կողմնակի ձեւի պարագան է **սիրուելէ** դերբային:

Գրական լեզուին մէջ անորոշ դերբայի բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնով գործածութիւնը, գործիական սովորական ձեւի համեմատութեամբ, կը բացատրուի ոճական ու արտայայտչական հնարքի գործօններով: Անոր գործածութիւնը շատ աւելի նուազ է արձակ հեղինակային խօսքի մէջ, ինչպէս ցոյց կու տան Չոհրապի, Օշականի, Զապէլ Եսայանի, Յակոբ Մնձուրիի եւ այլոց գործերը:

Շահեկան է այստեղ յիշել, որ ձեւի պարագայի շարահիւսական պաշտօնով հանդէս կու գան նաեւ գոյականի գործիական եւ բացառական հոլովները եւ փոխարինելի չեն: Գործիականով՝ **Միրով կ'ընկերանամ քեզի: Ներկաները միաձայնութեամբ որոշումի մը յանգած են: Հաճոյքով ընկերացայ անոր:** Բացառականով ձեւի պարագան կ'արտայայտուի տեղ ցոյց տուող բառերով կազմուած ընդհանրապէս դարձուածքային, ասոյթային խօսքերու մէջ. ունին փոխաբերական իմաստ. **Սօսէն կը ճանչնամ զինք: Բարձրէն մի՛**

*խօսիր հետս: Ես **հեռուէն** կը հետեւիմ ձեր խնդիրին: Քիթին **տակէն** բաներ մը մրթմրթալով տուն գնաց:* Այստեղ բացառական հոլովով դրուած բառերը տեղի պարագայ չեն, այլ փոխաբերաբար գործողութեան կատարման ձեւը ցոյց կու տան: Նման գործածութիւն ունին նաեւ դերանունները. - *Ես **ինձմէ** (ինքնաբերաբար) ելայ գացի; Դուն **քեզմէ** (ինքնաբերաբար) պէտք է գիտնայիր գալիքը: **Մէկէն** (յանկարծ) յայտնուեցաւ:*

Անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալը մակբայական կիրարկութիւն է. ու հետաքրքրական է յիշել, որ արեւմտահայերէնի մէջ լրիւ մակբայացման վիճակ ունին **երթալ** բայի բացառական եւ գործիական հոլովաձեւերը՝ **երթալէն/երթալով**, որոնք ձեռք ձգած են «հետզհետէ, կամաց-կամաց» իմաստը ու իբրեւ անկախ մակբայ կը գործածուին խօսակցականին մէջ. *երթալէն գործերը կը վատթարանան, երթալով գործերը կը վատթարանան: Երթալէն օղերը կը պաղին: Երթալով դասերը կը դժուարանան:*

Արեւմտահայ քերականութեան մէջ անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալը օրին նկատուած է ու ամրագրուած, թէեւ ոչ ամբողջական ներկայացումով: Օրինակ՝ «Հայերէն լեզուի դասագիրք»-ը խօսելով անորոշ դերբայի մասին՝ կը գրէ. *«Ամբողջ օրը մտածելով կ'անցրնէ, խաղալով ժամն անցուց, խօսելով կը քալէր նա-խաղասութեանց մէջ մտածելով, խաղալով, խօսելով դերբայները դրուած են գործիական հոլովով եւ պարագայ են»*¹: Հոս չ'անդրադառնար բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնին, բայց ուրիշ տեղ՝ ձեւի պարագայի նուիրուած բաժնին մէջ կը գրէ, թէ

¹ Համահեղինակներ **Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան**, Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ հրատարակութիւն, Ե., 1968, էջ 145:

ձեւի պարագան կ'արտայայտուի «Գոյականներու կամ գոյակա-
նաբար գործածուած այլ խօսքի մասերու բացառական եւ գործիա-
կան հոլովներով» ուկը բերէ Մեծարենցէն տուն մը, ուր երկու ձեւի
պարագայ կայ արտայայտուած անորոշ դերբայի բացառական
հոլովով.

Ցայգն է ժայթքած իր շողակի շատրուաններն անըջական.

Հեռուներէն ուտի մը թաւ հեծքը կու գայ դողդողալէն,

Այս գիշեր ջերմ ու երազուած կայծեր հոգուոյս խորերն ինկան,

Կը մարեմ լոյսը լամպարիս ու կ'երազեմ մրափելէն²:

Հակառակ շարադրանքի թուլութեան եւ բերուած օրինակնե-
րու անբաւարարութեան՝ կը հասկցուի, որ անորոշ դերբայի բացա-
ռական եւ գործիական հոլովները խօսքի մէջ կը կատարեն ձեւի
պարագայի պաշտօն:

Անորոշ դերբայի բացառական հոլովի մակբայական այս
կիրարկութիւնը նկատուած է նաեւ արեւելահայ բարբառներուն
մէջ. Էդ. Աղայեան Մեղրիի բարբառի պարագային գայն կը կոչէ
մակբայական դերբայ, որ, «կազմվում է անորոշ դերբային ավե-
լացնելով են վերջավորությունը»³: Ան կը յայտնէ, որ դերբայը իր
բովանդակութեամբ կը համապատասխանէ «աշխարհաբարի անո-
րոշ դերբայի գործիական հոլովին՝ իբրեւ ձեւի պարագայ» տալով
բարբառի եւ աշխարհաբարի գոյգ օրինակներ՝ ըսելէն-ասելով,
խըսելէն-խօսելով: Աղայեան կ'եզրափակէ գրելով. «Կազմությամբ
այս դերբայը նույնն է անորոշ դերբայի բացառական հոլովի հետ,
որն այսպիսի գործածություն ունի նաեւ Պոլսի բարբառում»⁴ :

² Նոյնը, էջ 319: Արձակէ բերուած եւս երկու օրինակները գոյականի գործիական
հոլովաձեւով են եւ ոչ անորոշ դերբայի:

³ **Էդ. Աղայան**, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 196:

⁴ Նոյնը, էջ 197:

Մէկ կողմ ձգելով ձեւի պարագայի պաշտօնով հանդէս եկող անորոշ դերբայի գործիականի համընդհանուր գործածութեան պարագան՝ լեզուաբանները ուշադրութիւն կը դարձնեն Պոլսոյ բարբառէն արեւմտահայ գրական լեզուին անցած բացառական հոլովի ձեւի պարագային վրայ: Արեւելահայ քերականութիւնը կը զբաղի այս դերբայի սահմանումով ու անուանումով: Ստորոգիչին արտայայտած գործողութեան համընթաց գործողութիւն սահմանումը կը վերաբերի նաեւ արեւելահայերէնի երկրորդ անկատար դերբային՝ գրելիս, կարդալիս, որ խօսքի մէջ հանդէս կու գայ ժամանակի պարագայի պաշտօնով: Ալիսելիս վերջաւորութեամբ դերբայը կը կոչուի համընթացական, իսկ էն վերջաւորութեամբ դերբայը՝ ընթացակցական դերբայ:

Քոստեան կը գրէ. «Թէն այս դերբայը բարբառային ծագում ունի, սակայն արեւմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում՝ ցույց տալով դիմավոր բայի արտահայտած գործողութեանը համընթաց գործողութեան հասկանիչ եւ կատարելով ձեւի պարագայի պաշտոն»⁵ : Հեղինակը կ'աւելցնէ, որ «որոշ դէպքերում լրացումը հնարավոր է մեկնաբանել է՛ւ իբրև ընթացակցական դերբայ, է՛ւ իբրև անորոշ դերբայի բացառական հոլովածն՝ դրանց նմանութեան եւ կատարած շարահյուսական դերի ընդհանրութեան պատճառով»⁶: Բերումս օրինակներէն յայտնի կ'ընէ, որ պատճառի պարագայի դերով հանդէս գալու պարագային կը համարուի բացառական հոլով, իսկ ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու պարագային՝ ընթացակցական դերբայ:

Յետագայ բոլոր ուսումնասիրողները կամ այս երեւոյթին անդրադարձողները կը նշեն հետեւեալ յատկանիշները.

⁵ Վ. Քոստեան, Արեւմտահայերէնի բառակապակցութիւնները, Ե., 1986, էջ 230:

⁶ Նոյնը, էջ 231:

ա. Այս դերբայը կ'արտայայտե դիմաւոր բայի գործողութեան համընթաց, զուգահեռ, ընթացակից գործողություն, ու կ'ունենայ ձևի պարագայի պաշտօն, իր իմաստով կը նոյնանայ արեւելահայերէնի համընթացական դերբային հետ, որ սակայն կ'ունենայ ժամանակի պարագայի պաշտօն:

բ. Իր ձևով կը նոյնանայ արեւմտահայերէնի բացառական հոլովին հետ, որուն կը վերապահուի պատճառի պարագայի պաշտօնը, իսկ իրեն՝ ձևի պարագայի պաշտօնը:

դ. Իր իմաստով ու պաշտօնով կը նոյնանայ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի անորոշ դերբայի գործիական հոլովին հետ, որ դարձեալ կ'արտայայտե դիմաւոր բայի գործողութեան հետ համընթաց գործողութիւն ու կ'ունենայ ձևի պարագայի պաշտօն: Չի նշուիր, որ անորոշ դերբայի պարագային, գործիական հոլովին վստահուած է ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու ամենէն ընթացիկ ձեւը, ու ոչ թէ «ընթացակցական դերբային»: Քոստան իր այդ գիրքին «Բայի լրացումները դերբայներով» բաժնին մէջ⁷ չի խօսիր անորոշ դերբայի գործիականով ձեւի պարագայի մասին, չ'անդրադառնար անոր, սակայն «պարագայական գործիականով բառակապակցություններ» բաժնին մէջ կը գրէ. «Ձևի իմաստն արտայայտվում է նաև անորոշ դերբայի գործիականով՝ տալով երեք օրինակ Պարոնեանէն, Զոհրապէն եւ Վահրամ Մավեանէն, աւելցնելով. «Երբեմն դիմավոր բայը և անորոշ դերբայը նույնական են լինում, և ձևի իմաստը սաստկություն է արտահայտում: Օրինակ՝ Եւ ատելով կ'ատեր գիս»⁸ : Չի բացատրեր, թէ ինչո՞ւ անորոշ դերբայի բացառականի ձեւի պարագան պէտք է առանձնացնել իբրեւ դերբայ, իսկ գործիականինը՝ ոչ:

⁷ Նոյնը, էջ 223:

⁸ Նոյնը, էջ 172:

Այս տարանջատումը շփոթ կը ստեղծէ ու կը մղէ անորոշ դերբայի գործիական հոլովն ալ ընթացակցական դերբայ համարել: Օրինակ, էն վերջաւորութեամբ ընթացակցական դերբայի կազմութեան օրինակներ տալէ անմիջապէս ետք կը գրուի. «Այս դերբայի գործիականը նախադասության մէջ կատարում է ձևի պարագայի շարահյուսական պաշտոն»⁹: Այս հակասական մօտեցումին պատճառը այն փաստն է, որ անորոշի գործիական հոլովն ալ նոյն կիրառութիւնն ու իմաստը ունի:

Նոյն մօտեցումը կայ նաև ուրիշներու մօտ. Հ. Ռ. Խաչատրեանը կը գրէ. «Գրական արևմտահայերէնում ընթացակցական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ էն վերջավորությամբ, ինչպէս աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն և այլն»¹⁰: Յետոյ կ'աւելցնէ, որ ընթացակցական դերբայը բնորոշ է արևմտահայ բարբառներուն ու կու տայ քանի մը բարբառներուն մէջ դերբայական հիմքի վրայ անոր ով, է, էն վերջաւորութիւններով կազմուիլը: Ով վերջաւորութիւնը կը համապատասխանէ այդ բարբառներուն գործիական, իսկ էն ու է վերջաւորութիւնները՝ բացառական հոլովներուն: Ուրեմն գործիական հոլովաձէ՞ն ալ ընթացակցական դերբայ նկատենք: Ոչ մէկ ակնարկութիւն արևմտահայ եւ արեւելահայ գրական լեզուին գործիական հոլովի նոյնարժէք գործածութեան մասին:

Հրանտ Զ. Պետրոսեան կ'ընէ հետեւեալ հաստատումը. «Ոմանք նոր հայերէնում ընդունում են նաև ընթացակցական դեր-

⁹ **Յու. Ս. Ավետիսյան**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007, էջ 157:

¹⁰ **Հ. Ռ. Խաչատրյան**, Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների բայական համակարգերի առնչությունները, Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները, Երևան, 2016, էջ 181-182:

բայի տեսակ, որն ըստ էության անորոշ դերբայի բացառականի կամ գործիականի պարագայական կիրառություն է»¹¹:

Ասիկա փաստօրեն ժխտումն է արեւմտահայերենի ընթացակցական դերբային եւ հաստատումն է այն իրողութեան, որ արեւմտահայերենին յատուկ է անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու մակբայական գործածութիւնը: Հետեւաբար անտեղի է բացառական ձեւը կոչել ընթացակցական դերբայ, իսկ միւսը համարել գործիական հոլով:

Մենք արդէն քննեցինք, որ բացառական ձեւը գործիականի համեմատութեամբ ինչ սահմանափակումներ ունի եւ որոշ վերապահութեամբ պէտք է ընդունիլ Քոսեանի այն հաստատումը, որ ան «արևմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում»¹²: Հակառակ կարծիքին է Հ. Ռ. Խաչատրեան. «արևմտահայերենում ընդհանրապես ընթացակցական դերբայը գործածության ավելի քիչ հաճախականություն ունի», բայց կարելի չէ համաձայնիլ վերջինիս այն կարծիքին, թէ այդ «պատճառով էլ որոշ քերականներ այն չեն առանձնացնում իբրեւ ինքնուրույն դերբայ»¹³: Բացառական հոլովը ունի ձեւի, պատճառի եւ տեղի պարագայական նշանակութիւններ. ձեւի պարագան շատ յաճախ իմաստային խաչաձեւում կը ստեղծէ պատճառի եւ տեղի պարագաներուն հետ, այդ պատճառով ալ հետզհետէ կը նուազի անոր գործածութիւնը թէ՛ խօսակցական եւ թէ գրաւոր խօսքին մէջ, բայց այս երեւոյթը չի կրնար կապ ունենալ զայն ընթացակցական դերբայ համարել կամ չհամարելուն հետ: Այդ մերժումը, ըստ իս, հիմնուած է պարզապէս այն հիմքի վրայ, որ ձեւի պարագան անորոշ դերբայի բացառական

¹¹ **Հրանտ Ջ. Պետրոսեան**, Հայերենագիտական բառարան, Դերբայ, Երևան, 1987, էջ 184:

¹² **Վ., Քոսյան**, Արևմտահայերենի բառակապակցությունները, Երևան, 1986, էջ 230 :

¹³ **Հ. Ռ. Խաչատրյան**, նշուած աշխատութիւնը, էջ 182:

հոլովի արտայայտութիւններէն մէկն է, ինչպէս է պարագան անոր գործիական հոլովին:

Ընթացակցական դերբայ հասկացութիւնը տեղ գտած է նաեւ սփիւռքահայ քերականութեան մէջ: Կարօ Առաքելեան երկու էջ յատկացուցած է անոր, տուած սահմանումը, կազմութեան կերպը՝ անորոշ դերբայ+էն վերջաւորութիւն, ծանօթութեան մը մէջ մէկ օրինակով տարբերած է բացառական հոլովով պատճառի պարագան ընթացակցական դերբայէն: Վերջինիս համար տրուած են երկու օրինակներ. *Յասմիկը ներս մտաւ դողդղալէն. Ոտքի՛ ելէք խաչակնքելէն*¹⁴: Այս ներկայացումը թիւր պատկերացում մը կը ստեղծէ: Այս ձեւերուն ոմանց քով գործածուելու հաւանականութիւնը հաստատելով հանդերձ՝ սովորականը գործիական հոլովով տարբերակն է. *Յասմիկը դողդղալով ներս մտաւ. Խաչակնքելով ոտքի՛ ելէք*: Պարզապէս արուեստական դերբայի մը առանձնացումը հոս պատճառ կը դառնայ լեզուական կեղծ պատկերի մը ստեղծումին: Ձեւի պարագային կամ հոլովներուն նուիրուած դասին կարելի էր յաջորդաբար դնել անոր գործածութիւնը երկու հոլավածելերով եւս, նշելով հանդերձ բացառական հոլվածելով արտայայտուած ձեւի պարագայի սահմանափակումները:

Hagop Tcholakian-The Parallelistic Participle In Western Armenian.- In Western Armenian speech both ablative and instrumental cases of the indefinite participle, have a function of case of manner, showing an action parallel to the indicative mood. The same cases of nouns have the same function of case of manner. These ablative cases of infinitive verbs and nouns came from verbal speech and have

¹⁴ Կարօ Առաքելեան, Արդի Հայերէնի Քերականութիւն, Բ. գիրք, Պէյրուօ, 1998, էջ 130-131:

some restrictions in comparison with the instrumental case. This ablative case acting as infinitive verb is separated by some linguists and is called parallelistic participle. The article confirms that the case of manner of ablative case of the indefinite participle is one of its adverbial forms, such as instrumental case, and there is no reason for that separation

Акоб Чолакян- Проблема participle причастия в западноармянском языке. -Отложительный и творительный падежи неопределенного причастия в западноармянском языке выполняют в речифункцию обстоятельства образа действия – выражая значение сопутного действия со смыслом личного глагола. Тем же падежам существительного также свойственна роль обстоятельства образа действия.

Формы неопределенного причастия и отложительного падежа существительного в роли обстоятельства образа действия - результат разговорной речи и имеет некоторое ограничение по сравнению с творительным падежом.

В грамматике формы неопределенного причастия отложительного падежа существительного в роли обстоятельства образа действия некоторые специалисты исключают из отложительного падежа и называют participle причастием. В статье делается вывод, что функция обстоятельства образа действия - одна из ролей отложительного падежа, а не выражение независимого причастия.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Պ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հայ սիրիական կապերի պատմությունից

Դեռ շատ հնուց Սիրիայում և Միջագետքում հաստատվել էր հայ բնակչություն. հնագույն ժամանակներից ի վեր հայերը կազմում էին Եդեսիայի բնակչության մեծ մասը: 12-13-րդ դարերում հայերն արդեն կազմում էին Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի ազգաբնակչության նկատելի հատվածը, ուր 10-13-րդ դարերում արդեն կար եպիսկոպոսական աթոռ:

16-րդ դարի սկզբներին հայերն ավելի տարածվեցին՝ Բերիական Հալեպ, Լաթաքիա, Բեյրութ, Դամասկոս, որոնք դարձան հայաշատ քաղաքներ:

Հալեպի գաղութը 14-րդ դարի վերջերից սկսած գնալով բարգավաճում էր: 15-18-րդ դդ. հալեպահայ գաղութը կազմավորվել էր Հայաստանի տարբեր վայրերից և տարբեր պատճառներով այնտեղ եկած հայերից: Հալեպահայության մեջ զգալի թիվ էին կազմում ջուղայեցիները, երևանցիները, արցախցիները, էրզրումցիները, սեբաստացիները, սասունցիները, ուռհայեցիները և այլք: 1616 թվին Հալեպում կար 300 տուն հայ, այսինքն՝ մոտ 3000 հայ: 17-18-րդ դդ. հայերեն ձեռագիր մատյաններում այն հիշատակվում է Արևելքի խոշորագույն շուկաների շարքում: Հ. Թովուզյանի¹ կազմած աղյուսակից երևում է, որ հայեր կային Սիրիայի բոլոր

* Լոյս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» մենագրության մեջ, Ե., 2015, «Աստղիկ», էջ 25-29:

¹ Հ. Թ. Թովուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Ե., 1966, էջ 321:

նահանգներում, սակայն նրանց հիմնական զանգվածը հաստատված էր Հալեպի սանջակում:

Լեզվական իրավիճակը

Սիրիայում առհասարակ պահպանվել էր մայրենի լեզուն, սակայն տարբեր քաղաքներում հայախոսության մակարդակը տարբեր էր: Հալեպահայերը աչքի էին ընկնում իրենց հայերենապաշտությամբ: Դրա համար էլ աստիճանաբար բարելավվում էր հայերենի իմացության վիճակը, թեև Սիրիայի շատ շրջաններում հայերը խոսում էին տարբեր բարբառներով:

Առհասարակ սիրիահայ համայնքը Սփյուռքի ամենահին համայնքներից է և այդ պատճառով էլ համարվում է Սփյուռքի մայր գաղութը, իսկ բնակիչները կոչվում են «հին հայեր»:

1915 թ. Մեծ Եղեռնից հետո զգալի թվով հայեր հաստատվեցին Սիրիայում: Թեև եկվորները տարբեր լեզվական մշակույթների կրողներ էին, սակայն շուրջ երկու տասնամյակ անց գրական լեզուն բոլոր շերտերի համար դարձավ հասարակական, ընդհանուր լեզու:

Հայերը կարողացան պահպանել իրենց ինքնությունը՝ լեզուն, գիրը, գրականությունը: Իհարկե, հայերն էլ շփվում էին արաբների հետ, և տեղի խոսակցական լեզուներից մեկն էլ արաբերենն էր, որը զգալի ազդեցություն է ունեցել գաղութի խոսակցական լեզվի վրա: Դեռևս Հր. Աճառյանը նկատել է հայերենում օգտագործվող արաբերեն բառերի մի շարք: Դրանց թվում՝ դալատ բառը, որ նշանակում է սխալ, դանթար (խանթար), որ նշանակում է քաշ, կշեռք, դավի=վեճ. սա հարադրության մաս է դարձել՝ դավի անել=վիճել, շամս=արև, հավա=օդ:

Արաբերենից փոխառություններ դեռևս զգալի էին Մխիթար Հերացու 1184 թ. գրված «Ջերմանց մխիթարութիւնը» գրքում: Առանձնապես շատ էին արաբերեն բառերը դեղատոմսերում:

Բնականաբար խոսակցական լեզվում կային շատ փոխառություններ ինչպես ուղղակիորեն թուրքերենից, արաբերենից, այնպես էլ միջնորդաբար այլ լեզուներից անցած:

Ստորև բերվող բառացանկը շատ տարածված է առօրյա խոսակցական լեզվում.

ամսօ – հորեղբայր, անթի – հորաքույր կամ մորաքույր, բիժամա – գիշերազգեստ, եահո^փ – օ^փ, ա՞յ մարդ, ելէկ – բաճկոնակ, զեվզեկ – շատախոս, դատարկախոս, էմփի – հորեղբայր, քեռի, էն – ամենից, թանթի – հորաքույր, մորաքույր, թրէն – շոգեկառք, իշտահ – ախորժակ, իշտէ – ահա, ահավասիկ, լահանայ – կաղամբ, հայտէ – դե՛հ, օն, հէչ – բնավ, մահանայ – պատրվակ, նասըր – կոշկոռ (կոշտուկ), նէ – եթէ, նէնէ – մեծ մայրիկ, նոթ ընէլ, նոթի առնէլ – նշում կատարել, ուլան – ձօ, չաբէթ – բաճկոն, չոճուխ – երեխա, պագար – շուկա, պաճանաղ – քենակալ, պէ – էհ, պէլքի – թերևս, գուցէ, պէպէք – գրկի երեխա, պիլէ – նույնիսկ, անգամ, պիրա – զարեջուր, սալաթ(ա) – աղցան, տոլմա – տերևով լիցք, վալիզ – ճամպրուկ, տահա – տակավին, տայտայ – քեռի, տէտէ – մեծ հայրիկ, րեզիլ – խայտառակ, րեզիլ ըլլալ – խայտառակվել, փիլավ – եղինձ (փլավ), փիս – գեշ, աղտոտ, քեփեզէ – խայտառակ, քրաւաթ – փողկապ, օթօ – ինքնաշարժ, ֆրեն – արգելակ:

Արևմտահայ բառեր: Միրիահայ գաղթօջախի լեզվում զանազանվում են բառային միջոցներ, որոնք զգալիորեն տարբերվում են Սփյուռքի այլ գաղթօջախներում գործածվող ձևերից, թեև դրանց մի մասը հարազատ է նաև լիբանանահայ համայնքին.

հրաժեշտ առնել – հրաժեշտ առնել (Մաթենիկ հրաժեշտ կ'առնէ ինձմէ), յստակատես – գուշակ, բարօր կեանք – լավ կյանք, ծամոն – ծամոց, շարիկ գրիչ – մշտահոս գրիչ, դրսերևույթ – արտաքին տեսք, դաշտավայր – դաշտագետին, դահիկ – կարճ պահ, տուն տալ – առիթ տալ, եզական – եզակի, խուլերա – քուլերա, պոռչտուք – բղավոց, երկրագունտ – երկրագունդ, հոսկէ – հոնկէ, երթնեկի – ոստիկանական կառք – ոստիկանության մեքենա, խտացեալ դարմանումի բաժին – բոքս, հիմ – հիմք:

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ

Հայերենի երկու տարբերակներում էլ դարձվածքները լայն կիրառություն ունեն: Գրական երկու լեզուներում էլ կան ինչպես նույնություններ, այնպես էլ տարբերություններ՝ կապված շրջապատող միջավայրի, ապրելակերպի, հոգեկան կերտվածքի, օտար լեզուների ազդեցության հետ: Մեր կողմից ներկայացված դարձվածքները համեմատաբար լայն տարածում ունեն Սիրիահայ գաղութում: Ներկայացվող ցանկը լիակատար չէ, ուշադրություն ենք դարձրել առավել գործածական տարբերակների վրա: Օրինակներ՝

Երկար ըրիր, թող տուր օձիքս:

Ուսէս վար իջած չունիս:

Տաշուած քարը մէջտեղ չի մնար, անկիւնաքար կ'ըլլայ:

Փնտռողը կը գտնէ:

Համրուած օրերը շուտ կը վերջանան:

Արևը կամաց-կամաց ջերմութիւն տալէ կը դադրէր:

Աստուած հետոյ ըլլայ:

Աստուած փորձանք չբերէ գլուխդ:

Այդ շան աղջիկը խելքդ առեր է:

Արիւնս չորցաւ:

Փամփուշտ զարնէիր, կաթիլ մը արիւն չէր ելլեր ինձմէ:

Ձայնանիշի առնել (նոտագրել):

Օհանը քսանհինգին նոր բարև տուած տղա մըն էր:

Օդին մէջ կախել մեր ցտեսութիւնը:

Զինք խաղի բերել:

Պարապ տուր (թեթև նայիր):

Արևմտահայերենով գործածվող դարձվածքների մեծամասնության մեջ նկատելի են արևելահայերենին բնորոշ նմանություններ՝ պայմանավորված նույն լեզվամտածողությամբ:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՐՑԵՐ՝ ԴԻՄԱՏԵՏՐԻ
ԷԶԵՐՈՒՆ*

Լ. ՆԱԶԱՐԵԱՆ

21-րդ դարուն հաղորդակցութեան ամենէն տարածուած միջոցներէն մէկը անկասկած համացանցի ընձեռած դիմատետրի օգտագործումն է, ուր զանազան խմբակներ բազմազան նիւթեր կը շօշափեն:

Մփիւռքեան մեր տարածքը միաւորող նորօրեայ այս հարթա-կը արդէն իսկ իր ուրոյն տեղն ու իւրայատուկ դերը ստանձնած է:

Ակներեւ է, որ դիմատետրի էջերու ընձեռած պատեհութիւն-ներէն օգտուելով կազմուած խմբակները միաւորողը միեւնոյն թիրախն ու նոյնանման մեկնակէտն է: Անհամար այս խմբակներու շարքին քիչ չէ թիւը Արեւմտահայերէնի ճակատագրով հետա-քրքրուող եւ զայն անադարտ պահելու ու ճշգրիտ գործածելու մի տումով համախմբուածներու:

Քննարկումներուն մասնակից խմբակի անդամները կը դրսևորեն ե՛ւ լեզուի իմացութեան տարբեր մակարդակներ ե՛ւ հարցերը դիտարկելու տարբեր մօտեցումներ: Մասնագիտական ու խոր վերլուծումներու կողքին կը հանդիպինք մակերեսային ու միակողմանի մեկնաբանութիւններու, լուրջ դիտարկումներուն կը յաջորդեն զուարթախոհութիւններ, բարդ հարցադրումներն ու դպրոցական-տարրական հարցերը կ'ընթանան համընթաց:

* Լույս է տեսել Արեւմտահայերէնի հարցեր (Գիտական ուսումնասիրութիւններ) Ա պրակ, Երևան 2018, էջ 68-73:

Վերոնշեալ դիտարկումները հիմնաւորելու եւ կենդանի պատկեր մը փոխանցելու միտումով կը մեջբերենք «Սրբագրենք, դեռ ուշ չէ» հարթակի գրոյցներէն մէկ քանին, որոնցմէ **առաջինը կը քննարկէ շաբթուան օրերու եւ ամսանուններու գլխագրի գործածութեան հարցը**, երկրորդին հետաքարքրութեան կիզակէտն է «ա» յօդակապի կիրառութիւնը, իսկ երրորդը կ'անդրադառնայ մայրենին աղաւաղող օտար բառերուն:

1. Հարցում մը ունիմ: Մենք դպրոցին մէջ սորված ենք, որ շաբթուան օրերու եւ ամիսներու անունները միշտ գլխագիրով պէտք է գրել: Բայց վերջերս շատ տեղեր հանդիպեցայ ձեռագիրով գրուած: Ո՞րն է ճիշդը:

-Սկզբունքի հարց է, մէկ կանոն կ'որդեգրես ու ողջ շարադրութիւնդ անոր համաձայն կը կարգաւորես: Ես անձամբ ամիսներն ու շաբթուան օրերը գլխագիրով կը գրեմ, սակայն ոմանք արեւելահայերէնին հետեւելով՝ փոքրագիրով կը գրեն,

-Շնորհակալ եմ, ես ալ միշտ գլխագիրով կը գրեմ:

-Արեւմտահայերէնի քերականութիւնները մեծատառն կ'ընենք»:

- Ես ալ այդպէս սորված եմ եւ կը շարունակեմ գրել՝ գլխագիր:

-Մենք սորված ենք գլխագիրով գրել և այդպէս ալ կը շարունակենք:

2. Լոյս սփռելով ժամանակակից լրագիրներու մէջ տարածուած սխալներուն վրայ՝ կ'ուզեմ յիշեցնել, որ հայերէնի մէջ «ո» յօդակապ չկայ, «ա»ն է միակ յօդակապը, որմով բառերը կը կապուին իրար: Ուստի՝ - մի՛ գրեր «Եւրամիութիւն», այլ գրէ՛ «Եւրամիութիւն», - մի՛ գրեր «Եւրոտեսիլ», այլ գրէ՛ «Եւրատեսիլ»: Այս կանոնի մասին խօսելով՝ յարմար կը գտնեմ յիշեցնել նաեւ, որ բարդ բառ կազմելու

ասեն, երբ երկու ձայնաուր քովի քովի գան՝ առաջինը կը սղի: Օրինակ՝ - չՂԱՐ գրես «համաերոպական», ճիշդ է գրես «համաերոպական», բայց կրնաս գրել «համահայկական»:

* Օնթ. խօսքս միայն արեւմտահայերէնին չի վերաբերիր, այլ՝ արեւելահայերէնին ալ: Իսկ եթէ պատահեցաւ, որ նշեալ կանոններէն դուրս բան կարդացիր, ապա ատիկա անորակ խմբագրութեան արդիւնք է:

-Այնքան ուրախ եմ ու գոհ, որ լեզուական խնդիրներ հանրային քննարկման կ'ենթարկէք, հետաքրքրութիւն կը ստեղծէք, ճիշդին փնտռտուքը կ'ընէք. ապրիք: Հոս կ'ուզէի ըսել նաեւ, որ **երոտսիլ** եւ **երոմիութիւն** բառերը իսկական բարդութիւններ չեն, այլ յապաւումներ. անով բառերու կտրատումով կցումով նոր բառեր կը ստեղծուին. Արեւելահայերէնի մէջ շատ տարածուած բառակազմական երեւոյթ է. երոպական լեզուներու մէջ՝ նոյնպէս. **դասղեկ**, **ուսմասվար**, **բուհ**, **շինթելանիք**... Արեւմտահայերէնի մէջ միայն յատուկ անուններու տառային յապաւումը տարածուած ըլլալով (**ՄԱԿ**, **ՌԱԿ**, **ՀՅԴ**) մէկտեղ՝ այդ տիպի բառեր ալ սկսած ենք գործածել, ինչպէս **կենսկոմ** (այսինքն՝ կեդրոնական կոմիտէ), **զինուծ**... ուրեմն՝ երո(պական) ածականին կրճատ ձեւէն կազմուած բառերն են վերինները:

-Երոմիութիւն բառի պարագային կարծեմ հարցումը հետեւեալն է. արդեօք ո-ն յօդակապի դեր կը կատարէ՞, թէ՞ Երոպա բառին յապաւումէն յառաջ եկած բաղադրիչին վերջին տառն է... Առաջին պարագային, ձեր դիտողութիւնը շատ տեղին է: Բայց երկրորդ պարագային, պետք է նշել, որ հայերէնը ունի կարգ մը անյօդակապ բարդութիւններ, որոնց կարգին կրնայ դասուիլ նաեւ Երոմիութիւն բառը: Անյօդակապ բարդութիւններու օրինակներ՝ բացերես, պարզերես, ջրառատ, ջրկիր, ջրմուղ, այլազգ,

արիննուշտ, գինարբուք, մշտարթուն, պարզորոշ, ցանկորմ, եւ այլն...

-Այո, առանց "ա"ի, բայց ո՛չ "ո"ով, նամանաւանդ այն պարագային երբ "Եւրատեսիլն" ընդունուած ու տարածուած տարբերակ է, ի՞նչ իմաստ ունի շեղիլ այս սկզբունքէն, տառադարձել "Եւրովիութիւն" եւ ստեղծել նոր բազմաձեւութիւններ:

- Կը կարծեմ որ (ո) ն յօդակապ չէ, այլ եւրոպայի կրճատումն է.

-Համաձայն եմ նկատողութեան եւ բացատրութեան, եւրովիութիւն բառը բարդ բառ է երկու արմատներով առանց յօդակապի, այսինքն ո գիրը չէ գործածուած իբր յօդակապ այլ՝ իբր առաջին արմատի 4-րդ տառը:

2. Կարելի է զրուցել օտարամուտ բառերի մասին : օրինակ՝ թուրքերէն զիբիլ (աղբ) հլա (դեռ) փոշմանել (գոջալ) ռադ ելի (կորի հեռացի) բարիշել (հաշտովել) արխային (վստահ) յանի (իբր) թարգի (թողնել դադարեցնել) համ (և նան) հավես (ցանկություն) ինադու (զգրու քեզի հակառակ) ախր (չէ որ) : ռուսերէն վեդրո (դույլ) մայկա (շապիկ) տրուսիկ (վարտիք) և այլն :Եթէ սխալներ կան խնդրում եմ ուղղէք :

-Նաեւ հայաթ, վախտ, մաղատանոս, բադրիջան, բամիդոր, խուրմա, թաւայ, դէբսի, մէրպիշ, բապուճ, գէրադա, պագգալ, էսգիճի, թուրումպա :

-Բապուճ-ը Ֆրանսերէն է: Pas bouche -Արաբերէն P գիրը գոյութիւն չունի..եւ ընդհանրապէս

- Մարմա եւ սօլմա.....իսկ վերը եթէ «յանի»ն արաբերէնէ թարգմանուած է, «իբր» չի նշանակեր այլ, «այսինքն» կը նշանակէ:

- Sarma-Պլլոր

Dolma - Լիցք

- Սարման փաթեթոց չէ ?

-Կարծում եմ վերոհիշյալ բառերի հայերեն նշանակությունները պետք է գրել որպեսզի չիմացողները սովորեն:

- Թաւայ կը նշանակէ տապակ, բաղրիջան՝ սմբուկ, մաղա-տանոս՝ ազատքեղ, հայաթ՝ բակ, վախտ՝ ժամանակ, բամիտոր՝ լոլիկ, խուրմայ՝ արմաւ:

- զիբիլ (աղբ) = زباله արբ.հլա

(դեռ) = hâlâ

փռշմանէլ (զոջալ) = pişman

Ռադ եղի (կորի հեռացի) = ոչ թրք.

բարիշէլ (հաշտվել) = barış

արխային (վստահ) = ոչ թրք. զուցէ arch- նախածանց archangel, archbishop

յանի (այսինքն) = يعني արբ.

թարզի (թողնել, դադարեցնել) = ترك اترك արբ.

համ (և նան) = hem

հավես (ցանկություն) = heves = حواس

ինադու (●ջգրու● քեզի հակառակ) = inad = عناد

ախր (չէ որ) = ոչ թրք.

-Ախր հայերէն չէ՞

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ

Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,

Ախր ուրիշ տեղ հորովել չկա,

Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում

Սեփական հոգին խորովել չկա,

Ախր ուրիշ տեղ

Սեփական բախտից խռովել չկա:

Համո Սահյան

Այսպիսով, վերոնշեալ գրոյցները, քննարկումներն ու մտորումները լեզուն կենդանի եւ անաղարտ պահելու նախանձախնդրութիւն կը դրսեւորեն, բայց եւ միաժամանակ կը յուշեն կենդրոնական մարմնի մը, վճռական խօսքի մը անժամանցելի անհրաժեշտութիւնը...

Lena Nazarean-Disputable Linguistic Issues on the Facebook Pages.

-This article discusses a number of disputable linguistic issues occurring on the Facebook pages. In particular, it touches upon issues concerning words with parallel spelling forms, non-uniformity of the connective vowels in compound words, and the misuse of foreign words penetrated into Western Armenian.

Лена Назарян-Спорные языковые вопросы на страницах фейсбука.-Статья посвящена ряду спорных языковых вопросов, встречающихся на страницах фейсбука, в частности, слова в письме, имеющие двойное правописание, неправильные грамматические формы, нестандартное использование соединительного гласного в сложных словах, ненужное применение иностранных слов на западноармянском языке.

«ՇԱՐԱՀԻՍՈՒԹԻՒՆ» ԹԵՄԱՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ
ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՄԷՋ*

Ա. ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

Բանալի բառեր. Սփիռք, արեւմտահայերէնի պահպանութիւն, շարահիւսական կառուցուածք, ուսումնական ձեռնարկ, մեթոտաբանութիւն.

Քերականութեան այն բաժինը, որ կ'ուսումնասիրէ բառերու գործառական կիրառութիւնները, անոնց կապակցութիւնները, նախադասութիւնները, ասոնց կառուցուածքային տիպերը եւ կապը իրարու հետ, կը կոչուի շարահիւսութիւն: Ուրեմն, Շարահիւսութեան հիմնական խնդիրը, լեզուի շարահիւսական միաւորներու եւ պայմանաւորող քերականական յարաբերութիւններու քննութիւնն է:

Շարահիւսութեան մասին Հայրենի լեզուաբաններու, բանասէրներու կողմէ առկայ գիտական յօդուածներն ու մենագրութիւնները առաւելաբար անդրադարձած են գրաբարի կամ արեւելահայերէնի շարահիւսութեան. սակաւ ուսումնասիրուած է արեւմտահայերէնի շարահիւսութիւնը: Վարագ Առաքելեանի դիտարկումով «...շատ աւելի անմխիթար է արեւմտահայերէնի գրական լեզուն, որի շարահիւսական դասական կառուցուածքը ցայժմ ուսումնասիրուած չէ եւ սպասում է իր ուսումնասիրողին»¹:

* Լույս է տեսել «Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում», ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., Ե., 2022, էջ 70-78:

¹ Տասնապետեան Եղուարդ, «Քերականութիւն», Անթիլիաս, 1990, էջ 241:

Արեւմտահայերէնի Շարահիւսութեան թեմային վերաբերող նիւթերու մենք կը հանդիպինք արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերու մէջ, ուր ուսումնական ձեռնարկներու հեղինակները նկատի ունենալով երկրի պայմանները, դասաւանդուող առարկայի ճշդուած դասաժամերը կը փորձեն տուեալ թեման ներկայացնել պատշաճօրէն, առանց գիտական խորացման, երբեմն ալ առանց յիշելու Շարահիւսութիւն եզրոյթը:

Օրինակ՝ Այտընեանի համաձայն, շարահիւսութիւնը քերականութեան արուեստի հինգ գլխաւոր մասերէն մէկն է, որով մասանց-բանին իրար կը կապէ: Այտընեան շարահիւսութիւն բառի փոխարէն շրջանառութեան մէջ կը դնէ «խօսք- կամ բառերու համաձայնութիւն» եւ կամ «Շարագրութիւն»² /167/ արտայայտութիւնները: Ուրեմն, Շարահիւսութիւնը նաեւ կ' ուսումնասիրէ բառերու քերականական պաշտօնն ու յարաբերութիւնը իրարու հետ խօսքին մէջ, այլ խօսքով Շարահիւսութիւնը քերականութեան այն մասն է, որ կը սորվեցնէ, թէ ինչպիսի՞ բաղադրիչ մասերէ եւ ինչպէ՞ս կազմուած է խօսքը կամ նախադասութիւնը:

Արդ, մեր քննութեան գերնպատակը արեւմտահայերէնի շարահիւսութեան դասական կառուցուածքի գիտական ուսումնասիրութիւնը չէ, այլ՝ արեւմտահայերէնի /Մփիւոքի/ դասագիրքերու մէջ «Շարահիւսութիւն» թեմայի առկայութիւնն ու բացակայութիւնը, թեմայի ուսուցումն ու մատուցման եղանակները:

Գաղտնիք չէ, որ արեւմտահայերէնի բոլոր դասագիրքերուն ուղղակի կամ անուղղակի աղբիւրը մեծ մասամբ Հ. Արսէն Այտընեանի Քննական Քերականութիւնն է, արդի հայերէնի համապարփակ ու խորաթափանց ուսումնասիրութիւնը, որուն տեւա-

² Այտընեան Հ. Արսէն Վ., Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1883, 167:

պէս դիմած են ու կը դիմեն մեր լեզուն /ե՛ւ արեւմտահայ, ե՛ւ արեւելահայ/ հետազօտողները³:

Սակայն Հայր Այտընեանի Քննական Քերականութիւնը մասնագիտական ծաւալուն տարողութեամբ դպրոցական առաջադրութիւններնէն շատ աւելին էր, ուստի դեռ 20-րդ դարու սկիզբը անհրաժեշտ դարձած էր արդի լեզուի դպրոցական ուսուցման ծառայող դպրոցական ձեռնարկներու պատրաստութիւնը: Այդ առաջադրանքը կատարեցին Հ. եւ Ջ. Ասատուր ու Յովհաննէս Գազանճեանը, որոնք օգտուելով Այտընեանի երկասիրութենէն կազմեցին իրենց քերականութեան դասագիրքերը⁴, որոնք յետագային կրկին հիմք պիտի ծառայէին վաթսունական թուականներէն ետք պատրաստուած քերականութեան դասագիրքերուն:

1960-ական թուականներէն ետք Շարահիսութիւն թեման նոյնպէս տեղ գտաւ արեւմտահայերէնի դասգիրքերուն մէջ «Տրամաբանական Լուծում», Խօսք եւ նախադասութիւն եւ այլ եզրոյթներով, այնտեղ ենթաբաժիններով ուսումնասիրուած էին Նախադասութիւնն ու խօսքը, նախադասութեան տեսակները ըստ երանգի, ըստ կազմութեան եւ նախադասութեան անդամներու պաշտօնները եւ այլն:

Շարահիսութեան, որպէս քերականութեան առանձին թեմայ, անդրադարձած են Զարեհ Մելքոնեանը⁵, Մկրտիչ Մկրտիչեանը⁶,

³ Տասնապետեան Եղուարդ, «Քերականութիւն», Անթիլիաս, 1990, էջ 242-243:

⁴ Ասատուր Հրանդ եւ Զապէլ, «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», Կ. Պոլիս, 1902: Ասատուր Հրանդ եւ Զապէլ, «Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի», Կ. Պոլիս, 1922: Գազանճեան Յովհաննէս, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, Կ. Պոլիս, 1925:

⁵ Մելքոնեան Զարեհ, Գործնական քերականութիւն արդի հայերէնի լեզուի, Դ. տպագրութիւն, Պէրոթ, 1972:

⁶ Մկրտիչեան Մկրտիչ, Քերականութեան դասեր, Բ. գիրք, (Նախակրթարանի Ե.-Ջ. կարգերուն համար), Հալէպ, 1962:

Կարապետ ճուհարեանը. 1980-ական թուականներէն ետք Յարութիւն Քիրքճեանը՝ «Նոր քերականութիւն հայերէն լեզուի»⁷ դասագիրքին մէջ, Կարո Առաքելեան իր «Արդի Հայերէնի քերականութիւն»⁸ խորագիրով Գ. գիրքին մէջ, համահեղինակներ՝ Կարո Առաքելեան եւ Աղանի Ֆրստրզճեան «Դիրին Հայերէն»⁹ Ա. եւ Գ. գիրքերու մէջ եւ վերջապէս Յակոբ Չոլաքեանը «Անդաստան»¹⁰ Դ., Ե. գիրքերուն մէջ առաւելաբար: Այս դասագիրքերու մէջ քերականական կարգերու համակարգումը այսպիսին է.

ա Հնչիւնաբանութիւն, ձեւաբանութիւն եւ շարահիւսութիւն.

բ. Շարահիւսութիւն, հնչիւնաբանութիւն, ձեւաբանութիւն եւ կրկին շարահիւսութիւն:

Արդարեւ, ուսումնասիրելով Սփիւռքի արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը սփիւռքահայ դպրոցներու մէջ ուսուցման թերացումը կ'ընդգրկէ լեզուի բոլոր ոլորտները անխտիր՝ հնչիւնաբանութիւնը, բառագիտութիւնը, ձեւաբանութիւնը, բայց մանաւանդ շարահիւսութիւնը. շատ թերի կ'ուսուցուի շարահիւսութիւնը, «թող որ զայն ուսուցելու ծառայող որեւէ ձեռնարկ ալ գոյութիւն չունի մեր մէջ», կը գրէ Արմենակ Եղիայեանը: Չհամաձայնելով Եղիայեանի այն գնահատականին, որ շարահիւսութեան «ձեռնարկ ալ գոյութիւն չունի». ընդհակառակը ունեցած ենք ուսումնական ձեռնարկ միայն շարահիւսութեան. մէկ օրինակը մեր տրամադրութեան տակ է. ձեռնարկը կը կոչուի «Քերականութեան դասեր» Գ. գիրք, հեղինակը մտաւորական, վաստակաշատ հայե-

⁷Քիրքճեան Յարութիւն, Նոր քերականութիւն հայերէն լեզուի (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժնի Ա. տարի), Աթէնք, 1989:

⁸ Առաքելեան Կարո, Արդի հայերէնի քերականութիւն, Գ. գիրք, Պէյրութ, 1998:

⁹ Առաքելեան Կարո, Ֆրստրզճեան Աղանի, Դիրին հայերէն, Ա. գիրք, Բ. մաս, Պէյրութ, 2004; Գ. գիրք, Բ. հրատարակութիւն՝ բարեփոխուած, Պէյրութ, 2010:

¹⁰ Չոլաքեան Յակոբ, Անդաստան, Գ., Հալէպ, 2010:

րենաւանդ ուսուցիչ Մկրտիչ Մկրտիչեանն է. աշխատութիւնը լոյս տեսած է Հալէպ, 1995 թուականին. մեծ հաւանականութեամբ ա՛յս գիրքի երկրորդ կամ երրորդ հրատարակութիւնն է: Գիրքը իր 120 էջերով բարձրագոյն կարգի աշակերտներուն կը մատուցէ շարահիւսութեան թեմային առնչուող դասեր՝ օրինակներով եւ դասի համապատասխան վարժութիւններով, առանց հրապարակելու օգտագործուած գրականութեան ցանկը: Դժբախտաբար այս ուսումնական ձեռնարկը ծանօթ չէ ոմանց, ծանօթ չէ գիտական հանրութեան եւ աւելին՝ չէ դասաւանդուած Հալէպի կամ Սփիւռքի կրթօճաներէն ներս: 1995թ. փորձ կատարուեցաւ զայն մատուցելու Հալէպի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի բարձրագոյն կարգի աշակերտներուն, սակայն ձախողութեան մատնուեցաւ:

Մեր ուսումնասիրութեան թեման ընդգրող այլ հիմնահարցեր եւս կ'ուզենք նշել, որոնք նոյնքան առաջնահերթ կը համարենք:

Սփիւռքի համայնքներու կազմաւորման օրերուն հիմնուած կրթական հաստատութիւնները ոչ բոլորը Ազգային վարժարաններ էին, այլ այնտեղ սկսած էին գործել, մասնաւոր, միութենական եւ յարանուանական. Հայերէն լեզուի ուսուցումը կը կատարուէր վարժարաններու պատասխանատուներու կողմէ ներքին ծրագիրի հիման վրայ: Հայերէնի ուսուցման համար միատեսակ ծրագիր եւ դասագիրք գոյութիւն չէ ունեցած: Վարժարաններու բարձրագոյն բաժիններու մէջ գրականութենէ բացի ոչինչ կը մատուցուէր աշակերտներուն արեւմտահայերէնի շարահիւսութեան քերականական կառուցումաձեւին առնչուող. ուստի յետագայ լրագրողէն, կամ ուսուցչական պաշտօն վարող տարրական բաժինի հայերենաւանդ ուսուցիչէն ինչ կրնայինք ակնկալել:

1970-1980-ական թուականներուն Սփիւռք վերադարձան Հայերէնիքի Բարձրագոյն հաստատութիւններէն վկայեալ մեր հայ-

րենակիցներ, որոնք ոչ մեկ ճիգ խնայեցին իրենց աշխատանքով, իրենց դասագիրքերով սատար հանդիսանալ արեւմտահայերէնի պահպանման, բայց մնաց թերաւարտ:

Վերջին տարիներուն Հայաստանի մէջ եւս փորձեր կատարուեցան արեւմտահայերէնի կանոնակարգման նպաստող ուսումնական ձեռնարկներու եւ աշխատասիրութիւններու հրատարակութեանց. անոնք առաւելաբար շեշտը դրած էին հնչյունաբանութեան եւ ձեւաբանութեան վրայ: Այնտեղ շատ քիչ անդրադարձ կար շարահիւսութիւն թեմային վերաբերող.

Ուստի, «Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ աշխատանքը խիստ անհրաժեշտ է եւ այժմեական, քանի որ թեմային առնչուող մեր կողմէ կատարուած համակողմանի ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն ընձեռեցին առաւել մօտէն ծանօթանալու դասագիրքերու կառուցքուածին, հեղինակի մեթոտաբանութեան, լեզուի ուսուցման եղանակին եւ անոնց կիրառութիւնը առօրեայ բանաւոր եւ գրաւոր լեզուի վրայ:

Հետեւաբար, մեր ուսումնասիրութենէն կարելի է հետեւեալ եզրայանգումը կատարել.

1. Արեւմտահայերէնի պահպանութեան համար ե՛ւ Սփիւքի, ե՛ւ Հայաստանի մէջ յառաջացնել մարմին մը, որու պարտականութիւնն է գիտականօրէն քննել արեւմտահայերէնի դասագիրքերու կառուցուածքը, ընդգծել թերութիւններն ու առաւելութիւնները եւ հեղինակներու կողմէ չհիմնաւորուած քերականական որոշ երեւոյթները, որոնց քննարկումն ու վերամշակումը կրնայ ուղեցոյց հանդիսանալ առաջին հերթին Սփիւքի վարժարաններէն ներս դասաւանդող ուսուցիչի, կամ լրագրողին եւ այլ:

2. Վերոնշեալ ուղեցոյցի առկայութեամբ կատարուին քննարկումներ գիտական շրջանակներուն մէջ:

3. Կատարել Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի շարահիւսութեան գուգադրական քննութիւն:

4. Նախաձեռնել Արեւմտահայերէնի շարահիւսութեան նպաստող ուսումնական ձեռնարկի պատրաստութեան՝ Հայաստանի համալսարաններէն ներս հայրենի ուսանողին համար:

5. Պատրաստել ծրագիրներ, մանկավարժներ, ե՛ւ Սփիւռքի, ե՛ւ Հայաստանի կրթական հաստատութիւններէն ներս արեւմտահայերէնի դասաւանդման համար:

Fishenkjian Ani-«Syntax» topic in western Armenian textbooks.-

The topic "Syntax" is very necessary and up-to-date in Western Armenian language textbooks, because it has been little studied by philologists and linguists from a scientific point of view. Therefore, the main goal of our research is to study the presence or absence of the topic "Syntax" in Western Armenian (or Diaspora in general) textbooks, as well as the ways of teaching and presenting the subject.

Therefore, in order to preserve the Western Armenian language, it is necessary to scientifically study the structure of Western Armenian textbooks, to identify their shortcomings and merits, as well as some grammatical phenomena not substantiated by the authors, the discussion and processing of which can be a guide primarily for teachers in diaspora schools, as well as for journalists and others. .

Keywords: Diaspora, preservation of Western Armenian, classical structure, educational manual, methodology.

Фишпенкджян Ани-ТЕМА "Синтаксис". В западноармянских учебниках.- Тема «Синтаксис» в западноармянских учебниках очень

нужна и актуальна, потому что она с научной точки зрения мало изучена лингвистами и языковедами. Следовательно главной целью нашего исследования является изучение наличия или отсутствия темы «Синтаксис» в западноармянских (или вообще Диаспоры) учебниках, а также способы преподавания и подачи предмета.

Поэтому для сохранения западноармянского языка необходимо научное изучение структуры западноармянских учебников, выявить их недостатки и достоинства, а также не обоснованные авторами некоторые грамматические явления, обсуждение и обработка которых могут быть руководством в первую очередь для преподавателей в школах диаспоры, а также для журналистов и других лиц.

Ключевые слова: Диаспора, сохранение западноармянского языка, классическая структура, учебное пособие, методология.

**ԱՐԽՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ
ԱՆՄԻՕՐԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ***

Ա. ՔԱՐՏԱՇՅԱՆ

Գրական արևմտահայերենի հատուկ անունները գրեթե չեն ենթարկվում միասնական կանոնարկման:

Առաջնահերթ է գրական լեզվի երկու ճյուղերի ուղղագրության հարցերի գիտական կանոնարկումը:

Հաճախ բանավեճեր են մղվում՝ նպաստելու գրական արևելահայերենի և արևմտահայերենի ուղղագրական համակարգերի մերձեցմանը: Սակայն ուղղագրության բազմաձևություններ առկա են ոչ միայն արևելահայ և արևմտահայ տարբերակներում, այլև հենց բուն արևմտահայերենում կան ուղղագրական տարբերություններ: Նկատվող հնչյունական տարբերությունները խաթարում են լեզվական միասնականությունը: Այստեղ քննության նյութ ենք դարձրել մի շարք հատուկ անուններ, որոնք տարբեր գրություն ունեն: Դրանք զանգվածային լրատվամիջոցներում գործածված հատուկ անուններն են, որոնք ունեն գրության մի քանի տարբերակներ: Միյուրեքի տարբեր գաղթօջախներում հրատարակված հայերեն տեքստերը լի են տեղանուններով, օտար անձնանուններով, և անհրաժեշտություն է առաջանում դրանք տառադարձել հայերենով:

Արևմտահայ մամուլում հաճախ նույն հատուկ անունը տառադարձվում է տարբեր ձևերով՝ պայմանավորված օտար լեզվի

* Լույս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» մենագրության մեջ, Ե., 2015, «Ասողիկ», էջ 26-35:

սկզբնաղբյուրով: Այդ պատճառով էլ չկա ձևերի միօրինակություն, առաջանում են ուղղագրական գուգաձևություններ, նույնիսկ նույն լրագրում տվյալ հատուկ անունը գրության տարբեր ձևեր ունի՝ Կլենտելյ // Գլենտելյ – Ասպարեզ, Արժանդին // Արկենթինա – Վատիկանի ձայնասփյուռ, Շուէտ // Շուէտ – Ազատ օր:

Պետք է հաշվի առնել նաև այն գործոնը, որ արևմտահայերենում գրության երկակիությունը պայմանավորված է մի կողմից արևմտահայերենի բաղաձայնական երկշարք համակարգի գոյությանմբ, մյուս կողմից՝ հնչարտաբերության և գրադարձության առանձնահատկություններով: Արևմտահայերենում պարզ խուլերը դառնում են ձայնեղներ, բոլոր ձայնեղները, տեղաշարժ-տեղափոխություն կրելով, արտասանվում են որպես շնչեղ խուլ: Ստացվում է երկու կարգի շնչեղ խուլ՝ բուն շնչեղ խուլ և ձայնեղներից առաջացած շնչեղ խուլ: Սրանից էլ առաջանում է շնչեղ խուլ հնչյունների երկակի գրություն: Ինչպես (թավ տառատեսակով ներկայացվում են Սիրիայում գործածվող տարբերակները).

Արժանթին -Ազդակ 10.09.2013, Ասպարեզ 17.10.2013, Հայրենիք, Ազատ օր,

Երեբունի-հայկական անկախ լրատու

Արժանդին - Վատիկանի ձայնասփյուռ 21.09.2013

Արկենթինա - Վատիկանի ձայնասփյուռ 20.03.2015,

Գալիֆորնիա - Հայրենիք 27.09.2103, Նոր Յառաջ 30.10.2009

Քալիֆորնիա - Ասպարեզ 14.04.2011, Լրատու 06.09.2013,

Ճափոն - Ազդակ 15.11.2013, Լրատու 10.06.2013, Ասպարեզ 24.06.2010 Ճափոն – Մարմարա 11.11.2011, Լրատու 03.11.2012, Լրաբեր (Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պարբերական տեղեկատու), Վատիկանի ձայնասփյուռ 10.05.2011,

Պելճիգա - Ազատ օր 08.12.2011, Երեբունի-հայկական անկախ լրատու

Պելճիքա - Ասպարեզ 15.10.2013, Ազդակ 27.06.2012, Լրատու, Հայրենիք 06.03.2013,

Քանասա - Ազդակ 27.09.2013, Եռագույն (Hayastan) 22.11.2012, Ասպարեզ 02.07.2008, Հորիզոն 01.11.2013, Օրեր (Եվրոպական անկախ ամսագիր) 19.11 2013

Գանասա - Հայրենիք 23.10.2013, Լրատու 27.11.2013, Ասպարեզ 10.03.2012 Զարթոնք:

Ջուգաձևություններ առաջանում են հատկապես հետևյալ երկու դեպքում. ա) օ հնչյունի գրության ժամանակ, որը գրվում է նաև ո: Ինչպես՝

Լիզպոն - Ասպարեզ, Ազատօր, Հայրենիք

Լիզպօն – Ասպարեզ,

Լօզան -Ազատօր, Ասպարեզ, Հայրենիք

Լոզան – Ազատ օր, Ազդակ, Ասպարեզ, Հայրենիք,

Մթօքիոլմ - Ազատ օր, Ազդակ, Վատիկանի ձայնասփյուռ

Մթօքիոլմ - Ազատօր,

Սկովտիա - Վատիկանի ձայնասփյուռ 02.08.2012

Մքոթլանտ - Ազդակ 19.06.2011,

Ֆրեզնօ – Ասպարեզ, Ազատ օր

Ֆրեզնօ – Ասպարեզ, Ազատ օր:

բ) Է հնչյունի գրության ժամանակ, որը գրվում է նաև ե-ով, օրինակ՝

Բեթդեհեմ - Նոր Ջուղա , Եռագույն

Բեթդեհեմ-Վատիկանի ձայնասփյուռ, Ասպարեզ 29.12.2011,

Ինտոնեզիա - Լրատու 3.10.2013, Հայրենիք 7.11.2012, Վատիկանի ձայնասփյուռ 24.07.2009

Ինտոնեզիա - Ազդակ 08.08.2012, Ասպարեզ 09.08.2012,
Վատիկանի ձայնասփյուռ 2013.10.09, Ազատ օր 02.05.2013,
Արձագանք 7.02.2012,

Իսկէնտերուն – Հայրենիք, Լրաբեր, Լրատու Իսկէնտերուն -
Գեղարդ, Ասպարեզ 06.04.2011,

Լիւքսեմպուրկ - Ազատօր, Ասպարեզ, Հայրենիք

Լիւքսեմպուրկ- Ասպարեզ, Ազատ օր, Նոր Յառաջ
հոկտեմբեր 30. 2009,

Լոս Անճելըս - Ասպարեզ 09.12.2013, Ազդակ 08.11.2013

Լոս Անճելըս - 03.08.2012 Bolsohaysnews,

Հալէպ - Ազատ օր, Ասպարեզ, Վատիկանի ձայնասփյուռ,
Հայրենիք, Ազդակ

Հալէպ - Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ, Ազդակ,

Մոնթրէալ - Ազատ օր 21.07.2011, Զարթոնք, Հորիզոն
02.08.2013

Մոնթրէալ - Համազգային 05.2012,

Նորվեկիա - Ազդակ 15.06.2011, Ասպարեզ, Ազատ օր
13.05.2013

Նորուեկիա- Եռագույն 24.01.2013,

Նորվեկիա - Վատիկանի ձայնասփյուռ 26.05.2012

Շուէտ – Ազատ օր, Ասպարեզ, Վատիկանի ձայնասփյուռ,
Համազգային

Շուէտ – Ազատ օր,

Պրիւքսել - Ասպարեզ, Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ,
Հայրենիք, Ազդակ

Պրիւքսել - Ասպարեզ, Ազատ օր, Վատիկանի ձայնասփյուռ,
Հայրենիք, Ազդակ,

Պուքրէշ - Ազդակ, Ազատ օր, Ասպարեզ

Պուքրեշ - Ազդակ, Ազատ օր, Ասպարեզ: Զուգաձևություններ
ի հայտ են գալիս պարզ խուլի դեպքում, երբ արևմտահայերենը,
չունենալով այդ հնչյունը, բառը տառադարձում է կա'մ ձայնեղով,
կա'մ շնչեղ խուլով.

Ամաթերտամ - Ազատ օր, Հայրենիք, Ասպարեզ, Ազդակ

Ամստերտամ - Ազատ օր,

Գահիրե - Ազատ օր, Ասպարեզ, Ազդակ

Կահիրե - Ազատ օր,

Գլենտելլ - Ասպարեզ 09.12. 2013, Ազդակ 29.06.2013, Ազատ օր

Գլենտելլ - Ասպարեզ 03.09.2013: Զուգաձևություններ
ստացվում են նաև սուլական և շփական հնչյունների առկայության
դեպքում:

ա) Սուլականների դեպքում`

Թունուգ- Հայրենիք (շաբաթաթերթ), 1.09.2012, 18.09.2011,
Ազատ օր (օրաթերթ), Ազդակ (օրաթերթ) 20.03 2012

Թունիս - Լրատու 07.08.2013,

Ուելս - Ասպարեզ, Ազատօր, Հայրենիք

Ուելզ – Ասպարեզ:

բ) Շփականների դեպքում`

Միշիկըն - Ասպարեզ 15.07.2013, Հայրենիք 10.05.2013, Լրաբեր
(Պատրիարքութիւն Հայոց Կ. Պոլսոյ)

Միչիկըն - Վատիկանի ձայնասփյուռ 28.12.2009, Ազդակ
12.12.2012:

Զուգաձևություններ առաջանում են, երբ արևմտահայերենը
փորձում է պահպանել մի դեպքում սկզբնաղբյուրի գրության, մյուս
դեպքում այդ բառի հնչման ձևը.

Ազրպեյճան – Լրատու, հոկտեմբեր 02, 2013, Հորիզոն, օգ. 13,
2013, Զարթոնք, Լրատու

Ատրպեյճան - Ազատ օր 11.04.2012, Ասպարեզ 10.12.2013,
Մարսել - Ասպարեզ 27.01.2012, Ազատ օր 27.01.2012, Ազատ
օր 08.10.2013, Եռագույն 27.01.2013

Մարսել - Ազդակ 03.03.2012, 04.10.2013, Արձագանք 09.12.2011,
Միննիս - Ասպարեզ, Ազդակ, Վատիկանի ձայնասփյուռ
Միննիս - Ասպարեզ, Եռագույն,

Պարսելոնա - Ազատօր, Ասպարեզ, Ազդակ, Արձագանք
Պարսելոն - Ազատ օր,

Պոսթըն - Հայրենիք 14.11.2013 Ազդակ 06.08.2013, Ասպարեզ
06.07.2011, Լրատու, Ազատ օր

Պոսթոն - Վատիկանի ձայնասփյուռ 01.11.2013, Հորիզոն
04.12.2013,

Ուրուկուայ - Հ.Յ.Դ բիրոյի պաշտօնական կայք 26.10.2013
Ուրուկուէ - Ազդակ 19.09.2013, Ասպարեզ 16.11.2012, Երեբունի-
հայկական անկախ լրատու,

Փարակուայ - Հորիզոն, Հայրենիք 24.10.2013, Ազատ օր
26.07.2012

Փարակուէ-Ասպարեզ 21.07.2011, Ազդակ 22.07.2011,

Քուպա - Ասպարեզ, Ազդակ, Ազատ օր, Հայրենիք

Քիւպա - Ասպարեզ, Ազատ օր:

Անձնանունների պարագայում, ըստ սիրիահայերի վկայու-
թյունների, տարբերակներից մեկին կամ մյուսին հստակ գերա-
պատվություն չի տրվում: Մամուլում զուգաձևություններ նկատվել
են նաև իգական և արական անուններում:

Իգական անուններ՝

Գայիանէ - Գայեանէ

ԱնոյՉ - ԱնուՉ

Եսթեր - Եսթեր

Զապել - Զապել
Էլմաս - Էլմաստ - Էմասթ
Ժանեթ - Ժանեթ
Մատլեն - Մատլեն
Ովսաննա - Օվսաննա
Վալենտինա - Վալենթինա - Վալանթին
Վերժինե - Վըրժինիա - Վերժին
Օլգա - Օլկա
Արական անուններ՝
Ադեքսանդր - Ադեքսանտր
Անտրե - Անդրե
Արթուր - Արթիր
Եդուարդ - Էդուարդ
Ժագ - Ժաք
Շահեն - Շահեն - Շահե
Փիլիպոս - Փիլիպպոս
Փոլատ - Փոլադ

Մամուլում և բառարաններում նկատելի են հատուկ անունների զուգաձևություններ¹

Եղիսաբեթ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992)

Եղիսաբեթ («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)

Մարկոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուֆ, 1992)

Մարկո («Բառգիրք Հայերեն Լեզուի», Պէյրուֆ, 1998)

¹ Բառարաններում նկատված երկակիության օրինակները մեզ տրամադրել է սիրիահայ չ. Մարաշլյանը:

- Մարոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Մարօ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Նարգիզ, Նարգիս («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Նարկիս («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Պեթթի («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Պէթի («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Ռաքէլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Ռաքէլ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Սոնա («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992, «Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Սօնա («Գործնական Բառարան», Երեւան, 2010)
- Վարդիթեր («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Վարդիթեռ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Վերոնիկէ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992)
- Վերոնիքա («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Ալպեր - «Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992
- Ալպեր («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)
- Արեգ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –
- Արեգ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998) - Արեգ («Գործնական Բառարան», Երեւան, 2010)

Արմեն - «Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992, «Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998

Արմեն - «Գործնական Բառարան», Երևան, 2010

Մելիքսեդէկ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Մելիքսեդէկ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)

Յարէթ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Յարէթ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)

Յարոյ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Յարօ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998) - Յարօ («Գործնական Բառարան», Երևան, 2010)

Նիկոլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992, «Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)

Նիկօլ («Գործնական Բառարան», Երևան, 2010)

Շարայ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Շարա («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)

Սաղաթիէլ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Սաղաթէլ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998)

Սերճ («Հայոց Լեզուի Նոր Բառարան», 2րդ հատոր, Պէյրուս, 1992) –

Սերժ («Բառգիրք Հայերէն Լեզուի», Պէյրուս, 1998) ճ-ով մի անգամ Գանձասարում

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում դարձվածային միավորները: Սիրիահայերի դարձվածային արտահայտու-

յուններում նկատելի են տարբերություններ գրական արևելահայերենի համեմատությամբ:

Այստեղ քննել ենք սինեկդոխիկ դարձվածքներ, որոնք հիմնականում կազմվում են մարմնի մասերի անվանումներից:

Հազարավոր սինեկդոխիկ դարձվածքներ են ստեղծվել այք, ականջ, բերան, սիրտ, քիթ, ոտք, ձեռք բաղադրիչներով:

Միրիայի արևմտահայերենում մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքներն ունեն տարբերակիչ հատկանիշներ, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) դարձվածային միավորներ, որոնք երկու տարբերակում էլ՝ թե՛ արևմտահայերենում և թե՛ արևելահայերենում ունեն նույն կամ մոտ իմաստը (բաղադրիչ բառերի տարբերությամբ), ինչպես՝

այքդ ելլե - այքդ դուրս գա,

այքդ գոցես - բանաս - այքդ բացես-փակես,

այքին իյնալ - այքի ընկնել, այքի զարնել,

այքերը ետև մնալ – այքը ճանապարհին մնալ

սիրտը պարպել - սիրտը դատարկել,

սիրտը կոտտալ -սիրտը կսկծալ, սիրտը մոմռալ

ակռաները խաճնել - ատամները կծել, ատամները սեղմել,

քիթէն անդին չտեսնել - քթից այն կողմ չտեսնել,

ձեռքը չերթալ - ձեռքը չգնալ²:

բ) Յուրօրինակ դարձվածային միավորներ, որոնք միայն արևմտահայերենում են գործածվում, սակայն դրանց մի մասը արևելահայերենում գործածվում են հոմանիշ կամ այլ ձևերով: Դարձվածքներ, որոնք խոսքը դարձնելով պատկերավոր՝ ստեղ-

² Արևմտահայ դարձվածքների օրինակները ճշտված են Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանի» դարձվածքների հետ (տե՛ս գրականության ցանկը):

ծում են հաղորդակցման իրավիճակի, միջավայրի որոշակի երանգավորում. դրանցում արտահայտվում է այդ լեզուն կրող ժողովրդի պատմությունը, աշխարհընկալումը: Ինչպես՝

աչք առնել - նկատի ունենալ

աչքէ անցընել - հայացք գցել

աչքը անուշցնել - հաճելի երևալ

աչքը ունքը կը խաղայ - հրապուրիչ շարժումներ ունենալ

աչքին գալ - նկատվել, երևալ,

աչքին չառնել - բանի տեղ չդնել

ականջե ականջ անցնիլ – մեկը մյուսին (գաղտնի) լուր տալ

ականջէն կախուիլ - ձանձրացնել, ականջին թթվել

ականջ տալ - ականջ դնել,

ակռայէն կտրել - խնայողություն անել, բերանից կտրել

մեկուն քիթէն-բերնէն գալ - քթից գալ

մեկը ոտքէն գլուխը լուալ՝ օծել - սաստիկ հանդիմանել

ձեռքէ ելլել – կորչել, ձեռքից գնալ

սիրտը գէշ ըլլալ - վատ գգալ

քիթը փրթիլ - զարշահոտությունից նեղվել

քիթին չդնել – չհավանել, բանի տեղ չդնել

քիթ քթի ըլլալ - դեմ առ դեմ հանդիպել,

քիթ բերան ընել – դժգոհել, մտութ անել

Արևմտահայերենը չէր կարող զերծ մնալ օտար լեզուների ազդեցությունից: Միրիայի արևմտահայերենի ժողովրդախոսակցական տարբերակում առկա է արաբերենի ազդեցությունը: Միրիահայերը գործածում են արաբերենից բառացի պատճենված դարձվածքներ, ինչպես՝

Գլխուն վրայ փետուր ըլլալ. այսինքն՝ ինչ-որ բանով մեկը տարբեր է մյուսներից: Օրինակ՝ «Ինչո՞ւ իրեն պիտի ընդունինք,

իսկ միւսներուն՝ ոչ, գլխուն վրայ փետո՞ւր կայ»: Կամ՝ «Գլխուն վրայ փետո՞ւր կայ, որ հետը ուրիշ ձեւով վարուինք»: Այս դարձվածքը, որն արտահայտում է ընտրյալ, արտոնյալ լինելը, իր հոմանիշն ունի հայերենում՝ «վերին արտի ցորենը լինել»:

Մամային/պապային ելեր է (طاعة لأمها) (ինչ որ բաներով մօրը/հօրը նման լինել): Այս դարձվածքը հոմանիշ է արևելահայերեն «մամային, մամային կամ պապային է քաշել» դարձվածքին: Ինչպէս՝ «Խելացի եւ գեղեցիկ աղջիկ է, մամային ելեր է» (մամային է քաշել): Արաբերենից պատճենված այս դարձվածքը բավականին տարածված է սիրիահայերի մոտ:

Պապայի բան մը ընել (խօսիլ, աշխատիլ) (على الفاضي على تحكي لا) (فاضي) գուր խօսիլ, անարդյունք աշխատել: Օրինակ՝ Պարապի կը փորձես զինք համոզել, զէյթունցի է: Կամ՝ Պարապի մինչեւ Երուսաղէմ գնաց, խելքը չմեծցավ:

Վրան նայիլ. արաբերենից պատճենված այս դարձվածքի արևմտահայերեն հոմանիշն է «վրան նստել», այսինքն՝ արժենալ: Ինչպէս՝ «Վրադ քանիի՞ նայեցաւ այս ժամացոյցին նորոգութիւնը»: Կամ «Տունին կահ-կարասին փոխելը քանիի՞ կը նայի»:

Ս. ՏԻՈՅԱՆ

Ժամանակակից հայերենում¹ գոյություն ունի նախածանցավոր-վերջածանցավոր բառերի սերման երեք հնարավոր ուղի (նկատի է առնվում սերման վերջին տակտը համաժամանակյա քննությամբ)։

1. ն + (Հ + վ) օրինակ՝ արտա+ առանցքային, ապա + կողմնորոշում, ենթա + բևեռային, հակա + հարձակում, նախա + գրային և այլն,

2. (ն + Հ) +վ օրինակ՝ արտատպել + ում/ություն, ենթամաշկ + ային, ապերջանիկ + ուություն, վերահսկող + ուություն և այլն,

3. ն + (Հ) +վ օրինակ՝ ստոր + գետն + յա, ստոր + ջր + յա, ընդ + ջր + յա, առ + ափն + յա, ապ + օրին + ի և այլն։

Այստեղ, իհարկե, մի ուղի էլ կա, որ բերում է բազմապատճառաբանվածության, երբ հնարավոր չէ, ինչպես վերը բերված դեպքերում, ստույգ նշել բառակազմական գործընթացի ուղին՝ կովկաս → անդրկովկաս → անդրկովկասյան, թէ՛ կովկաս → կովկասյան → անդրկովկասյան²։

Նշված երեք ուղիներից երրորդին աղբյուրաբան է Ռ.Ս. Մանուչարյանը՝ դեռևս 1981 թվականին լույս տեսած «Բառակազմական ձևերն ու իմաստները ռուսերենում և հայերենում»

* Լույս է տեսել «Գիտական հոդվածների ժողովածուում»՝ Նվիրված Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին, Ե., 2016, էջ 367-377։

¹ Ժամանակակից հայերեն ասելով նկատի ունենք արդի գրական հայերենի երկու տարբերակները։

² Սրան մենք նվիրել ենք մենագրություն՝ «Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում» վերնագրով, Ե., 2013։

մենագրության մեջ, որտեղ նշված երկու լեզուների գուգադիր քննությամբ պարզել է. որ համաձանցումը, որպես բառակազմական միջոց, հայերենին հատուկ չէ, այլ ռուսերենի ազդեցության հետևանք է, սակայն նա, այդուհանդերձ, գրում է, որ բառակազմական հետևողական ուսումնասիրությամբ հայերենի մի շարք կազմություններ կարելի է մեկնաբանել հենց որպես համաձանցավորներ: Այդպիսիք են, օրինակ, *անդր - ծով - յան, անդր - ցրհեղեղ - յան* ածականները, քանի որ ժամանակակից հայերենում բացակայում են *ծովյան, ցրհեղեղյան կամ անդրծով, անդրցրհեղեղ* բառերը. սրանց շարքին կարելի է դասել *ստոր - երկր -յա, ստոր - ցր - յա , արտա - ժամ - յա* ածականները, ու թեև գոյություն ունի *արտաժամ* բառը, սակայն վերջինս, ըստ Ռ. Մանուչարյանի, ելակետային չի կարող համարվել տվյալ ածականի համար, քանի որ դրա բառային և քերականական կրկնօրինակը կա: Հատուկ ուշադրության են արժանի *ան-* նախածանցով՝ բայերից սերված բազմաթիվ ածականները՝ *ան - թառամել - ի, ան - մոռանալ - ի, ան - խուսափել - ի* և այլն, որոնց դեպքում գոյություն չունեն ինչպես ածանցավոր ածականները՝ *լռելի, թառամելի, խուսափելի*, այնպես էլ նախածանցավոր բայերը՝ *անթառամել, անմոռանալ, անխուսափել* և այլն³:

Արևմտահայերենում նման համաձանցավորները բազմաթիվ են. միայն *ան-* նախածանցով սկսվողներից են՝ *անդրդվուելի, անդառնալի, անիմանալի, անլռելի, անխզելի, անկապտելի, անճառելի, անորակելի, անպարտելի, անքակտելի* և այլն⁴:

³ Манучарян Р.С. Словообразовательные значения и формы в русском и армянском языках, Е.,1981, стр. 102-103.

⁴ Տե՛ս Ա. Կոստեան, Բառգիրք հայերեն լեզուի, Պէրոթ, 1998, էջ 22, 23, 24՝ հանապատասխանաբար:

Լ. Հովսեփյանը, հանգամանորեն ուսումնասիրելով գրաբարի բառակազմությունը, նույնանուն իր մենագրության «Խառը տիպի կաղապարներ» բաժնում գրում է. «...գրաբարի բառակազմական համակարգում հանդիպում են և այնպիսի կառույցներ, որոնք հնարավոր չէ միանշանակ կերպով հատկացնել բարդ կամ ածանցավոր (վերջիններիս դեպքում՝ նախաձանցավոր կամ վերջաձանցավոր) կաղապարների թվին, քանի որ բառակազմական քայլերի հաջորդականություն, որպես այդ-պիսին, այդ կազմություններում չի դիտարկվում: Այդ կառույցներն առաջացել են բաղադրիչների միաժամանակյա կցումով՝ բառակազմական մեկ քայլի ընթացքում, որի հետևանքով ստացվում են բուն իմաստով բարդ ածանցավոր կամ նախաձանցավոր-վերջաձանցավոր բառեր: Այս տերմինը տվյալ դեպքում արտացոլում է ոչ միայն բաղադրիչների ձևային կազմը (աձանցների և մեկից ավելի արմատական ձևայինների առկայություն), այլև նրանց հավասարությունը՝ հաջորդականության բացակայության առումով»⁵: Ապա տալով խառը տիպի կաղապարների երկրորդ տեսակի՝ նախաձանցավոր-վերջաձանցավոր կազմությունների տարատեսակությունը, բերում է ուսումնասիրության իր ընտրանքի բոլոր դեպքերը. նշենք դրանցից մի քանիսը. aSa՝

ան - ... - եայ անաչեայ, անգեղեայ

առ - ... - եայ առօրեայ

ստոր - ... - եայ ստորերկրեայ

տ - ... - ի տմարդի⁶ և այլն, ապա ներկայացնում է խառը տիպի կաղապարները՝ նշելով, որ «...դրանք կառուցվածքային

⁵ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմություն, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987թ, էջ 287-288:

⁶ Նույն տեղում, էջ 294:

տեսակետից զգալի բազմազանություն են ներկայացնում, սակայն նրանց կոնկրետ իրացումները շատ մեծ չեն և մեծ մասամբ վկայված են մեկ - երկու օրինակներով ... և կազմում են վերջածանցման կաղապարների ընդամենը 3,3 տոկոսը»⁷:

Այսինքն, մեր լեզվի զարգացման դեռևս գրաբարյան ժամանակաշրջանում բառակազմական համաձանցման գործընթացը, ի թիվս այլ ուղիների, առկա է եղել հայերենի համար (թեկուզ մի տասնյակի հասնող օրինակներով), այն ռուսերենի ազդեցության հետևանք չէր կարող լինել, ինչպես փաստել է Ռ. Մանուչարյանը. այլ ինդիք է, թե անձանցական շատ գործընթացներ և կաղապարներ ինչ չափով են արգասավոր, կամ անարգասավոր:

Համաձանցման օրինակները վկայված են նաև Գ. Բ. Ջահուկյանի, Ս. Ա. Գալստյանի, ինչպես նաև Ֆ. Հ. Խլղաթյանի բուհական ձեռնարկում (տե՛ս գրակա-նության ցանկը):

Գ. Բ. Ջահուկյանը իր՝ «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքի «Տարասեռ կաղապարներ» բաժնում գրում է. «... բայահիմքերից անձանցված բառերի երեք առաջնային կաղապար ունենք՝ գոյականական, անձանցական և մակբայական.

(1) V (s)

(2) (a1) V (a2)

(3) V (av)

Կաղապարային a1 բաղադրիչն իրանում է ի մասնավորի անմասնիկի օգնությամբ և հաճախ հանդես է գալիս a2 անձանցի հետ միացած, այսինքն՝ a1V տիպը փաստորեն հավասարագոր է a1Va2 տիպին և, ինչպես կտեսնենք, հաճախ արտա-հայտվում է հենց նրա իրացումներով ... Հայերենում շատ տարածված է a1Va2 տիպի

⁷ Նույն աշխատությունը, էջ 295:

ան - V - ալի / ելի նախածանց - վերջածանցավոր իրացումը՝ **անդառնալի, անխմանալի, անլռելի, անլուծելի** և այլն»⁸, իսկ մյուս բաժնում, գոյականական հիմքերից ածանցվող բառերի տարասեռ կաղապարների մասում գրում է. «Նախածանցների՝ գոյականական հիմքերի մոտ գործածվելու երկակի բնույթը հիմք է տվել այն բանի համար, որ բուն ածականներ կերտելու համար հաճախ գործածվում են ածակա-նական վերջածանցներ՝ ածականական արժեքը շեշտելու համար. ստացվում են յուրատեսակ նախածանց - վերջածանցավոր հատուկ կազմություններ՝ a2Sa3 կաղապարով, ինչպես վերևում հիշված **առափնյա** բառի դեպքում. հմմտ. նաև անդր - յան, (անդրկասպյան, անդր-կուլիսյան, անդրշիրիմյան, անդրսիբիրյան և այլն, որ կազմված է Անդրկովկաս - ից), արտ - յա (արտաժամյա), գեր - ային (գերատոմային), հակա - ական (հակառազմական), հակա - ային (հակադեսանտային), համ - ային (համաշխարհային), հետ - յա (հետ-ճաշյա), միջ - ային (միջազգային, միջառդային, միջքաղաքային), միջ - յա (միջերկրյա), ներ - ային (ներատոմային, ներմիջուկային, ներքաղաքային), ներ - յա (ներգետնյա), ստոր - յա (ստորգետնյա, ստորերկրյա), վեր - ային (վերաստդային, վերգերեզմանային, վերերկրային), վեր - յա (վերգետնյա):

a1Va2 տիպի ան - V - ալի / ելի նախածանցավերջածանցավոր կաղապարը արևմտա-հայերենում նույնպես շատ տարածված է՝ **անդրդվելի, անխուսափելի, անդառնալի, անխմանալի, անլռելի** և

⁸ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., էջ 174 – 175:

այլն»⁹, բոլորն էլ ածականներ: Ինչպես տեսնում ենք, հստակորեն տարանջատված են համաձանցման կաղապարները:

Ինչպես վերը նշեցինք, հարցը հանգում է բառակազմական այդ կաղապարի՝ արդի հայերենում արգասավոր լինելուն կամ չլինելուն: Վերջին մտքին է հակված Ս. Գալստյանը, գտնելով, որ «Հետևողական մոտեցման դեպքում պետք է ընդունել, որ ժամանակակից հայերենում առկա են ածանցավոր բառերի բառակազմական կառուց-վածքային հետևյալ երկու տեսակները՝ ա. նախաձանցավոր (ան-տուն, չ-կամ, համա-գոր և այլն), բ. վերջաձանցավոր (տն-ային, կամ-ավոր, տեր-ույթուն և այլն) ... և որ ածանցման յուրաքանչյուր գործողության ընթացքում ունենք նախատիպ-աձանց (նախաձանց կամ վերջաձանց) կաղապարը: Իրենց կազմում միաժամանակ և՛ նախա-ձանց, և՛ վերջաձանց միաժամանակյա բաղադրում, երբ հիմքը ստանա և՛ նախաձանց, և՛ վերջաձանց, հնարավոր չէ: Նախաձանցի և վերջաձանցի միաժամանակյա բաղադրում՝ «նախաձանցավերջաձանցավոր» անվանումները ձևույթային մակարդակի ձևակերպումներ է համարում ... և կարծում, որ «այդ տերմինների օգտագործելը ... սխալ պատկերացում է ստեղծում ժամանակակից հայերենի բառակազմության մասին՝ նրան վերագրելով չեղած բառակազմական միջոց միաժամանակ նախաձանցի և վերջաձանցի հավելում»¹⁰:

Լ. Հովսեփյանը վերը հիշատակված իր գրքում նշում է, որ այդ միջոցը ժամանակակից հայերենի համար դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ, և որ թեև սակավ, բայց ժամանակակից հայերենում էլ կան այդ տիպի կառույցներ՝ **ստորերկրյա**,

⁹ Տես Ա. վ. Կռանեան, Բառգիրք հայերեն լեզուի, էջեր՝ 22, 24, 21, 23, 24՝ համապատասխանաբար:

¹⁰ Ս.Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, դոկտ. դիս., էջ 61, 70 և 77:

ընդծովյա, առճակատում, առափնյա և որոնց համար նշված տեր-միներն կիրառումը լիովին արդարացված է»¹¹ :

Ի դեպ, այս նույն և նմանատիպ օրինակներն է բերում Ս. Գալստյանն իր գրքում՝ խոսելով ստոր(ա)- ածանցով բաղադրությունների մասին. «... Նոր բաղադրությունները, որոնց մեծամասնությունը ածականներ են, կազմվում են ստոր - տարբերակով գոյական նախատիպերից ստոր-(... - յա) մասնակաղապարով և ցույց են տալիս «նախատիպերից ներքև, տակը գտնվող, ինչպես ստործովյա, ստորերկրյա, ստորգետնյա, ստորլճյա, ստորջրյա և այլն»¹² :

Այժմ հայերենում տարածված բառակազմական այս ուղին՝ համաձանցումը, դիտարկվում է նաև բուհական դասագրքերում. այսպես, Ֆ. Խլղաթյանը բուհական իր ձեռնարկում, հստակեցնելով բառաձանցման տեսակների դասդասումը, համա-ձանցման մասին գրում է. «Աձանցավոր բառակերտման ձևերից է համաձանցումը, երբ աձանցյալ բառն ունի թե՛ նախաձանց, թե՛ վերջաձանց: Խոսքը ոչ թե աձանցների մի յուրահատուկ տեսակի մասին է, այլ դիրքային տարբեր աձանցների համատեղ գործածությունը: Նման կազմություն ունեցող բառերի մի մասի բառակազմական հիմքը նախաձանցավոր ձևն է, մյուսինը՝ վերջաձանցավոր: Կան դեպքեր, երբ այդ հիմքը բառարմատն է կամ հիմնական ձևույթը (ստորջրյա, »ստորգետնյա, հետճաշյա): Չկան ո՛չ ստորջր, ո՛չ ջրյա կամ ստորգետն և գետնյա բառեր, որոնց վրա նոր աձանց ավելացվի:

Համաձանցավոր բառեր են.

միջ - գերատեսչ - ական, միջ - մայցամաք - ային, մերձ - մոսկով - յան, մերձ - արևադարձ - ային, նախ - ընտր - ական, նախ -

¹¹ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմություն, նույն տեղը:

¹² Ս. Գալստյան, Աձանցներն ու աձանցումը ժամանակակից հայերենում, էջ 231:

ա - տոն - ական, արտ - ա - հաստիք - ային, արտ - ա - դաս - արան - ային, արտ - ա - սահման - ային, արտ - ա - լեզվ - ական, արտ - ա - սահման - յան, նախ - ա - պատերազմ - յան, անդր - կովկաս - յան»¹³: Օրինակների թվարկումից իսկ պարզ է դառնում, որ նշված շարքում են ինչպես բուն համաձանցման դեպքերը (նախա - պատերազմ - յան), այնպես էլ նախաձանցավերջա-անցավոր այլ բառակազմական կաղապարների վկայություններ՝ (ն + հ)+վ և ն+ (հ + վ). առաջին տեսակի օրինակներից են արտասահման - յան, անդրկովկաս -յան, իսկ երկրորդի՝ արտա - դասարանային, նախ - ընտրական և այլն, այսինքն՝ դրանք հստակ տարբերակված ու դասադասված չեն:

Այսպիսով, կարող ենք փաստել համաձանցման օրինակներից հետևյալները.

1. անդր+ ծով+ յան
2. անդր + ջրհեղեղ+ յան
3. անդր+կուլիս+յան
4. անդր+շիրիմ+յան,
5. անդր + սահման + ային
6. առ + ափն + յա
7. առ+ճակատ+ում
8. առ+օր+յա
9. ապ + օրին + ի
10. նախա+պատերազմ+յան
11. ստոր+ջր+յա
12. ստոր+գետն+յա

¹³ Ֆ. Խլղաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Ա մաս, Ջանգակ - 97 հրատ., Ե., 2009, էջ 273:

13. ստոր + երկր+յ ա
14. ստոր + ջրհեղեղ + յա
15. վեր+գետն+յա
16. ներ+գետն+յա
17. միջ+երկր+յա
18. վեր+ երկր+յա
19. հետ+ճաշ+յա
20. համ+աշխարհ+ային
21. ընդ+ծով+յա
22. ընդ+երկր+յա
23. ստոր-լճ-յա

24. ընդ + ջր + յա, որոնց շիրիմյան, անդրշիրիմ, վերգետին, ստորգետին, գետնյա, ջրյա, ճաշյա, անդրսահման, առափ, անդրկուլիս, սահմանային բաղադրիչները բառարաններում արձանագրված չեն:

Համաձանցավոր կազմությունները հատկապես տարածված են նորակազմությունների և նոր բառերի բառարաններում, արևմտահայ աշխարհաբարի եզրաբա-նական խորհրդի կողմից կազմված ուղեցույցներում (տե՛ս գրակ. ցանկը). ահա մեկ օրինակ Արևակ-ից.

... Ախր խոսքը գնում է ոչ թե ինչ-որ **անդրերկրային**, միաստիկ կամ առասպելական, այլ այն նույն ոստիկանների մասին, որոնց հետ մեզնից յուրաքանչյուրն առնչվում է ամեն օր: «Հրապարակ», համար 155, 16 օգոստոսի, 2011թ., էջ 5: Ընդգծված օրինակը սերված է անդր + (երկր + ային) կաղապարով, որի ***անդրերկրյա** նախաստիպը գոյություն չունի լեզվում:

Դուրս բերված գրեթե բոլոր կազմություններն ընդհանուր են հայերենի երկու գրականներում էլ, ավելին, դրանց թիվն

արևմտահայերենում ավելի մեծ է, սակայն խնդիրն այն է, որ բառակազմական այդ երևույթը ոչ հայրենական արևմտահայագետների, ոչ էլ արևմտահայերենի մեր բաժնի արտասահմանյան խմբի լեզվաբանների կողմից ոչ միայն ուսումնասիրված, այլև երբևէ շոշափված չէ: Մինչդեռ մեր ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բաղադրյալ այդ կազմությունները լայն տարածում ունեն արևմտահայերենում, ավելին, իմաստային մանրակրկիտ ուսում-նասիրության աղերս ունեն, քանի որ համաձանցավոր այդ բառերը զարգացման ուրույն ուղի են անցել և միանգամայն այլ պատկեր են ներկայացնում: Բերենք ընդամենը մեկ-երկու օրինակ. **ընդ-ծով-ա** բառը, ըստ Ա. Վ. Կռանյանի¹⁴, երկու ձևաբանական բնութագրեր ունի. 1.գ, որ նշանակում է **սուզանավ**, այսինքն՝ ածականաձև գոյական է և 2. ած, որ **ծովի տակը եղող** իմաստն ունի, **վեր-երկր-յա** գ, վկայված չէ Ա. Կռանյանի բառարանում, օգտագործվում է որպես անվանում վերերկրյա թռչող սարքերի: Այն արևելահայերենում ածական է՝ երկրի երեսին գտնվող, տեղի ունեցող իմաստով¹⁵:

Չկամություն համաձանցավոր բառի **չկամ** բաղադրիչը թեև վկայված է Ա. Կռանյանի բառարանում, սակայն անգործածական է՝ ըստ արևմտահայերենը կրողների վկայությունների (այլև Արևակի տվյալների 633 օրինակներում հանդիպում է **չկամ** ժխտական ձևով՝ *ես չկամ*):

Տմարդի, վերելակ և բազմաթիվ այլ համաձանցավոր կազմություններ ուսումնասիրության աղերս ունեն:

¹⁴ Ա. Վ. Կռանեան, Բառգիրք հայերեն լեզուի, էջ 130:

¹⁵ Էդուարդ Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Մանամար, Ե., 2014, էջ 1170:

Այսինքն, բառակազմական նշված երևույթը եղել է և կա արևմտահայերենի ձևաբա-նության մեջ, ավելին, այն հատուկ է արևմտահայերենին, վկայված է բազմաթիվ օրի-նակներով, և դրանցից յուրաքանչյուրն իմաստային առանձին վերլուծության կարիք ունի:

Сусанна Тиюян - Конфигкация в западноармянском языке.-В настоящей статье впервые рассматривается такое словообразовательное явление, как конфигакация, которое до сих пор не становился объектом изучения на материале западноармянского языка.

Те исследования, которые были проведены в восточноармянском языке, дают основания утверждать, что конфигакация является довольно продуктивным и распространенным способом словообразования.

Оно достойно внимания и детального изучения на материале западноармянского языка.

Susanna Tiojan- The confixation in the Western Armenian language.-The article is an attempt to introduce a formative phenomenon specific to Western Armenian language, that is to say confixation, which has not been studied earlier. The pros and cons of the study in the Eastern Armenian language are sufficient to ensure that confixation is present in both branches of Armenian language. This is a quite prolific and popular formative process that needs individual approach and thorough study in the Western Armenian language.

Գրականության ցանկ

1. Ս.Գ.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1981:
2. Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:3.
3. Է. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Մանմար, Ե., 2014:
4. Է.Բ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., Պետ. համ. հրատ., Ե., 1984:
5. Մ.Ե.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանության, Եր., համ. հրատ., Ե., 2002:
6. Ս.Ա.Գալստյան, Ածանցները և ածանցումը ժամանակակից հայերենում, դոկտ. դիս., Ե., 1986:
7. Ս.Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, դոկտ. դիս., Ե. 1986:
8. Ս.Գալստյան, Ածանցներն ու ածանցումը ժամանակակից հայերենում, Եր. Պետ. համ. հրատ., Ե., 1978թ.
9. Դ. Գյուրջինյան, Արդի հայերենի նախաձանցակերպները, «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», պրակ Ա, Ե., 1998:
10. Դ. Գյուրջինյան, Արդի հայերենի վերջաձանցակերպները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2, Ե., 1998:
11. Օ. Ա. Գրիգորյան, Բառի պատճառաբանվածությունը և իմաստային զարգացումը (ռուսերենի նյութի հիման վրա), ՀՀ ԳԱ հրատ., Ե., 1991:
12. Ս.Ա. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի», Ե., 2002:

13.Ս.Ա. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1963:

14.Լ.Մ.Խաչատրյան, Տեղաշարժերը բառերի ձևաբանական իմաստի մեջ, «Լրաբեր հաս. գիտ.», Ե., 1985:

15. Ա. Վ. Կռանեան, Բառգիրք հայերեն լեզուի, Շիրակ հրատարակչատուն, Պեյուք, 1998:

16. Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987թ

17.Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, «Համազգային», Ե., 2005:

18.Գ.Բ.Ջահուկյան, «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974:

19.Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

20.Գ.Բ.Ջահուկյան, Է.Բ.Աղայան, Վ.Դ.Առաքելյան, Վ.Ա.Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, «Լույս», Ե., 1980:

21.Գ.Բ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

22.Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»), ԲԵՀ, Ե., 1975, 3:

23.Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի արմատական ածականների իմաստային վերլուծություն, ԲԵՀ, Ե., 1985, 1:

24.Գ.Բ.Ջահուկյան, Բայի կառուցվածքային բաղադրիչների իմաստային վերլուծություն, ԼՀԳ, Ե.,1986, 1:

25.Ֆ.Հ. Խլղաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս, Ջանգակ - 97 հրատ., Ե., 2009:

26. Ս.Տիոյան, Արմատական ածականների բառակազմական ներուժը, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն (Գիտական աշխատություններ), Պրակ Զ, Լինգվա, Ե., 2008Է

27. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969-1980:

28. Манучарян Р.С. Словообразовательные значения и формы в русском и армянском языках, Е., «Луйс», 1981.

29. Словообразовательный словарь русского языка, 1-2, М., 1985:

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ***

ՀԱՐՈՒԹ ՄԱՐԱՇԼՅԱՆ

Բանալի բառեր. արևմտահայերեն, բառարան, բառիմաստի քննություն, նորաբանություն, համընդհանուր լեզվաբանական տեսության, լեզվաբանական կարգեր, գոյորոշ եւ առգոյորոշ կարգեր, բառաձանցում:

Նախաբան

Անցյալ տարի լույս տեսած արևմտահայերենի նորաբանությունների բառարանի¹ ընդգրկած բառապաշարը այս հայեցակետով՝ իմաստաբանական, չի քննվել առ այսօր, ուստի այս հոդվածը նպատակ ունի նախ՝ Գ. Ջահուկյանի մշակած իմաստաբանական և բառակազմական տեսական միասնական սկզբունքների հիման վրա քննելու հիշյալ բառարանի բառամթերքը՝ մասնավորապես ածանցավոր բառերի իմաստային բնութագրումը և կազմությունը, ապա, այդ քննության արդյունքները նկատի ունենալով, նպաստելու նոր բառերի (արևմտահայերեն և արևելահայերեն) իմաստային ճշգրիտ բնութագրման և կազմության բազմազանությանն ու գիտական հիմնավորվածությանը:

Նորակազմ բառերի իմաստաբանական քննություն ասելով՝ նկատի ունենք համընդհանուր լեզվաբանական տեսության մշակած կարգերի՝ սուբստանցիոնալ-գոյաբանական, իրադրա-

* Լույս է տեսել «Ջահուկյանական ընթերցումներ», 1-2 (17-18), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 178 – 186:

¹ Նոր բառեր արևմտահայերենի մէջ Ա. գիրք , Կազմողներ՝ Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան, Հ. Մարաշլեան, Ե., 2021:

կան, լեզվագործառական, տրամաբանական-իմացաբանական, հիման վրա կատարված քննություն, այսինքն՝ «...բառիմաստների այդպիսի քննությունը պետք է նկատի ունենա, որ միևնույն իմաստները կարող են արտահայտվել միանգամայն տարբեր խոսքի մասերով և լեզվական կախման տարբեր (լրացյալի, լրացման, ենթալրացման) տիպերով. Հմմտ. լեզվում գոյություն ունեն հատուկ ածանցներ, որոնք կարող են մի խոսքի մասից մի այլ խոսքի մաս կերտել առանց բուն իմաստի փոփոխության՝ *ընկեր- ընկերական- ընկերաբար, մեծ- մեծություն- մեծապես*»²: Նման քննության դեպքում պետք է բացառել բառերի գործառական արժեքները՝ խոսքիմասային գործածությունները³

Բառերի իմաստային քննություն

Բառաձանցման տիպերի, եղանակների, տարբեր խոսքի մասերից ածանցման եղանակով նոր բառերի կազմության կաղապարների իմաստային քննությունը նույնպես ենթադրում է վերոհիշյալ կարգերի հիմքի վրա կատարված քննություն, այսինքն՝ ածանցների և նրանցով կազմված բառերի իմաստային քննությունը չի սահմանափակում նրանց գործառական արժեքով (գոյականակերտ, ածականակերտ), այլ ցույց է տալիս նրանց արտալեզվական արժեքը, որովհետև «... լեզուն ստեղծված է արտալեզվական աշխարհի առարկաները, երևույթներն ու հարաբերությունները արտահայտելու համար⁴», սա նշանակում է «որ մենք պետք է նախ՝ քննենք իրական աշխարհի փոխհարաբերությունների հնարավոր տիպերը, ապա անցնենք լեզվին, որպես այդ փոխհարա-

² Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե. 1989, էջ 40:

³ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 40:

⁴ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 13:

բերությունների դրսևորումներից մեկի»⁵: Ուստի լեզվական իմաստների բնույթի հետ կապված հարցերի պարզաբանման փորձերը՝ մնալով լեզվի սահմաններում, այսինքն՝ լեզվականը լուծել լեզվականով, մնում են թերի, ոչ ամբողջական:

Արտալեզվական աշխարհի առարկաներն ու հարաբերությունները արտահայտող բառերի (արմատական, ածանցավոր, բարդ) իմաստաբանական բնութագրումը պայմանավորված է գոյորոշ և առգոյորոշ կարգերով: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հիմնական կամ գոյորոշ կարգերը բնութագրվում են «նյութականություն, բաղկացականություն, որակայնություն» հատկանիշներով՝ արտահայտելով կազմի, քանակի, կախման, դասի, ձևի, չափի, ուղղության և տեղի իմաստներ: Գործընթացային կամ առգոյորոշ կարգերը բնութագրվում են ընթացայնության հատկանիշով՝ արտահայտելով պատճառայնության, համեմատության, հաճախայնության, կերպի, ընթացքի, տևողության, փոփոխության և ժամանակի իմաստները⁶: Այսպիսով՝ տեղի կարգը կամ ժամանակի կարգը, որոնք էլ բնութագրում են տվյալ բառի «արտալեզվական» իմաստը, բառի բացատրությունը չեն: Այս աշխատանքը նոր բառերի վերոնշյալ իմաստաբանական բնութագրման փորձ է՝ առանձնացնելով յուրաքանչյուր կարգին վերաբերող ածանցավոր բառերը և ցույց տալով մեկից ավելի կարգերով բնութագրվող բառերը:

Կազմի գոյորոշ կարգով են բնութագրվում, իրենց բառարանային տարբեր իմաստներով հանդերձ, հետևյալ բայերը՝ *բրզանալ, ընդխառնել, համակազմավորել, համահիլսել, յողատուիլ*: Կազմի իմաստին զուգահեռ բոլոր հինգ բայերին հատուկ է փոփոխության

⁵ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 17:

⁶ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 16:

առգոյորոշ կարգը, իսկ վերջին՝ *յօդատուիլ* բային հատուկ է նաև հաճախայնության կարգը՝ մեկից ավելի անգամ կատարված լինելու իմաստը, որն էլ ցույց է տալիս բառարանում մեջբերված օրինակ-նախադասությունը. «Խորանարդապաշտ նկարիչը զայն ենթարկեց իր անողոք քմայքներուն, իր ցանկատեսութեան, անոր կազմին տալով յօդատուած ձեւեր»⁷: Այս շարքում ուշագրավ է *բրգանալ* բայը, որը կազմի փոփոխության հետ արտահայտում է նաև թվի (դեզ, դիզել իմաստով), չափի (մեծանալ, աճել իմաստով) կարգերի իմաստներ:

Կազմի կարգի հատկանիշներով են բնութագրվում նաև հետևյալ գոյականները. *ամպոտում, ամպում, անմասնություն, զարդարավորում, կարճում, հողատում, լուծարկում, նահանջականություն*: Լրացուցիչ երկրորդ եզրի՝ ձևի իմաստ ունի *զարդարավորում* բառը, իսկ *անմասնությունը* ժխտական իմաստ ունի՝ կազմում մաս, տեղ չունեցող, կազմից կախում չունեցող, հետևաբար նաև արտահայտում է կախման գոյորոշ կարգի իմաստ, ինչպես սույն նախադասության մեջ. «Պէտք չկայ պարագծելու այս արտադրութեան շրջարկը՝ յիսունական-վաթսունական թուականներու հայ բանաստեղծութիւնը, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, հաստատելու համար անոր անմասնութիւնը ժամանակէն»⁸:

Տեղի (դիրքի) կարգով կարելի է բնութագրել հետևյալ բայերն ու գոյականները. *պատնեշանալ, վերացականացնել, վերկայացնել (վերկայացում), թանգարանում, դրսություն, անդրահայեցություն, արտաբեւեռացում, ենթաբնաբան, ենթախորք, ենթաըմբան, ճեմաստան, տարերկիր*: Հետաքրքիր են այս բառերից մի քանիսի արտահայտած լրացուցիչ իմաստները. *պատնեշանալ* բայը ար-

⁷ Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 100:

⁸ Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 13:

տահայտում է նաև ընթացքի և փոփոխության իմաստներ: Նկատի ունենալով այս բառի փոխաբերական իմաստը. «Հայութեան վերջին բեկորները, իրենց վերջին կարողականութեամբ պատնեշանալով»⁹, կարող ենք ասել, որ այն նաև ունի թվի (հավաքականության), չափի (դիմացկունության չափը) իմաստներ: *Թանգարանում*, իր բացահայտ և առաջնային տեղի կարգից բացի, ունի նաև թվի կարգի հատկանիշ, որովհետև թանգարանի մեջ հավաքելու միտքն է արտահայտված նորակազմ այս բառի մեջ: Իսկ փոխաբերական իմաստով այն ունի ժամանակի առգոյորոշ կարգին հատուկ իմաստ՝ նշանակելով հնացած, թանգարանային դարձած: Այս բառին նման է, առանց փոխաբերական իմաստի, *արխիվացում* բառը, որը թե՛ տեղի, թե՛ ժողովելու՝ արխիվում հավաքելու, իմաստներն ունի: *Դրսությունը* փոխաբերական իմաստով արտահայտում է նաև կախման ժխտական իմաստ, այսինքն՝ անկախություն, այս դեպքում՝ անկախություն ներսից՝ պատկանելիությունից, նեղ ու սահմանափակ շրջանակից. «Դրսութիւնը կը սրէ անհատականութիւնները երբ զանոնք կը զրկէ համայնութենէ»¹⁰: Այն ունի նաև նշանային (հոգեվիճակ արտահայտող) իմաստ՝ ցույց տալով անհարազատ վայրում գտնվելու՝ օտարության զգացումը: Հստակ է նաև *վերկայացնել* բայի պատճառայնության իմաստը. «Քերթուածը չ'ընդօրինակեր տուեալ մը, չի վերկայացներ զայն կամ պատկերացներ»¹¹:

Ուշադրության արժանի է *աստղայնանալ* բառը, որովհետև աստղը բնութագրվում է իր բարձր, անհասանելի տեղով/ դիրքով, իսկ փոխաբերությունը պայմանավորվում է հենց այդ

⁹ Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 113:

¹⁰ Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 40:

¹¹ Նոր բառեր արևմտահայերենի մեջ, էջ 124:

բարձրության, անհասանելիության հատկանիշով. «Հեթանոսությունը վերածնութեան մեջ կը շարունակուի աւելի բարդ, խորհրդաւոր եւ անիմանալի: Անհատը կը ծառանայ, կ'առիւծանայ, կ'աստղայնանայ»¹²:

Չափի կարգի հատկանիշներն են արտահայտում մի քանի նորակազմ բառեր, օրինակ՝ *սպասճիլ* բայը, որ չափի փոքրացում է ենթադրում (չափի ժխտական եզրը), *ժայռանալ* բայը, որը ամբողջան, տոկունության չափն է ցույց տալիս և ունի փոխաբերական իմաստ: *Զեղոյթ*, որ գեղելու թափն է նկարագրում: *Շուտիկնալ*, որ արագության չափի մեծացում է նշանակում: Այս նույն իմաստով կա նաև *սուրնալ* բայը: *Սեղմբտկել* բայը չափի փոփոխության հետ միասին արտահայտում է հաճախականության իմաստ: Չափի կարգի իմաստն ունեն նաև *կոթողականություն, հնչեղականություն, շեշտավորում, շեշտայնություն* նորաբանությունները:

Կախման կարգի իմաստն են արտահայտում *ցանցարկում, ցանցարկել, վերատիրացում, սպաստերում* բառերը, որոնցից առաջին երկուսը փոխադարձ կախման մեջ դնելու իմաստն են արտահայտում, իսկ երկրորդը՝ կախման մեջ դնելու միտումը (նշանայնություն, կամային գործողություն) և պատճառայնություն է արտահայտում: *Սպաստերում* բառը սերման կախվածությունն է, բայց ժխտական իմաստով՝ սերելուց կախված չլինելը: *Զսպություն* նորակազմ բառը մեկի կամ իր իսկ անձի կողմից կաշկանդվելու միտքն է արտահայտում. «Իսկ երբ պատահէր որ այս կամ այն առիթով իր մասին ակնարկութիւններ ընէր, այդ կ'ըլլար զսպութեամբ մը»¹³:

¹² Նոր բառեր արևմտահայերէնի մեջ, էջ 19:

¹³ Նոր բառեր արևմտահայերէնի մեջ, էջ 47:

Հետաքրքիր է հաճախայնության առգոյորոշ կարգը արտահայտող *թութակել* բայը, որը հաճախ, շարունակ կրկնելու իմաստն է արտահայտում և ունի բացասական՝ գնահատողական իմաստ, այսինքն՝ հոգեվիճակ, դատողություն ցույց տվող նշանային եզր. «Յաջող են, որովհետեւ անլի քարոզներ թութակելու տեղ՝ անձնական ապրում մը կը քանդակեն»¹⁴:

Թվի գոյորոշ կարգի հետ է կապված *զանգվածայնացնել* բայը՝ հստակ արտահայտված հավաքականության իմաստով, որին հատուկ է նաև առգոյորոշ՝ հարաբերություն և ընթացք ցույց տվող իմաստները, այսինքն՝ պատճառայնության ու փոփոխության կարգերը. «Անպայման պէտք է զանգուածայնացնել «Ազդակ»-ի էփը»¹⁵:

Ձևի կարգով է բնութագրվում *ծալոտվիլ* բայը, որը ձևի փոփոխության (փոքրացման) իմաստին զուգահեռ արտահայտում է նաև հաճախայնության առգոյորոշ կարգին հատուկ իմաստ. «Երեսը ծալոտուելով կ'ելեւեջէր, կը բացուէր ու ահագին ակռաները կը փայլատակէին»¹⁶: *Սպաձև* նորակազմ բառը ձևի փոփոխություն չի ենթադրում, այլ ձևի բացակայություն, որը իր բացակայությամբ հակադրվում է ձևին, այդ հակադրության շնորհիվ էլ բացատրվում է այս կարգին հատուկ իմաստներով:

Արքայականություն բառը դասի կարգին է պատկանում, որովհետև աստիճանավորում ու կարգ է ենթադրում:

Եզրակացություն

Գ. Ջահուկյանի տեսության հիման վրա նոր առարկաներն ու երևույթները բնորոշելու, նրանց հարաբերությունները արտահայ-

¹⁴Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 52:

¹⁵Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 46:

¹⁶Նոր բառեր արևմտահայերէնի մէջ, էջ 66:

տելու համար կազմված նոր բառերի իմաստային առանձնահատկությունների քննության փորձը ցույց է տալիս, որ արևմտահայերենի բառապաշարը (գոնե այս մասը) ամբողջությամբ կարելի է մեկնաբանել տեսության ընձեռած հնարավորություններով, և որ նման իմաստային քննությունը անհրաժեշտ է արևմտահայերենի բառերը ավելի ճիշտ բնութագրելու ոչ միայն ըստ արտալեզվական կարգերի, այլև գործառական իմաստները բացատրելու համար, որը կնպաստի բառարանի բառերի ավելի ամբողջական ըմբռնմանը:

Օգտագործված գրականություն

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974:

Նոր բառեր արևմտահայերենի մեջ, Կազմ.՝ Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան, Հ. Մարաշլեան, Ե., 2022:

Marashlian Harout - The Semantic Study of Western Armenian Neologisms - The study of the newly-developed derivatives in the dictionary "New Words in Western Armenian", based on G. Jahukyan's universal theoretical principles of semantics and word formation, leads us to the following conclusion. The semantic analysis of word-form derivation types and patterns should not be limited to their functional value (noun-based, adjective-based, etc.), but it should also include and indicate their extra-linguistic meanings: composition, size, causality, number, dependence, time, place, etc.

The analysis of the extra-linguistic meanings of the new words coined to define new objects and phenomena and their relations, makes it possible to expand the semantic field of the newly coined words. Besides, the study of neologisms according to the existential and non-existential orders developed by the Universal Linguistic Theory (substantive-ontological, situational (contextual), lingvo-functional, logical-epistemological) expands their functional meanings and improves the dictionary explanations of these words.

Keywords: Western Armenian, dictionary, semantic examination of words, neologism, universal linguistic theory, linguistic classes, attributive and substantive categories, derivation

Marashlian Harout - Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Junior Researcher.

Марашлян Арут - Семантический анализ западноармянских неологизмов - Анализ словарь производных слов "Новые слова в западноармянском языке", основанный на разработанном Г. Джаукяномединых теоретических принципов семантики и словообразования, приводит нас к выводу, что семантическое изучение типов и способов словообразования не должно ограничиваться их функциональным значением (существительное, прилагательное и т.п.), а должно показать и их внеязыковые значения: состав, размер, причинность, число, зависимость, время, место и т. д. Изучение особенностей внеязыковых значений новых слов, образованных для определения новых предметов и явлений, а

также выражения их отношений, позволяет расширить семантическое поле новообразованных слов. Рассмотрение новых слов по экзистенциально-метафорическим порядкам, выработанным универсальной лингвистической теорией (субстантивно-онтологической, фактологической, лингво-функциональной, логико-гносеологической), обогащает их функциональные значения и может способствовать корректировке словарных толкований этих слов.

Ключевые слова: западноармянский язык, словарь, семантический анализ слов, неологизм, универсальная лингвистическая теория, лингвистические категории, атрибутивные и субстантивные категории, суффиксация.

Марашлян Арут - Институт языка имени Р. Ачаряна НАН РА, младший научный сотрудник.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ*

ՌՈՒԲԵՐ ՏԵՐ ՄԵՐԿԵՐՑԱՆ

Արդի հայերենի զարգացման խնդիրներից մեկը արևելահայ և արևմտահայ տարբերակների փոխհարաբերությունների հարցն է:

2010 թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ն հրատարակեց աշխարհում վտանգված լեզուների ցանկը, լեզուներ, որոնք գալիք տարիների ընթացքում մարման վտանգի տակ են: Եվ այլ լեզուների շարքում էր արևմտահայերենը:

Սա մեծ իրարանցման պատճառ դարձավ արևմտահայ տարբերակը պաշտպանող ջատագովների՝ լրագրողների, ուսուցիչների, գրողների, լեզվաբանների, դպրոցների տնօրենների միջավայրում, որոնք հասկանալի պատճառներով արտահայտեցին իրենց լուրջ մտահոգությունը:

Սփյուռքում, լեզուն հայոց ինքնության պահպանման հիմնական լծակն է: Այն սփյուռքահայության ինքնությունը բնորոշող, յուրահատկությունը ներկայացնող գործոնն է: Եթե արևմտահայ տարբերակը ուժանա և սերնդեսերունդ սկսի մարել, ապա սփյուռքահայությունը կդատապարտվի անհետացման:

Այդ է պատճառը, որ արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՈ-ի՝ վտանգված լեզուների շարքում գտնվելը մեծ համախմբման պատ-

* Լույս է տեսել «Ձախուկյանական ընթերցումներ» Գիտական հոդվածների Ժողովածուում, Ե., Ասողիկ, 2016, էջ 229-236:

ճառ դարձավ սփյուռքում արևմտահայերենի ջատագովների շրջանակներում:

Երկու տարի առաջ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կրթական - հայագիտական բաժանմունքը կազմակերպեց միջազգային գիտաժողով՝ նվիրված արևմտահայերենի ուսուցման, դասավանդման խնդիրներին:

Անցյալ տարի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունն ու Փարիզի արևելյան լեզուների ինստիտուտը կազմակերպեցին «21-րդ դարուն արևմտահայերենի դասավանդման մարտահրավերներ խորագրով գիտաժողովը, որին մասնակցեցին տարբեր երկրներից ժամանած մեծ թվով մանկավարժներ, դասախոսներ, դպրոցների տնօրեններ, լրագրողներ:

Հետաքրքիր է նշել բամալրիվ նիստերից մի քանի թեմաներ՝

- լեզվաբանական կենսունակությունը հարցականի տակ, տեսություն և կիրարկում

- արևմտահայերենի դասավանդումը աշխարհի մեջ

-լեզուի մը դասավանդումն ու յուրացումը արվեստի ու մշակույթի ընդմեջ

- արևմտահայերենը Ֆրանսիայի մեջ

-հայկական դպրոցը.վերամտածել տարրական շրջանի և ներգործական մանկավարժություն

- մանկավարժական այլընտրանքներ

- դաստիարակչական մարտահրավերներ

-հայերենի ուսուցումը չափահասներուն

Վերջապես, այս տարվա հունվարին Օքսֆորդ համալսարանի հայագիտական ամբիոնի՝ կազմակերպությամբ և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նյութական աջակցությամբ կազ-

մակերպվեց միջազգային գիտաժողով, որի թեման էր՝ արևմտահայերենը 21-րդ դարում, ընդհանուր խորագրով:

-արևմտահայերենը, ներկա իրադրությունը

-սփյուռքում արևմտահայերենով մտածելու – ստեղծագործելու խնդիրներն ու մարտահրավերները

-կառույցների և միջոցների խնդիրները

- արևմտահայ հրատարակչության հարցեր

-արևմտահայ մամուլի այսօրվա և վաղվա խնդիրները:

Ինչպես ցույց են տալիս այս 3 օրինակները, մոբիլիզացիան, համընդհանուր խուճապը՝ վերաբերում էր Սփյուռքում գործող մեծ թվով դպրոցների դեկավարների, մանկավարժների, բոլորը չափազանց մտահոգ արևմտահայերենի ապագայի համար:

Սփյուռքում բնակվող, գործող, հայկական միջավայրի մեջ ապրող, հայկական մշակութային կազմակերպությունների կյանքին հետևող յուրաքանչյուր իրատես անձ միշտ հանգում է նույն եզրակացությանը՝ արևմտահայ տարբերակի կիրարկության ուղորտները տարեցտարի նվազում են նահանջ են ապրում, այդ տարբերակով հաղորդակցվողների թիվը աստիճանաբար պակասում է, հատկապես այդ տարբերակի գրական գրավոր խոսքը տիրապետողների թիվը:

Ո՞րն է այս տագնապալի իրադրության պատճառը:

Կան բնական լեզվական միջավայրին ու կարգավիճակին հատուկ պատճառներ, որոնք բոլորին հայտնի են արևմտահայ տարբերակը սփյուռքում պետական լեզու չէ, նրա կիրարկման ուղորտները սահմանափակ են, այն տեղական - տարածքային լեզու չէ, հասարակության մեջ ընդհանուր հաղորդակցության միջոց չէ:

Կարելի ասել, որ արևմտահայերենը տիրապետող բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են - առանց ընդունող երկրի լեզուն

իմանալու անհնար է այդ հասարակության մեջ որևէ գործունեություն ծավալելը:

Այս բոլոր հանգամանքները նվազեցնում են հայերենի պիտանիությունը, անհրաժեշտությունը սփյուռքում որպես գործադրելի լեզու ամենօրյա կյանքում:

Որպեսզի լեզուն ապրի, կենսունակ լինի, այն պետք է ինչ-որ նպատակի ծառայի: Որևէ ծառայություն չմատուցող լեզուն չի կարող ունենալ երկար ապրելու բնական պայմաններ:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ արևելահայերենը դանդաղ, աստիճանաբար ներթափանցում է արևմտահայերենի կիրարկման տարածքներ:

Փորձենք կոնկրետ օրինակներով ցույց տալ այդ երևույթը: Նախ՝ գրավոր խոսքում:

Որտե՞ղ է գրավոր արևմտահայերենը տեսանելի արևմտահայ ընթերցողն շրջանակներում: ԼԱՆՉուշտ մամուլում, գրավոր արևմտահայերենը ուրիշ տեղ մասսայական տարածում չունի:

Տրամաբանորեն, Սփյուրքում լույս տեսնող հայերեն գրավոր հրատարակությունները՝ մամուլ, գրականություն, պետք է լինեն արևմտահայ տարբերակով և դասական ուղղագրությամբ: Գոնե այդ միջոցով կարելի է պահպանել, շրջանառության մեջ դնել արևմտահայ տարբերակը: Բայց իրականում այդպես չէ:

Ֆրանսիայում հայկական մամուլ ասելով պետք է հասկանալ հայալեզու մեկ երկշաբաթաթերթ», «Նոր Յառաջ» խորագրով, որը փոխարինեց ավանդական «ՅԱՌԱՋ» օրաթերթը, որը դադարեց 2009 թ.:

Լույս են տեսնում ֆրանսալեզու 3 ամսագիր Les Nouvelles d'Arménie Magazine", լույս է տեսնում Փարիզում, "France - Arménie",

լույս է տեսնում Լիոն քաղաքում և "Azad Magazine", լույս է տեսնում Գրենոպլ քաղաքում:

Ընթերցողներին հայերեն կարդալու նյութ՝ տալու նպատակով, թերևս հայերենը պահպանելու նպատակով, որպեսզի ցույց տրվի, որ հանդեսը հայ համայնքի հայերեն ընթերցողներին էլ է ուղղված, այս ամսագրերը, ամեն ամիս 4- 6 կամ 8 էջ հայոց լեզվով հոդվածներ, զանազան լուրեր են մատուցում հայերեն ընթերցողներին: Նախ նշեմ, որ "Les Nouvelles d'Arménie Magazine" մեզ անհայտ պատճառներով վաղուց դադարել է հայերեն էջեր հրատարակելուց:

Պարզվում է, որ հոդվածները հաճախ արևելահայերեն են արտատպումներ են Հայաստանում լույս տեսնող մամուլից և արևելահայ ուղղագրությամբ: Ամսագրերը հայալեզու էջերում մի բաժին են հատկացնում հայկական ասացվածքներին, առակներին՝ բոլորը արևելահայերեն և արևելահայ ուղղագրությամբ:

"France - Arménie" ամսագրում N 424 էջ 2, ամբողջ էջը նվիրված է Ռոն Ալփ նահանգի գովազդին՝ 8 լեզուներով չինարեն, իսպաներեն, անգլերեն, յեբրայերեն և այլն լեզուներով, պարզ է և նաև հայերեն գրված է «Բոլորս Ռոն Ալպից ենք» արևելահայերեն և արևելահայ ուղղագրությամբ:

Նույն ամսագրի 56 էջում տրված են հայերեն ասացվածքներ կամ առածներ՝ «Ասա ընկերդ ով է, ասեմ ով ես դու», «Բարեկամը նեղ օրվա համար է», «Բարեկամությունը՝ բարեկամություն, հաշիվը՝ հաշիվ» բոլորը արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ:

"France - Arménie" ամսագրի դեկտեմբեր ամսվա N 425 համարում, էջ 52- 53, երկու էջ նվիրված են «Հայկական Մարսել» խորագրով մի հոդվածի, բոլորը արևելահայերեն և դասական ուղղագրությամբ:

Նույն հանդեսի մեջ նոր տարվա առթիվ ուղերձներում կարողում ենք արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ՝ «Թող այս նոր տարին ձեզ բերի երջանկություն, խաղաղություն և առողջությունը:

«ԱԶՍ» եռամսագրում հայալեզու էջերում բոլոր հոդվածները արևելահայերեն են, արևելահայ ուղղագրությամբ:

«Եվրոպայի հայերի համագումար» կազմակերպությունը 2016 թ. մարտի 4 - 6 -ին Գերմանիայի Դաբուրգ քաղաքում նա կազմակերպել էր եռօրյա գիտաժողով: Համացանցով ուղարկված այդ գիտաժողովի հաշվետվությունը, որը նախ և առաջ ուղղված է արևմտահայերին, գրված է արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ: Արևմտահայ մամուլում ստացվում են հետևյալ տարբերակները՝

- արևմտահայերեն դասական ուղղագրությամբ
- արևելահայերեն դասական ուղղագրությամբ
- արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ

Ինչպես բացատրել, որ սփյուռքահայ մամուլում, ինչպես նաև համա ցանցում, որտեղ միայն արմատահայերեն լեզու և ուղղագրություն է պետք օգտագործել, արևելահայերենն է օգտագործվում:

Նախ՝ խմբագրություններում արևմտահայ խոսքի մասնագետներ, գրավոր լեզուն տիրապետողներ չկան կամ շատ քիչ կան: Թերևս գլխավոր խմբագիրը՝ հայերեն չի կարողում ու գրում, նրանց փոխարեն կան Հայաստանից արտագաղթած բարձրագույն ուսում ստացած բազմաթիվ արևելահայերենի մասնագետներ, որոնք արևմտահայ մամուլի մեջ գրում են արևելահայերեն, քանի դա իրենց մայրենի լեզուն է:

Կադրերի պակաս, մասնագետների պակասը զգալի է բոլոր ոլորտներում, այն պարզ պատճառով, որ սփյուռքը չի վերարտա-

դրում իրեն անհրաժեշտ լեզվի մասնագետներ, ուսուցիչներ:

Գրավոր խոսքում կան այլ փոխներգործություններ քերականական ձևերի մեջ: Նկատելի է, որ հաճախ արևելահայ բացառական հոլովը փոխարինում է արևմտահայ բացառականին. Գրում են «Ժամը 3-ից 8-ը» փոխանակ գրելու «Ժամը 3 էն 8-ը»:

Մեկ այլ հոդվածում «Ֆրանս - Արմենի» ամսագրում կարդում ենք. «Գծանկարներու միջոցով ներկայացնելու 15-ից մինչև 20-րդ դարու սկիզբը հայուհու կերպարը Իրանահայ մշակութային միությունների՝ համացանցով ուղարկված ծանուցումները շատ հաճախ արևելահայերեն են:

Այս տարի Իսսի – լէ Մուլինո քաղաքում, հայ Առաքելական եկեղեցու 8-18 տարեկան աշակերտների համար բացած դպրոցում դասավանդվում է արևելահայերեն և ծնողները շատ գոհ են, որ արևելահայերեն է դասավանդվում:

Մարսել քաղաքի ԺԱՖ մշակութային կազմակերպության շաբաթօրյա դասընթացներում արդեն մի քանի տարի է որ դասավանդվում է արևելահայերենը:

Վերջերս «Ակոս» թերթին տված իր հարցազրույցում, «Ժամանակ» թերթի խմբագիր, Մխիթարյան վարժարանի հայերենի ուսուցիչ Սևան Տեյիրմենճեանը նշում է որ «արևմտահայերեն խոսողներուն նուազումը թրքահայերին գլխավոր մտահոգություններեն մեկն է: Մտահոգութիւն որ կապացուցէ վտանգի առկայութիւնը:

Թրքահայոց համար՝ հայերենի առօրեայ կեանքին մեջ գործածութիւնը հարցական է: Դպրոցներէ ներս անգամ աշակերտները միայն դասարաններուն Հայերեն կը խօսին եւ դպրոցէ դուրս կիշխե տեղական լեզուն: Նշեմ որ հայերենը սովորելիք լեզու մը նկատելով արդէն դուրս հանած կ'ըլլանք անմիջական եւ գործածուող լեզու մը ըլլալէ: Երախան կ'անդրադառնայ թէ հայերենը

սովորելիք լեզու մըն է, բայց այդ ուսումը կեանքին մէջը բնաւ շահեկան չէր:....Շատ ցաւալի է "հատերէնը ինչի՞ կը ծառայէ՝" հարցումը լսել: Այդ հանգրուանին հայերէնը կը սկսի անբաւարար թուիլ: Անշուշտ որ սխալ ժամում մոհամոզում մըն է, որուն ետին կայ հայերէնը դպրոցին մէջ սորված ըլլալու իրողութիւնը : Մինչդէռ հայերէնը միայն դպրոցի լեզուն չէ, այլ փողոցի լեզուն, սիրոյ լեզուն: Աշակերտները այս իրողութեան համապատասխան փորձը չունենալով սկամայ կը հեռանան հայերէնէն: Թուրքիոյ համար հայերէնը դիմադրութեակ միջոց մըն է նախ: Երբ շրջապատուած ես ազգայնական ճնշումի մը մէջ, հայախօսութիւնը, հայավարի ապրումը ինքին դիմադրութիւն են»:

ՊԲՀ-ի 2001թ. թիվ 1-ում հրատարակել եմ «Արդի հայերէնի 2 տարբերակների փոխներգործության շրջանակները» խորագրով հոդված, որտեղ ցույց եմ տվել, նախ՝ ամեն մի տարբերակի կիրարական ոլորտները, և 2-րդ ամեն մի տարբերակի ներկայությունը մյուսի կիրարական ոլորտներում: Պարզվում է, որ արևելահայերէնը շատ ավելի ներկա է արևմտահայ ոլորտում, քան հակառակը:

Այդ թվականից անցել է 15 տարի և արևելահայերէնի ներկայությունը արևմտահայերէնի գործառույթի ոլորտներում շատ ավելի զգալի է:

Ֆրանսիայի հայ համայնքը հաշվվում է մոտավորապես 400-450 հազար ծագումով հայեր: Հիշեցնենք, որ այս համայնքը Եվրոպայի ամենահայաահոծ համայնքն է ավելի մեծ թվով, քան ամբողջ միջին արևելքի հայ բնակչությունը, ներառյալ Իսպանապոլս ու Եգիպտոսը: Այդ տեսակետից Ֆրանսիայի հայ համայնքը ունի ներկայացուցչական բնույթ: Սակայն, երբ ասում ենք «ծագումով» հայեր, նշանակում է, որ անձերի մեծամասնությունը ունի հայկական ազգանուն՝ -յան վերջավորությամբ:

Երեխայի ծնվելու օրից, եթե հոր ազգանունը հայկական է, ապա երեխան մեխանիկորեն ինքնաբերաբար դառնում է ծագումով հայ. և այդ պիտակը մնում է նրա ամբողջ կյանքում: Այս դեպքում ծագումով հայ լինելը կրում է ժառանգական բնույթ:

Սակայն պետք է իմանալ, որ հայկական ազգանուն կրելը, ունենալը չի նշանակում ունենալ ազգային պատկանելության զգացմունք. իմանալ ազգային ինքնության գանձարանը, ցուցաբերել համերաշխություն հավաքականության հետ: Ինքնությունը կառույց է, որն իրականանում է ժամանակի ընթացքում, մանկության հասակից, ծնողներից ժառանգելով ու դպրոցում սովորելով հայոց ինքնությունը կերտող ազգային արժեքները: Իր բուն ինքնությունից խզվելը, անջատվելը առաջ է բերում «մուտանտներ» առանձնյակներ, այսինքն՝ անձեր, որոնց ժառանգական բնույթը ձևափոխված է, այլ տարբեր է իր նախնիների փոխանցած արժեքներից: Նրանք պատկանում են անօգուտ, ամուլ խմբին, որոնք միայն ազգանունով են հայ, բայց չունեն համայնքային պատկանելիության ու ազգային համերաշխության զգացմունք: Հայ ազգային ժառանգությունը անձանոթ է, խորթ է նրանց:

Ահա սա է լեզվի նահանջի, արևմտահայ տարբերակով հանրապետական թվի նվազեցման պատճառներից մեկը: Մեզ թվում է, որ այս միտումը բնական գործընթաց է, որը գալիք տարիների ընթացքում հավանաբար ավելի լայն թափ ստանա:

Հետաքրքիր մի դիպված, որի մասին տեղեկացա մի քանի ամիս առաջ: Միևնույն դասարանում սովորող 12 տարեկան 2 աշակերտուհիներ, մեկի անուն ազգանունը՝ Սոֆի Լըբլան, և մյուսինը՝ Ռուդա Լիլու, արդեն վաղուց ճանաչում են իրար: Կեսօրին նրանք սովորաբար ճաշում են դպրոցում: Մեկ օր Սոֆին կեսօրին գնում է տուն ճաշելու: Կեսօրից հետո դասամիջոցին,

Ռուդան հարցնում է Սոֆիին. «Տանը ի՞նչ կերար: Երևի դպրոցի ճաշարանից ավելի համով բան կերար»: Սոֆին պատասխանում է՝ «Բուլգուր կերա»: «Ի՞նչ ես ասում,- զարմանում է Ռուդան,- դու հա՞յ ես»: «Այո» պատասխանում է Սոֆին: «Ես էլ եմ հայ, պատասխանում է Ռուդան, մորս ազգանունը Դեդեյան է»: Սոֆիի մոր ազգանունը Գույումճյան էր: Այսպես, պատահականորեն, երկու ընկերուհիները բացահայտում են իրենց՝ մոր կողմից հայ լինելը:

Բանն այն է, որ «ծագումը» առերևույթ չի արտահայտվում: Ֆրանսահայերը չունեն իրենց ուրիշներից զանազանող նշաններ, ոչ զգեստին - հագուստին վերաբերող առանձնահատկություն, ոչ խոհարարական, ոչ էլ ուրույն դիմագծային՝ տարբերություններ: Հետևաբար, «ծագումով հայ» ասելով՝ մենք հասկանում ենք որպես «վիրտուալ հայեր» «ներունակ» հայեր, որոնք չունեն համայնքային պատկանելիության զգացմունք:

Բանավոր խոսքում նույնպես փոխներգործությունները քիչ չեն:

Վերջին 10-15 տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթած բնակչությունը, որը խոսում է արևելահայերեն, ստեղծել է բանավոր խոսքի միջտարբերակային լեզվական շփումներ: Հաճախ, յուրաքանչյուր հաղորդակցվող փորձում է ընդօրինակել խոսակցին, կարծես խոսակցությանը ավելի մտերմիկ բույր տալու համար արևելահայն ասում է «աղվոր է», «կրնամ» կամ «աղեկ է» փոխանակ «լավ է»: Երկար տարիներ Ֆրանսիայում ծառայող արևելահայ վարդապետն իր քարոզը կարում է ինքնատիպ լեզվով խառնելով արևելահայ և արևմտահայ տարբերակները:

Արևմտահայերենին տիրապետող մի շարք լրագրողներ Հայաստան են այցելում իրենց բանավոր խոսքում օգտագործում են արևելահայ տարբերակի բայական ձևեր:

Պոլսահայ «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունյանը 21 հեռուստատեսային կայանով տրված հարցազրույցի ժամանակ՝ օգտագործում է արևելահայ բայական ձևեր: Օրինակ, նա ասում է «մեր թերթը հանդիսանում է... մենք փորձում ենք ... մեր թերթը հնարավորություն է ունեցել...»

Հայտնի լրագրող Հարութ Սասունյանը, 2016 թ. ապրիլի 24-ին հեռուստատեսությամբ տված հարցազրույցի ժամանակ օգտագործում է « զգում եմ որ իմ ժողովուրդը.... ես հավատում եմ որ...աշխարհը մնում է նույն ձևով... մենք մեկնաբանում ենք հայ ժողովրդի շահերից...» և այլն:

Ստացվում է մի տեսակ խառնուրդ արևելահայ բայական ձևեր արևմտահայ արտասանությամբ: Այս երևույթը թերևս կարելի բացատրել լրագրողի արևելահային ավելի հասկանալի լինելու ցանկությամբ: Սա նույնպես արևելահայ տարբերակի ներկայությունն ու ազդեցությունն է արևմտահայ բանավոր խոսքում:

Հեռուստատեսային ծրագրերը. ֆրանսահայերից շատերը բողոքում, որ Հայաստանի հեռուստատեյին հաղորդումների արևելահայերենը լավ չեն հասկանում, քիչ են հասկանում, հաղորդավարները արագ են խոսում: Հակառակ երևույթը հազվադեպ է արևելահայր ավելի լավ է հասկանում արևմտահայ բանավոր խոսքը, քան հակառակը:

Իմ անձնական ենթակայական կարծիքն այն է, որ հայերենը արևելահայերի մայրենի լեզուն է, նրանք տիրապետում են լեզուն մանկությունից սկսած: Իսկ արևմտահայերի համար մեծ մասամբ հայերենը իրենց մայրենի լեզուն չէ, հատկապես երիտասարդ սերնդի համար, արևմտահայերենը նրանց 2-րդ լեզուն է, սովորած լեզու է: Եվ ընդհանրապես ասենք, որ այսօր արևմտահայերենը արքայի լեզու է:

Եզրակացություն

Արդի հայերենի երկու գրական տարբերակների գրավոր և բանավոր խոսքերի միջև եղած փոխադարձ շփումները, փոխներգործությունը անխուսափելի են: ՀՀ և Մփյուռքի կապերը տարեցտարի գնալով սերտանում են, և այդ կապերը իրականանում են սփյուռքահայության և Հայաստանում բնակվող բնակչության փոխադարձ կանոնավոր շփումներով, իսկ այդ շփումները նախ և առաջ լեզվական են:

Վերջին տարիների համեմատական հետազոտությունները ցույց են տալիս որ արևմտահայերենը զգալի չափով նահանջ է ապրում, և դա պարզ էր ՅՈՒՆԵՄԿՈ-ի վտագված լեզուների ցանկը հրատարակելուց շատ առաջ: Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում զգալի է արևելահայ տարբերակի ներկայությունը արևմտահայ տարբերակի օգտագործման ոլորտներում:

Այս միտումը բնական գործընթաց է, որը գալիք տարիների ընթացքում հավանաբար ավելի լայն թափ կստանա: Որևէ լեզվի ապագան կանխատեսելը չի կարող հաստատ գիտական հիմք ունենալ:

Թե՛ ինչպիսին կլինի 2-3 սերունդ հետո այդ տարբերակով հաղորդակցվողների քանակը և որակը, անհանար է կանխատեսել: Քննարկելով արդի հայերենի երկու գրական տարբերակների գրավոր և բանավոր խոսքերի միջև եղած փոխադարձ շփումները և հատկապես արևմտահայ տարբերակի նահանջի առարկայական և սուբյեկտիվ պատճառները՝ հարց է առաջանում՝ արդյոք լեզվական գործընթացը կարող է չենթարկվել միջավայրի թելադրած բնական կանոններին ու պատմության ընթացքի ուղեգծին:

**ԻՄԱՍՏՍՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ***

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

Բանալի բառեր. գրական արևմտահայերենի բառապաշար, նորաբանություններ, նորակազմություններ, բառակազմական պատճենումներ, իմաստային պատճենումներ, նորաբանությունների բառարաններ:

Նախաբան

Վերջին երեք տասնամյակներում՝ անկախությունից ի վեր, մեր գրական լեզվում (դրա երկու տարբերակներում էլ) կատարվել են նկատելի տեղաշարժեր: Դրանք բնականաբար առավելապես շատ են բառապաշարում, քանի որ քաղաքական, սոցիալական, տնտեսական խոշոր, շրջադարձային փոփոխությունների ժամանակ լեզվի բառապաշարը առաջինն է արձագանքում այդ իրադարձություններին:

Մոտավորապես այս ժամանակահատվածում՝ անկախացումից և դրան նախորդող հնգամյակից հետո, մեր լեզու մտած բառերը և բառիմաստներն են այժմ նորաբանություն համարվում¹: Գրական արևելահայերենի համար վերջին տասնամյակներում

* Լույս է տեսել «Ջահուկյանական ընթերցումներ», 1-2 (17-18), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 146 – 156:

¹ Նորաբանությունների առանձնացման, տեսակների, դասակարգման մասին տե՛ս, օրինակ, **Ա. Մարտիրոսյան**, *Նորաբանության ըմբռնումը արդի հայերենում*¹: Գանբեր Երևանի համալսարանի, № 1 (115), 2005, էջ 55-67:

կազմվել են նորաբանությունների մի քանի բառարաններ²: Այսօր էլ շարունակվում է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Նոր բառեր» բառարանի պրակների հրատարակումը³:

Արևմտահայերենի համար նորաբանությունների որևէ ընդգրկուն բառարան դեռ չի կազմվել: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինն այդ ուղղությամբ աշխատանքներ է նախաձեռնել. 2021 թ. կազմել ու հրատարակել է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» (Ա գիրք) բառարանի էլեկտրոնային տարբերակը (շուրջ 1000 բառ ծավալով): Այժմ ընթացքի մեջ է դրա Բ գրքի կազմումն ու խմբագրումը: Այս երկու գրքերը արևմտահայերենի նորաբանությունների մեկտեղման և բառարանագրական մշակման առաջին փորձերն են մեր իրականության մեջ:

Այդ փոփոխությունների և նկատելի տեղաշարժերի համակարգային ուսումնասիրմանը նպաստելը պայմանավորում է սույն ուսումնասիրման նյութի ընտրությունը և արդիականությունը: Այս ժամանակահատվածում մեր լեզվի բառապաշար են ներմուծվել հսկայական քանակությամբ նորաբանություններ, հարյուրավոր բաերում կատարվել է բառիմաստի ընդլայնում և վերաիմաստավորում:

Ուսումնասիրության նպատակներն են՝ որոշել իմաստային նորաբանությունների դերը ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման գործում, վեր հանել դրանց իմաստաբանական, բառակազմական, մասամբ՝ ձևաբանական և ոճական առանձնահատկությունները: Փորձել պարզել նոր բառերի և նշանա-

² Ս. Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., 2002, Փ. Մեյթիխանյան, *Նոր բառերի բացատրական բառարան*, Ե., 1996:

³ *Նոր բառեր*, Ա-Ե պրակներ, Ե., 2015-2020:

կությունների առաջացմանը նպաստող լեզվական և արտալեզվական գործոնները: Սա կարող է նպաստել զարգացման արդի փուլում մեր բառապաշարի համալրման և կատարելագործման հիմնական միտումների բացահայտմանը: 148 Ֆելեքյան Մանուկ

Հոդվածում համաժամանակյա մոտեցմամբ քննվում են «Նոր բառեր արեւմտահայերենի մէջ» բառարանի Ա և Բ գրքերի էլեկտրոնային տարբերակում տեղ գտած իմաստային նորաբանությունները: Արեւմտահայերենի նորաբանությունների քննության հիմնական մեթոդը հավաքված լեզվական նյութի նկարագրման եղանակն է:

Իմաստային նորաբանությունների առաջացման պատճառները և եղանակները

Բառարանի Ա և Բ գրքերից առանձնացրել ենք իմաստային նորաբանությունները, որոնք սույն ուսումնասիրության առարկան են: Սրանց առաջացման հիմնական պատճառը բառիմաստի ընդլայնումն է, որը հայերենում պայմանավորված է հիմնականում լեզվի ներքին գործընթացներով, թեև շոշափելի է նաև օտար ազդեցությունը՝ բառիմաստի պատճենումը: Նորաբանությունների բառարանների այս գրքերում բացատրված են այդպիսի բառիմաստների՝ բերված բնագրային օրինակներում դրսևորած նշանակությունները: Իմաստային նորաբանությունները բառարանում առանձնանում են աստղանիշով (*)՝ գլխաբառից առաջ:

«Նոր բառեր արեւմտահայերենի մէջ» գրքերում տեղ գտած իմաստային նորաբանությունների ճնշող մեծամասնությունը իմաստային պատճենումների արդյունք է: Սա փոխառության յուրօրինակ տեսակ է, երբ փոխառվում է օտար բառի ոչ թե արտաքին՝ հնչյունական կողմը, այլ միայն բովանդակությունը՝ բառիմաստը: Այս դեպքում բառը, փաստորեն, իր հնչյունական կազմով, բառա-

քերականական կառուցվածքով բնիկ, սեփական է, իսկ նրա մեկ կամ երբեմն մեկից ավելի իմաստները փոխառություն են որևէ օտար լեզվից⁴: Այս դեպքում կարևոր նախապայման է այդ բառերի առարկայական (նյութական) իմաստների նույնությունը փոխատու և փոխառող լեզուներում:

Արևմտահայերենը թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային պատճենումները ավանդաբար կատարել է անմիջականորեն փոխատու լեզվից, որը մինչև անցյալ դարի կեսերը հիմնականում ֆրանսերենն էր, իսկ վերջին տասնամյակներում՝ անգլերենը և հատկապես նրա ամերիկյան տարբերակը: Արևելահայերենը նույնպես վերջին երեք տասնամյակներում փոխառությունները հիմնականում ուղղակիորեն անգլերենից է կատարում (առանց ռուսերենի միջնորդության): Դրա պատճառով երբեմն դժվար է պարզել բառային պատճենման կամ իմաստային նորաբանության՝ նախապես արևելահայերենում, թե՞ արևմտահայերենում ստեղծված լինելը: Սրանց մի մասը մեր լեզվի երկու տարբերակներ զուգահեռաբար մուտք է գործում գրեթե միաժամանակ: Ներթափանցումը մեծավ մասամբ գրավոր ճանապարհով է կատարվում, թեև նկատելի են նաև բանավոր ճանապարհով փոխառման դեպքեր:

Իմաստային փոխառությունները՝ ըստ բառապաշարի իմաստային խմբերի

Այս փոխառությունները, արտալեզվական գործոններով պայմանավորված, ավելի շատ վերաբերում են քաղաքագիտական - դիվանագիտական, տնտեսագիտական, տեղեկատվական տեխ-

⁴ Ա.Մուքիսյան, Ք.Մուքիսյան, Մ. Ֆելեքյան, *Մասնականից հայոց լեզու*, Ե., 2017, էջ 240:

նուղղիաների, կրթական, սպորտի, թերևս նորաձևության ոլորտներին:

Իմաստային նորաբանությունները ոչ սակավ դեպքերում տարբեր բնագավառների տերմիններ են, որոնց մի մասը հաճախակի կիրառվելու պատճառով կարող է ապատերմինացվել, դառնալ համագործածական և մուտք գործել լեզվի ընդհանուր բառապաշար: Այսպես, մեր լեզվի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան տարբերակները ամենայն հավանականությամբ գրեթե միաժամանակ և միմյանցից անկախաբար անգլերենից իմաստային պատճենում են կատարել թվային // թուային ածականի համար: Այս բառի նախնական իմաստը, որ արձանագրված է հայերենի բոլոր բացատրական բառարաններում⁵ («թվերին հատուկ, թվերով արտահայտվող, թվերի») այժմ դառնում է անգործածական. ակտիվանում է նոր՝ փոխառյալ նշանակությունը («ինֆորմացիան էլեկտրոնային համակարգերի միջոցով երկակի՝ մեկերի և զրոների կողի փոխարկող»), որը հաշվողական տեխնիկայի տերմինային համակարգից արդեն անցել է ընդհանուր գործածական բառապաշար և սկսել է կիրառվել նաև այլ բնագավառներում: Այդպիսի մի կիրառության օրինակ է բերված «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» բառարանի Բ գրքում. «Այլապէս ելոյթը կը վերածուի անջատ մենախօսութիւններու տաղտկալի շարանի մը: Այդ «ագուցումը» ձեռով մը թուային տարբերակն է դերակատարներու բեմական տեղադրումին («Ազդակ», 9 Սեպտեմբեր 2021, էջ 3): Դեռևս իրենց տերմինային արժեքը պահպանում են Նորաբանությունների Բ գրքում արձանա-

⁵ Արևելահայերենում բառիմաստների բացատրությունների համար դիմել ենք հետևյալ բառարաններին՝ **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հհ. I-IV, Ե., 1969-1980: Արևմտահայերենի համար դիմել ենք «*Հայոց լեզուի նոր բառարան*» (հհ. I-II, Բեյրութ, 1992) բառարանին:

գրված այսպիսի փոխառություններից շատերը՝ ինքնակառավարում, համամասնական, փաթեթային (քաղաքագիտ.), խթանիչ (բժշկ., դեղագիտ.) և այլն: Իհարկե, քիչ չեն նաև սովորական՝ ոչ տերմինային բառերը: Ասենք, մագոգային // մաքոքային ածականի համար հայերենի բառարանները տալիս են միայն մեկ, այն էլ բառակազմական նշանակություն («մաքոքին հատուկ, մաքոքի»): Սակայն արդի լեզվում այն իմաստային պատճենամար ձևեր է բերել նաև նոր՝ փոխաբերական իմաստ՝ «երկու վայրերի՝ հաստատությունների՝ անձերի միջև կանոնավոր երթևեկությամբ՝ փոխայցելություններով կատարվող», ինչպես լուսաբանող օրինակում է. «Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիս Ժոմպլաթ երեկ շարունակեց իր մագոգային այցելութիւնները առնչակից կողմերու պատասխանատուներուն («Ազդակ», 20 Հոկտեմբեր 2021, էջ 2)»: Նույնպիսի բացատրություն ունի խորքային բառը բացատրական բառարաններում («խորքին վերաբերող՝ հատուկ, խորքի»), այնինչ բառն ունի նաև փոխաբերական նշանակություն՝ «ներքին օրինաչափություններով պայմանավորված, հիմնական, էական». հենց այդ իմաստով էլ բառը գործածված է բառարանի բնագրային օրինակում՝ «Հեռաձայնային հաղորդակցութեան ...ընթացքին երկու նախագահները համաձայնած էին շարք մը ռազմավարական հարցերու շուրջ խորքային խորհրդակցութիւններո սկսելու՝ վստահութիւնը երաշխատրելու եւ հասարակաց նպատակներու իրագործման համար 2021-ի քայլեր իրագործելու համար («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 1)»: Եվ կամ օտար պանդեմիա բառի համար արևելահայերենում կերտվել է համավարակ նորակազմությունը (համաճարակ-ի համաբանությամբ): Արևմտահայերենը գնացել է այլ ճանապարհով. Ժահր («թույն, թարախ, աղտեղություն») գոյականի փոխաբերական

«ախտ» նշանակությունը վերախմաստավորմամբ դարձրել է հիմնական, որից էլ արդեն բուն արևմտահայերենում կերտվել են նոր ածականներ՝ ժահրային, հակաժահրային. ««Մոլնուփիրավիր» (Molnupiravir) հակաժահրային բերնի դեղամիջոցը նախատեսուած է բուժելու մեղմ եւ չափաւոր «Քորոնա» այն մեծահասակներուն մօտ, որոնք կը գտնուին ծանր «Քորոնա»-ի պարագայի կամ հիւանդանոցային վտանգի տակ («Ազդակ», 19 Հոկտեմբեր 2021, էջ 5)»: Արևելահայերենում հետհոկտեմբերյան և հետնոյեմբերյան բառերը դարձել են հնարանություններ՝ պատմաբառեր: Դրանցից երկրորդը այսօր, ցավոք, ձեռք է բերել նոր նշանակություն և մեր լեզվի երկու տարբերակներում էլ ընկալվում է իբրև իմաստային նորարանություն. «Դասախօսը իր զեկուցումը բաժնեց երեք մասի. առաջին՝ յետնոյեմբերեան ժամանակահատուածին Թուրքիոյ արձանագրած հոետորաբանական փոփոխութիւնը («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 2)»:

Իմաստային նորարանությունների առաջացման ներլեզվական պայմանները

Բառիմաստի ընդլայնումը կատարվում է բնականաբար ոչ միայն արտաքին ազդեցությունների պատճառով: Իմաստափոխությունը կատարվում է հայերենի ներքին իմաստափոխական հիմունքներով (ըստ գուգորդության, ըստ առընթերության, հոմանիշների տարբերակման հիմունք, ապաստուգաբանություն, նույնիսկ իմաստի թյուրըմբռնում և այլն)⁶: Այսպես, սպայակույտ //

⁶ Սրա մասին մանրամասն տե՛ս **Աղայան Էդ.**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 78-101: **Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. I, Ե., 1979, էջ 180-192 («Բառիմաստի փոփոխությունները ժամանակակից հայերենում» բաժնի հեղինակը Ս. Էլոյանն է): **Ա.**

սպայակոյտ բառը արձանագրված է թե՛ արևելահայերենի և թե՛ արևմտահայերենի բառարաններում: Սակայն դրանցում այն ունի միայն հավաքական գոյականի իմաստ՝ «սպաների խումբը, սպաների ամբողջությունը»: Այս բառը արևմտահայերենում բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել նոր նշանակություն՝ «գորքերի ղեկավարման մարմին, շտաբ», որը այսօր մասամբ գործածվում է նաև արևելահայերենում: Սա բուն արևմտահայերենում կերտված նորակազմություն է և ոչ թե պատճենում, քանի որ նրա օտար՝ գերմաներեն համարժեքը (*der Stab*) նախնական, ելակետային իմաստով նշանակում է «գավազան» (իբրև իշխանության խորհրդանիշ): Այս նոր իմաստից կերտվել է սպայակոյտային նորակազմ ածականը, որը բնագրային կիրառությամբ արձանագրված է «Նոր բառեր արևմտահայերենի մեջ» (Բ գիրք) բառարանում. «Ազրպեյճանական լրատուամիջոցները, վկայակոչելով պաշտպանութեան նախարարութիւնը, կը հաղորդեն, որ հրամանատարական-սպայակոյտային ռազմավորւթերը կը կատարուին կապի եւ կողմնորոշման տարատեսակ միջոցներու լայնածաւալ կիրարկումով («Ազդակ», 20 Հոկտեմբեր 2021, էջ 8)»:

Օտար բառերը, մանավանդ նորաստեղծ տերմինները ավանդաբար առավել հաճախ արևմտահայերենն է վերածում հայերենի, այնուհետև դրանցից առավել հաջողները անցնում են նաև արևելահայերենին և դառնում են ընդհանուրհայերենյան բառեր: Հակառակ ուղղությամբ անցումները համեմատաբար սակավ են, քանի որ մեր լեզվի արևելյան տարբերակը փոխառությունների նկատմամբ չունի կտրուկ մերժողական վերաբերմունք: Այնուամենայնիվ կան նաև այդպիսի «ներքին փոխառություններ»: Արևմտա-

Մարգարյան, *Տամանակակից հայոց լեզու*, Ե., 1993, էջ 60-66: Ա.Սուքիասյան, Զ.Սուքիասյան, Մ. Ֆելքյան, *Տամանակակից հայոց լեզու*, էջ 135-140:

հայերենի նորաբանությունների Բ գրքում գրանցված է կրկնապատկեր իմաստային նորաբանությունը. «Օրուան իրաւարարը, ՎԱՐ համակարգով դիտել է տք կրկնապատկերը, Հայաստանի ի նպաստ տուաւ փենալթի մը («Ազդակ», 9 Սեպտեմբեր 2021, էջ 7)»: Այս բառը չկա արևմտահայերենի ծավալուն բառարաններում, սակայն «կրկնակի՝ երկրորդ պատկեր, պատկերի պատճեն» նշանակություններով արձանագրված է արևելահայերենի բառարաններում: Այն այժմ ձեռք է բերել «մարզական միջոցառման հեռուստատեսային հեռարձակման որևէ դրվագի կրկնություն» իմաստը: Վստահաբար կարելի է ասել, որ այս իմաստը նախ առաջացել է արևելահայերենում, ապա ներթափանցել նաև արևմտահայերեն, քանի որ հայալեզու սպորտային հաղորդումները, կրկին արտալեզվական գործոններով պայմանավորված, առավել տարածված են հայրենիքի հեռուստաընկերություններում: Կամ փաթեթ գոյականի նոր՝ «առաջարկությունների՝ որոշումների՝ քայլերի ևն խումբ՝ ամբողջություն» նշանակությունը և դրա հիման վրա կերտված փաթեթային ածականը մեր լեզու մուտք գործեցին 1990-ական թվականների երկրորդ կեսին, երբ հայաստանյան հասարակության մեջ բուռն քննարկումներ էին ընթանում մի քաղաքական խնդրի լուծման տարբերակների ընտրության շուրջ: Այժմ այս իմաստները անցել են նաև արևմտահայերենին. «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» բառարանի Բ գրքում ունենք արձանագրված հետևյալ կիրառությունը. «Մեր կողմէ ողջունենք Պաքուի եւ Երեւանի դրական տրամադրուա- 154 Ֆելեքյան Մանուկ ծուփինը փոխադարձաբար ընդունելի, փաթեթային համաձայնութիւններու հասնելու հարցին մէջ, ինչ որ հեռանկարին մէջ թոյլ պիտի տայ միացեալ աշխատանքը տեղափոխել գործընկերային համագործակցութեան հարթութիւն», ընդգծած է Ռուսիոյ արտաքին գործոց

նախարարութեան ներկայացուցիչը («Ազդակ», 2 Հոկտեմբեր 2021, էջ 1)»:

Եզրակացություններ

- Իմաստային նորաբանությունները մնում են հայերենի բառապաշարի հարստացման գործուն միջոց:

- Ընդ որում, դրանք ստեղծվում են թե՛ օտար բառերի իմաստային պատճենմամբ և թե՛ հայերենի ներքին իմաստավորական հիմունքներով:

- Իմաստային պատճենման ժամանակ կարևոր նախապայման է փոխատու և փոխառող լեզուներում այդ բառերի առարկայական (կուրսական) իմաստների նույնությունը:

- Արդի հայերենում իմաստային պատճենումները կատարվում են անմիջականորեն փոխատու լեզվից (հիմնականում անգլերենի ամերիկյան տարբերակից), առանց երրորդ լեզվի միջնորդության:

- Եթե խորհրդային շրջանում իմաստային պատճենումներ առավելաբար արևմտահայերենից էին անցնում արևելահայերենին, այսօր նորաբանությունների փոխադարձ ներթափանցումները ունեն երկկողմանի բնույթ:

- Այս է պատճառը, որ երբեմն դժվար է պարզել բառային պատճենման կամ իմաստային նորաբանության՝ նախապես արևելահայերենում, թե՞ արևմտահայերենում ստեղծված լինելը:

Օգտագործված գրականություն

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., «Հայաստան» հրատ., 1976:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., ԵՊՀ հրատ., 1984, 372 էջ:

Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. I, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 488 էջ:

Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:

Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. I-IV, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:

Հայոց լեզուի նոր բառարան, հհ. I-II, Պէիբույթ, 1992:

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 1993, 232 էջ:

Մարտիրոսյան Ա., Նորաբանության ըմբռնումը արդի հայերենում.- Բանբեր Երևանի համալսարանի, № 1 (115), 2005, էջ 55-67:

Մեյրիխանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., «Փյունիկ» հրատ., 1996, 210 էջ:

Նոր բառեր, Ա-Ե պրակներ, Ե., «Գիտություն» հրատ., 2015-2020:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Բ., Ֆելեքյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՊՀ հրատ., 2017, 462 էջ:

Felekyan Manuk - Semantic Neologisms in Western Armenian Literary Language.- The article analyzes about two dozen semantic neologisms of the Western Armenian literary language, included in the first two editions of the dictionary of the Institute of Language of the Academy of Sciences of the Republic of Armenia "New Words in the Western Armenian language". The main reason for the emergence of semantic neologisms is the expansion of the meaning of Armenian

words and semantic tracing of mostly English lexical units. In semantic calque, the equivalence of the original meanings of the word of the source language and the recipient language is important.

Keywords: vocabulary of the western Armenian literary language, neologisms, derivational and semantic calques, dictionaries of new words. 156 Ֆելեքյան Մանուկ Felekyan Manuk, PhD of Philology, Institute of Language after H. Acharyan of NAS RA, Researcher.

Фелекян Манук - Семантические неологизмы в западноармянском литературном языке. - В статье проанализированы около двух десятков семантических неологизмов западноармянского литературного языка, вошедшие в первые два выпуска словаря Института языка АН РА "Новые слова в западноармянском языке". Основная причина возникновения семантических неологизмов - расширение смысла армянских слов и семантическое калькирование в основном английских лексических единиц. В случае семантического калькирования важна эквивалентность исходных значений слова языка-источника и языкареципиента.

Ключевые слова: лексика литературного западноармянского языка, неологизмы, словообразовательные кальки, семантические кальки, словари новых слов. Манук Фелекян, кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна НАН РА, научный сотрудник.

**ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈՒՈՎԸ ԵՒ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ
ԽՆԴՐԱՌՈՒԹՒԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՁ
(ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՓՈՐՁՈՎ ՄԸ)***

ՍՕՍԻ ՄԻՇՈՅԵԱՆ - ՏԱՊՊԱՂԵԱՆ

ՄՈՒՏՔ

Այս յօդուածին նպատակն է նշել արդի հայերէնի արեւմտեան գրական ճիւղի հայցական հոլովով դրուած գոյական անդամի իւրայատկութիւնները, հայցական հոլովի շարահիւսական պաշտօնները:

Արեւելահայերէնը կորսնցուցած է հայցական հոլովի ձեւաբանական իր յատկանիշը ամբողջութեամբ թէ՛ գոյականի եւ թէ դերանունի պարագային, մինչ արեւմտահայերէնը գոյականի պարագային ուղղականի հետ նոյնացում ստեղծելով դերանունի պարագային կը պահէ ուղղական եւ հայցական հոլովներու տարբեր ձեւերը:

Հակառակ անոր, որ արեւմտահայերէնի մէջ գոյականի հայցականը կը նոյնանայ ուղղականին, սակայն կը կրէ գրաբարի գլխաւոր շարահիւսական պաշտօնները: Հայցական հոլովով կ'արտայայտուին գործողութեան վախճանակէտի տեղի պարագան, ժամանակի պարագան, չափ ու քանակի պարագան եւ սեռի խնդիրը, որ հայցական հոլովի հիմնական ու բնորոշ պաշտօնն է արեւմտահայերէնի մէջ:

*Լույս է տեսել Արեւմտահայերէնի հարցեր (Գիտական ուսումնասիրութիւններ) Ա պրակ, Ե., 2018, էջ 74-105:

Ահաւասիկ, սեռի խնդիրի այս պաշտօնի ձեւաբանական արտայայտութիւնը, այսինքն՝ գոյականի հայցական հոլովը, երբեմն լուրջ խախտումներ կ'արձանագրէ արեւմտահայերէնի մէջ քանի մը մակարդակներու վրայ.-

1. Ներգործական բայերը ճանչնալը յաճախ դժուար է մանաւանդ այն պարագային, երբ բայերը առանց ձեւաբանական տարբերակումի կրնան գործածուիլ ներգործական եւ չէզոք սեռերու առումներով:

2. Կարգ մը ներգործական բայեր արդէն տրական հոլովով խնդիր կը պահանջեն, կամ՝ դերանունի եւ գոյականի պարագային կը պահանջեն տարբեր խնդրառութիւններ:

Աշխատութեան մեծ մասը նուիրուած է այս խառն ու արեւմտահայ քերականութեան մէջ անհրաժեշտ խորութեամբ շուսումնասիրուած երեւոյթներուն:

Անհրաժեշտաբար, մանաւանդ հայցական հոլովին ուղղականին հետ ձեւաբանօրէն նոյնացմանպարագան ներկայացնելու ատեն, մենք դիմած ենք լեզուի պատմութեան, իսկ ներգործական բայերու խնդիրը նոր հայերէնի մէջ քննելու առթիւ՝ համեմատական քերականութեան:

Մենք մատնանշած ենք այն մեծ խառնաշփոթութիւնը որ կայ մեր քերականներուն եւ բառարաններուն մէջ բազմաթիւ բայերու սեռի եւ խնդրառութեան պարագաները ճշդելու հարցին մէջ, շատ անգամ առանց լուծում մը առաջարկելու, որովհետեւ ատիկա պիտի պահանջէր բնագրային հսկայ նիւթի հաւաքագրման աշխատանք եւ անոր հիման վրայ կատարուած սերտողութիւն. բան մը, որ ցարդ չկայ արեւմտահայերէնի պարագային:

Օգտագործած ենք արեւմտահայերէնի այս խնդիրին նուիրուած զանազան հեղինակներու կարծիքներն ու հաստա-

տումները. ինչպես՝ Մինաս Թեօլէեանի, Կ. Ճուհարեանի, Մ. Մկրտիչեանի, Զ. Մելքոնեանի, Կ. Առաքելեանի, նաեւ արեւելա-հայ քերականներու՝ Մանուէլ Ասատուրեանի, Գուրգէն Սեւակի, Մանուկ Աբեղեանի, Էդ. Աղայեանի եւ այլոց աշխատութիւնները:

1. Ուղղական եւ հայցական հոլովներու կատարեալ նոյնացումն ու միասնացումը՝ արդի հայերէնի գոյական խօսքի մասին մէջ

Գրաբարի մէջ գոյականին ներգործողի (ուղղ. Հլվ.) եւ կրողի (հյց. Հլվ.) գործառութիւնները շփոթութիւն չէին առաջացներ, որովհետեւ հայցական հոլովը ուղղական հոլովէն յստակօրէն կը գատորոշուէր իր ձեւով: Հայցական հոլով եզակին «զ» նախդիր կը ստանար, իսկ յոգնակին «զ» նախդիրին հետ նաեւ «ս» մասնիկը:

Մրջին ամարայնի պատրաստ է գկերակուր:

Ուղղ. հլվ. եզակի

հյց. հլվ. եզակի

հեթանոսք գերկինս վասն անչափ մեծութեան եւ գլուսաւորսս վասն առաւել պայծառութեան աստուածս կարծէին:

հեթանոսք: Ուղղական հոլով, յոգնակի Զերկինս: Հայցական հոլով, յոգնակի Զլուսաւորսս: Հայցական հոլով, յոգնակի

Այս կը նշանակէ, որ ենթակայի եւ սեռի խնդիրի քերականական կարգերը գրաբարի մէջ ունէին իրենց համապատասխան լեզուական ձեւաւորումը եւ իրարու հետ չէին շփոթուէր¹:

Սակայն գրաբարի մէջ արդէն որոշակի խախտում մը ունի ուղղական եւ հայցական հոլովներու ձեւաբանական տարբերակումը: Այսպէս, գոյականի եզակի անորոշը կը նոյնանայ ներգործողի եւ կրողի պաշտօններուն մէջ ունեցած իր ձեւով, այլ

¹ Հայր Կրթանէ Զարխեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Լիզպոն, 2001, էջ 106:

խօսքով՝ եզակի անորոշ գոյականը սեռի խնդիրի իր պաշ- սօնով ունի ներգործողի ձևը, առանց ձևաբանական տարբե- րակումի: Օրինակ՝

Մեղումեղը գործէ: Ենթ. սեռի խնդիր (հյգ. հլվ.) (ուղղ. հլվ.)

Որթխաղող բերէ՞: Ենթ. սեռի խնդիր

Այս կառույցին մեջ անխուսափելիորեն շփոթութիւն մը կրնայ ստեղծուիլ ներգործողի եւ կրողի պաշտօնները կրող ան- դամները զատորոշելու համար, այդ իսկ պատճառով, ձևա- բանական տարբերակիչ յատկանիշի բացակայութեան պատճա- ռով, գրաբարի մեջ որդեգրուած է շարահիւսական տարբերակումը, որով նախադասութեան մեջ ներգործողը կը նախորդէ կրող անդամին: Օրինակ՝ «Մեղու մեղը գործէ» առաջին անդամը ենթա- կայ է, յետոյ կու գայ սեռի խնդիրը:

Ուղղական եւ հայցական հոլովներու ձևաբանական տար- բերակման յատկանիշներու վերացման գրաբարէն սկսած ընթաց- քը կ'անցնի պատմական երկար շրջանէ մը: Արդի հայերէնի գրա- կան երկու ճիւղերուն մեջ եւս հայցական հոլովի «զ» նախդիրի եւ յոգնակի հայցականի «ս» մասնիկի վերացումով գոյականի ուղղա- կան եւ հայցական հոլովները լրիւ կը նոյնանան: Հայցական հոլովի ձևաբանական յատկութեան վերացումը արեւելահայերէնի մեջ բացարձակ կ'ըլլայ, ներգրաւելով նաեւ դերանունական հոլով- ման համակարգը: Մէկ խօսքով, արեւելահայերէնը կորսնցուցած է հայցական հոլովի ձևաբանական իր յատկանիշը ամբողջութեամբ թէ՛ գոյականի, եւ թէ դերանունի պարագային, մինչ արեւմտահայե- րէնը գոյականի պարագային ուղղականի հետ նոյնացում ստեղ-

² Հայր Վրթանէս Չալիխեան, նոյն տեղը:

ծելով, դերանունի պարագային կը պահէ ուղղական եւ հայցական հոլովներու տարբեր ձեւերը: Ինչպէս՝

Գոյական՝	ուղղ.- հյց. ծառ, ծառեր	
Դերանուն՝	ուղղ. ես, մենք	դուն, դուք
	հյց.- զիս, մեզ	քեզ, ձեզ

Հետեւաբար, արդի հայերէնի մէջ գոյականի հայցական հոլովը «զ» նախդիրի եւ «ս» մասնիկի վերացումով ուղղական եւ հայցական հոլովներու ձեւաբանական տարբերակումը կը վերանայ եւ ասոր որպէս հետեւանք կ'առաջանայ ներգործողի եւ կրողի շփոթութեան վտանգ:

Ուսուցիչը կը սիրէ Սեւանը:

Այս նախադասութիւնը շփոթութիւն կ'առաջացնէ, որովհետեւ երկիմաստ կը հասկցուի: Պարզ չէ, թէ սիրողը ուսուցիչն է, թէ Սեւանը:

Ասկէ կը հասկցուի, որ ներգործողի եւ կրողի պաշտօնները այնպիսի հակադիր պաշտօններ են, որոնք լեզուի մէջ անպայմանօրէն պարզորոշ կերպով պէտք է դրսեւորուին: Այս ուղղութեամբ ալ մեր լեզուի արեւմտեան եւ արեւելեան հատուածները զարգացման տարբեր ընթացք ունեցան:

Արեւմտահայ գրական լեզուի եւ «կը» ճիւղի բարբառները այս երկդիմութենէն խուսափելու համար դիմեցին շարահիւսական միջոցին՝ բառերու հաստատուն դասաւորման: Ենթական եւ սեռի խնդիրը ձեւաբանօրէն տարբերակուած չեն, սակայն կը ճանչցուին բառերու շարադասութեամբ: Ենթական կը նախորդէ ուղիղ խնդիրին, ինչպէս որ արդէն կար գրաբարի մէջ եզակի անորոշ գոյականի պարագային:

Օտոյները տղաքը դպրոց կը դրկեն:

ենթ. սեռի խնդիր

Ժամագործը կը վռնտէ Թորոս աղան:

ենթ.

սեռի խնդիր

«Ուսուցիչը կը սիրէ Սեւանը» նախադասութեան մէջ, ուրեմն, «ուսուցիչը»ն է ենթական, իսկ «Սեւանը կը սիրէ ուսուցիչը» նախադասութեան մէջ՝ Սեւանը:

Արեւելեան բարբառները, սակայն, այս երկդիմութենէն խուսափելու համար դիմեցին ուրիշ ձեւաբանական միջոցի՝ շնչաւոր առարկաներու անուններու ուղիղ (սեռի) խնդիրը սկսան արտայայտել տրական հոլովով: Օրինակ՝

Ուսուցիչը սիրում է Սեւանին:

«Ուսուցիչը» կը ներգործէ «Սեւանին» վրայ,
ուրեմն՝

«ուսուցիչը» ենթակայ է, իսկ «Սեւանին»՝ տրական հոլովով ուղիղ խնդիր:

Բայց՝

Ուսուցիչը *սիրում է գիրքը*» նախադասութեան մէջ պարզորոշ է, թէ «ուսուցիչ»ն է հոս ներգործողը, իսկ «գիրքը»՝ կրողը: Կը նշանակէ, որ «գիրքը» անշունչ առարկան պարզ եւ որոշակիօրէն դրսեւորուած է եւ անմիջապէս կը հասկցուի իբրեւ կրող: Այս պատճառով ալ կարիքը չի զգացուիր տրականաձեւ արտայայտուելու: Անշունչ առարկաները կ'արտայայտուին հայցական հոլովի ձեւով (ուղղականաձեւ):

Զինուորը մարտեց հրացանը:

ուղղականաձեւ ուղիղ խնդիր Աղջիկը զարդարեց սենեակը:

ուղղականաձեւ ուղիղ խնդիր

Իսկ եթե ենթական այլ անշունչ առարկայ է, ներգործողի եւ կրողի իմաստները կրկին կը հասկցուին որոշակիօրէն, սակայն միայն տրամաբանօրէն:

Արեւը լուսաւորեց երկիրը:

էնթ. ուղղականաձեւ ուղիղ խնդիր Կրակը այրեց թուղթը:

էնթ. ուղղականաձեւ ուղիղ խնդիր

Ինչպէս արդի հայերէնի բազմաթիւ այլ քերականական կարգերը, այնպէս ալ այս կարգը վերլուծուած է ակադեմիկոս Մանուկ Աբեղեանի կողմէ իր «հայցական հոլովը մեր աշխարհաբարում» եւ «Աշխարհաբարի շարահիւսութիւն» աշխատութիւններուն մէջ³:

Մանուկ Աբեղեան ընդհանուր կերպով կը սահմանէ տրականաձեւ եւ ուղղականաձեւ ուղիղ խնդիրներու գործածութեան ոլորտները եւ կու գայ այն եզրակացութեան, թէ ուղիղ խնդիրի տրականի կամ ուղղականի գործածութիւնը կախուած է ոչ թէ տուեալ ուղիղ խնդիրի անձ կամ իր ըլլալու հանգամանքէն, այլ անով որ տուեալ ուղիղ խնդիրը ինչպէս կը հասկցուի: Իւրաքանչիւր կրող (ուղիղ, սեռի) խնդիր, ըլլայ անձ, կենդանի թէ իրի անուն, եթէ կը մտածուի իբրեւ գիտակցաբար ընդունուող առարկայ մը՝ կը դրուի տրական հոլովով եւ ընդհակառակը, իւրաքանչիւր կրող խնդիր եթէ կը մտածուի որպէս անգիտակից իր՝ կը դրուի հայցական-ուղղական ձեւով:

Օրինակ՝

Ամէն մարդ իր սիրելի ընկերն ունի:

անգիտակից իրի առումէս յարգում եմ իմ ուսուցիչս:

³ Աբեղեան Մ., Հայոց Լեզուի տեսություն, Ե., 1965, էջ 441:

գիտակցուած անձ⁴

Անձի եւ իրի քերականական կարգի քննութեան անդրադարձած է նաեւ բանասիրական գիտութեան տոքթ. Վ. Առաքելեան: Անուշադրութիւն կը դարձնէ այն հանգամանքին վրայ, որոչ միայն անձ ցոյց տուող գոյականները կը գործածուին տրականաձեւ հայցականով, այլ շնչաւորները ընդհանրապէս: Ան կ'եզրակացնէ, որ «հայցական իրի եւ անձի տարբերակումը կը դառնայ շնչաւորի եւ անշունչի տարբերակում⁵: Կենդանիները, որոնք միջին տեղ կը գրաւեն անձի եւ իրի միջեւ, աւելի յաճախ իբրեւ անձ կը հասկցուին: Այս մասին Առաքելեան կը գրէ. «... Իրենց օրինաչափութիւններով ընդհանուր ու մօտիկ շփման կէտեր են հանդէս բերում անձ ցոյց տուող գոյականները եւ միւս շնչաւորները (կենդանիները), քան այս վերջինները եւ անշունչները: Եթէ կարելի է ասել, շնչաւորները միջին օղակում են գտնուում: Բայց թէ՛ առաջ եւ թէ՛ դրանք հակում են դէպի անձերը, այսինքն դրում են տրականաձեւ հայցականով»: *Ճակատը չալ հորթին եւ ման գալիս* Որսորդը սպանեց թաւամազ արջին:

2, Տրականաձեւ եւ ուղղականաձեւ ուղիղ խնդիրի դրսեւորումները՝ արդի արեւելահայերէնի մէջ

1) ա. Որոշեալ անձի անուններու ուղղականաձեւ գործածութեան կը հանդիպինք մինչխորհրդային շրջանի գեղարուեստական գրականութեան մէջ՝ Բաֆֆիի, Պոռշեանի, Շիրվանզադէի, Մուրացանի եւ շատերու ստեղծագործութեան մէջ: Այսպիսի օրինակներ են՝ *«Ոգիները գողացել էին նրա տղան եւ փոխարէնը մի դեւ էին դրել»* (Բաֆֆի, Սամուել): *«... տեսնել շուրջդ միայն գիւղացին եւ նրա*

⁴Աբեղյան Մ, նշ. աշխ., էջ 443:

⁵Առաքելյան Վ, Ժամանակակից հայերէնի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1957, էջ 35:

միօրինակ կեանքը» (Մուրացան, Երկերի Ժողովածու):

Արդի արեւելահայերէնին համար այս վիճակի ուղղակա-նաձեւ գործածութիւնը անընդունելի ոււմերժելի է: Այժմ բոլորը տրականաձեւ գործածութիւն ունին:

Այս օրէնքէն դուրս կը մնան հետեւեալ պարագաները.-

1. Ունենալ բայը տրականաձեւ ուղիղ խնդիր չի կրնար առնել: Օրինակ՝ *«Նա ամէն գիւղում ունէր իր գործակալը, իր կողմնակիցը, իր պաշտոնը»:*

«Ունենալ» բայի խնդիրը միշտ ուղղականաձեւ կ'ըլլայ:

2. Առանձին ասացուածքներու եւ դարձուածքներու անձերու անուններու որոշեալ հայցականը կրնայ ուղղականաձեւ ըլլալ, օրինակ՝ *«Շունը տէրը չի ճանաչում», «Նա իր աստուածը մոռացել է»:*

բ. Անձերու անունները անորոշ առման պարագային կը գործածուին ե՛ւ ուղղականաձեւ ե՛ւ տրականաձեւ, բայց աւելի կը գերակշռեն ուղղականաձեւ կիրառութիւնները:

3. Թումանեանի «Գիքորը» պատմուածքին մէջ կը հանդիպինք հետեւեալ նախադասութեան. *«...վզվզալով մտնում է անկիւնները, աղքատի ու տկտրի է ման գալի, պանդուխտ ու անտէր էրէխայ է որոնում»:* Ինչպէս նկատելի է, նոյն նախադասութեան մէջ անձի անունները գործածուած են ե՛ւ տրականաձեւ ե՛ւ ուղղականաձեւ:

2) Իրի անունները, ըլլան անոնք անորոշ թէ որոշեալ՝ կը գործածուին ուղղականաձեւ:

«Արջը գիտէ վարագի ժանիքի թափը, նախայարձակ չի լինում: Եթէ տկար մի խոզ ետ մնայ միւսներից, արջը թաթի մի հարուածով ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատտառ լափում, լէշը ծածկում չորցախով ու տերեւներով, քաք դնում վրան» (Ա. Բակունց, Երկերի

Ժողովածու):

Սակայն սակաւաթիւ պարագաներուն, իրերու անուններու շնչաւորման հետ կապուած՝ սեռի խնդիրները կը կիրառուին նաեւ տրականաձեւ: «Հասօն քարերին էր դողացնում, Սեւ-ջրի ալիքները յուզում, բնութիւնն էր քարացնում, գեփիւտին ողբացնում» (Վ. Փափազեան, Ընտիր Երկեր):

Իրերու անունները տրականաձեւ հագուադէպ կը գործածուին, այդ ալ մասամբ կը պատահի այն պարագային, երբ ներգործական բայը ցոյց կու տայ այնպիսի գործողութիւն, որ յատուկ է շնչաւորի: Այսպէս, **հմայել**, **դիւթել**, **թովել**, **գրաւել**, **ողբացնել**, **լացացնել** բայերու խնդիրները տրականաձեւ գործածութիւն կ'ունենան⁶: «Նա իր նուագով հմայում ու դիւթում էր անգամ ծաղիկներին ու ջրերին, գեփիւտին ու հովին»։ «Նրա ողբը քարերին ու սարերին էր լացացնում»

3) Կենդանիներու անունները որոշեալ առման պարագային ազատօրէն կը գործածուին ե՛ւ տրականաձեւ ե՛ւ ուղղականաձեւ, իսկ անորոշ առման պարագային՝ ուղղականաձեւ:

«Ադուէսին փնտոելու ժամանակ Անտոնը մի մոշահաւ էլ սպանեց» (Ա. Բակունց):

Ադուէսին – տրականաձեւ ուղիղ խնդիր, որոշեալ «ն» յօդով:

«Այդպէս, ես ու Բողարը պահպանեցինք ձկներին եւ ես հո- գով այնպէս կապուեցի իմ աճեցրած այդ արարածներին» (Վ. Անանեան, Լեռներ Հայրենի):

Ձկներին- տրականաձեւ ուղիղ խնդիր, որոշեալ «ն» յօդով:

⁶Ասատրյան Մ, Ժամանակակից հայոց լեզուի ձեւաբանութեան հարցեր, Ա. գիրք, Ե., 1970, էջ 211:

«Գալիս է զօրքը՝ աւարով բեռնուած ուղտեր ու ջորիներ քշելով» (Ս. Խանգադեան, Մխիթար Մպարապետ):

Ուղտեր- ուղղականաձեւ ուղիղ խնդիր, անորոշ:

Ջորիներ- ուղղականաձեւ ուղիղ խնդիր, անորոշ:

Հակառակ այս օրինաչափութիւններուն, սակայն, անպայման որ լեզուն իր մասնակի արտայայտութիւններն ունի, որոնք օրինաչափութեան չեն ենթարկուիր: «Ահա թէ ինչ վիճակի մէջ էմեր սեռի խնդրի հայցականը եւս: Դրա ձեւը, ուղղական թէ տրական, յաճախ կախուած է բայից, դարձուածքից, խօսքի շրջումից, խօսելու եղանակից, բարբառների ազդեցութիւնից եւ նոյնիսկ երբեմն սեռի խնդիր եղող բառից»⁷: Կը գրէ Ս. Աբեղեան հաստատուն եւ անխախտ օրինաչափութիւն մը չգտնելով այս հարցի լուծման ի խնդիր:

⁷Աբեղեան Ս, Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909, էջ 35:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ա. Մարգարյան, Ս. Տիոյան - Արդի հայերենի տերմինաբանության զարգացման միտումները.....	5
Ռ. Թոխմախյան -1. Արևմտահայերենի շեշտի առանձնահատկությունները, 2.Սիրիայի հայերենի հնչյունական համակարգը.....	13
Յ. Չոլաքեան -Ընթացակցական դերբայի խնդիրը արևմտահայերենի մեջ.....	21
Պ. Վարդապետյան -Արևմտահայերենի որոշ իրողություններ..	34
Լ. Նազարեան -Արեւմտահայերենի հարցեր՝ դիմատետրի էջերում.....	39
Ա. Ֆիշենկճեան -«Շարահիւսութիւն» թեման արևմտահայերենի դասագիրքերու մէջ.....	45
Ա.Քարտաշյան -Արևմտահայերենի հատուկ անունների գրության անմիօրինակության հարցեր.....	53
Ս. Տիոյան - Համաձանցումը արեւմտահայերենում.....	65
Հ. Մարաշյան -Արեւմտահայերենի նորաբանությունների իմաստաբանական քննություն.....	79
Տեր Մերկերյան Ռոբեր -Արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների հարցեր.....	89
Մ. Ֆելեքյան -Իմաստային նորաբանությունները գրական արևմտահայերենում.....	101
Ս. Միշոյեան -Գոյականի հայցական հոլովը եւ ներգործական բայերու խնդրառութիւնը արևմտահայերենի մէջ (Արեւելահայերենի հետ համեմատական փորձով մը).....	113

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
2013-2023

Ձևավորումը և էջադրումը՝
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի